

## ԵՐԱԺԾՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

N 2 (57) 2019

Հիմնադրվել է 1998 թվականին

Գիտական, տեսական, քննադատական-  
հրաժարակախոսական, երաժշտական ամսագիր

Երաշխավորված է՝ ԵՊԿ գիտական խորհրդի կողմից 1996 թ.

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

ՍՈՒԱ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (յամբավար, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ ուկտոր,  
ԵՊԿ գիտական խորհրդի նախագահ)

ԼԻԼԻԹ Վ. ԵՐԵՎԱՆԿՅԱՆ (արևելագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Փարիզի  
«Արարատ» միջազգային ակադեմիայի բորժակից ակադեմիկոս, ԵՊԿ կառավարության խորհրդի նախագահ)

ՇՈՎՔԻՆԱՐ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ (երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊԿ գիտական գծով պրոբեկտոր)

ՄԵՐԳԵՅ Գ. ՍԱՐԱԶՅԱՆ (դաշնակահար, պրոֆեսոր, Լեհաստանի արվեստի վաստակավոր գործիչ,  
«ԵՊԿ երատարակչական» խորհրդի նախագահ)

ՕԼՅԱՅ Յ. ՆՈՒՐԻՃԱՆՅԱՆ (երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊԿ գիտական քարտուղար)

ԱՐՄԵՆ Բ. ՍՄԵՐԱՅՅԱՆ (կոմպոզիտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ամսագրի հիմնադիր-տնօրեն)

ԳՈՀԱՅ Կ. ՇԱԳԻՆՅԱՆ (երաժշտագետ, Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի բորժակից ակադեմիկոս,  
հրատարակիչ, ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր)

ՄԱՐԳԱՐԻՏ Ա. ՋՈՒՆԿՅԱՆ (երաժշտագետ, թեմատուր, արվեստագիտության դոկտոր, ՀՀ վաստակավոր գործիչ)

ԻՐԻՆԱ Լ. ՉՈՒԾՈՎԱ (երաժշտագետ, դաշնակահար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր)

ՄՎԵՏԼԱՆԱ Կ. ԱՍՐԳԱՅՅԱՆ (երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի և

Լեհաստանի արվեստի վաստակավոր գործիչ)

ԱՆՆԱ Ս. ԱՐԵՎԵՆՅԱՏՅԱՆ (միջնադարաբներ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

ԺԱՆՆԱ Պ. ԶՈՒՐԱԲՅԱՆ (երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

ԿԱՐԻՆԵ Ա. ԶԱԳԱՅՅԱՆՅԱՆ (երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

ԱԼԻՆԵ Ա. ՓԱԼԵՎԱՆՅԱՆ (երաժշտագետ-ֆոլկլորագետ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ արվեստի  
վաստակավոր գործիչ)

ԴԱՎԻԴ Գ. ՂԱԶԱՐՅԱՆ (յամբավար, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ)

ԼԵՎՈՆ Ա. ՀԱՎԻՇՅԱՆ (կոմպոզիտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

ԱՐԹՈՒՐ Յ. ԱՎԱՐԵՆՅՈՎ (կոմպոզիտոր, դաշնակահար, արվեստագիտության թեկնածու, դոցենտ)

ԼՈՒՄԻՒՆԵ Զ. ՄԱՀԱԿՅԱՆ (երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի և

Ռուսական գործիչ)

Ո-ՈՒԶԱՆՆԱ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ (երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի և

Ռուսական գործիչ)

ՄՈՒՆԵՆԻ Խ. ԽՄԲԱԳՐԱՅԻՆ ԽՈՌՀՈՒՐԴ

ԿՈՆՍԱՆՏԻՆ ՎԼԱՅԻՒՄԻՐ ՀԵՆԿԻՆ (երաժշտագետ, դաշնակահար, խմբավար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,

Պ. Զայլովսկու անվ. ՄՊԿ գիտական աշխատանքի գծով պրոբեկտոր, **Մուկվա, Ռ-Դ**)

ԵԼԵՆԱ ԲՈՐԻՔԻ ԳՈԼԻՆՆՈՎԱՅՅԱՆ (երաժշտագետ, դաշնակահար, Ա. Շնիւսկի ինստիտուտի հիմնադիր,

արվեստագիտության դոկտոր, Պ. Զայլովսկու անվ. ՄՊԿ պրոֆեսոր, Ռ-Դ արվեստի վաստակավոր գործիչ, **Մուկվա, Ռ-Դ**)

ՀԱՅԿ ԱՐԵՎԻ ՌՈԹԻՒՃՅԱՆ (միջնադարաբներ, արվեստագիտության դոկտոր, դիրիժոր, խմբավար, **Պրահա, Չեխիա**)

ՎԱՀԵ ՊԱՐՍՈՒՄՅԱՆ (յամբավար, «Լարր» երաժշտական կենտրոնի հիմնադիր-տնօրեն, «Դրազար» հրատարակության  
հրատարակիչ Կայիփորնիա, **Լու-Անջելես, ԱՄՆ**)

ՀՐԱՏԱ ՀՈՎՀԱՅԱՆՆԵՐԻ ԽԱՅՔԻՆՅԱՆ (երգիչ, արվեստարաբն, լեզվաբամ՝ անգլ., ֆրան., ռուս. լեզուների, **Ժնև, Շվեյցարիա**)

ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՆ ԳԵԼԼԱԼՅԱՆ (կատարողական արվեստ, ջուրավանական, «Հայրիկ Սորբայան» ՀԿ-ի նախագահ)

Լիսարոն, Պորտոգալիա)

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԿԱՆՅԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ (միջնադարաբներ, երգիչ, խմբավար, դարավան, **Երուսաղեմ, Իսրայել**)

Գլխավոր խմբագիր-հիմնադիր,

Համարի թողարկման պատասխանատու՝ երաժշտագետ ԳՈՀԱՅ ԿԱՅՈՒՆԻ ՇԱԳՈՅԱՆ

Պատասխանատու քարտուղար՝ **ԱՆՈՒԾ ՄԵՍՐՈՊԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

Գիտական խորհրդատու՝ **ՎՎԵՏԼԱՆԱ ԿՈՐՅՈՒՆԻ ՍԱՐԳՅԱՆ**

Գիտական խմբագիր՝ **ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՅԻՐ ՄՈՎՍԻՄՅԱՆ**

Խորհրդ՝ **ՍՈՅՅԱ ՄԱԹԵՎՈՅԻ ԱԶԱՅՈՒԹՅԱՆ** (ռուս. տեքստերի),

Թարգմանիչ՝ **ՆԱՐԻՆԵ ԼԵՈՆԵԻ ՄԻ ՄԱԹԵՎՈՅԻ ՊԵՏՐՈՎՅԱՆ** (անգլ. տեքստերի)

Կազմի մոռակացումը և ձևավորումը՝ **ՄԱՐԻԱՄ ՎԼԱՅԻՒՄԻՐ ՊԵՏՐՈՎՅԱՆ**

Գեղարվեստական խմբագիր (մակեն, էջալրում, ձևավորում)՝ **ԳՈՀԱՅ ՎԻԼԵՆԻ ՀՈՎՀԱՅԱՆՆԵՐԻ**

Ամսագիրն ընդգրկված է՝ ՀՀ ԲՈԿ-ի «Առենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի ցուցակում»

Արտատպումը միայն «Երաժշտական Հայաստան» ամսագրի գրավոր արտոնությամբ:

Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ անսակետներին: Նյութերը չեն վերադարձվում:

Գիտական հոդվածները ենթակա են գրախոսման:

**Учредитель:**  
осуществляющий информационную деятельность  
“ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ ИМ.КОМИТАСА”  
государственная некоммерческая организация

Свидетельство №03U 059505,  
дата регистрации 07.04.2003

# МУЗЫКАЛЬНАЯ АРМЕНИЯ

N 2 (57) 2019

**Научно-теоретический,  
критико-публицистический журнал  
Основан в 1998 году**

Рекомендован к изданию Научным советом ЕГК с 1996 года

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ:**

**СОНА ОГАНЕСОВНА ОГАНЕСЯН** (хормейстер, профессор, Заслуженный деятель искусств РА, ректор ЕГК, председатель Ученого совета ЕГК)

**ЛИЛИТ ВАРДГЕСОВНА ЕРНДЖАКЯН** (востоковед, доктор искусств., Заслуженный деятель искусств РА, членкор-академик Парижской международн. академии “Арагат”, профессор, председатель Управления ЕГК)

**ЦОВИНАР ГРАЙРОВНА МОВСИСЯН** (музыковед, к-т искусств., доцент, проректор по науке ЕГК)

**СЕРГЕЙ ГЕОРГИЕВИЧ САРАДЖЯН** (пианист, профессор, Заслуженный деятель культуры Польши, председатель издательского совета ЕГК)

**ОЛИЯ ЮРЬЕВНА НУРИДЖАНИЯН** (музыковед, к-т искусств., доцент, ученый секретарь ЕГК)

**АРМЕН БАГРАТОВИЧ СМБАТЯН** (композитор, профессор, Заслуженный деятель искусств РА, посол РА в Израиле, директор-основатель журнала)

**ГОАР КАРЛЕНОВНА ШАГОЯН** (музыковед, членкор-академик Парижской международн. академии “Арагат”, главный редактор-основатель журнала)

**ЖАННА ПЕТРОВНА ЗУРАБЯН** (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)

**СВЕТЛАНА КОРЮНОВНА САРКИСЯН** (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель культуры РА, Заслуженный деятель Польской культуры)

**АННА СЕНОВНА АРЕВИШАТИЯН** (медиевист, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)

**ДАВИД ГАРСЕВАНОВИЧ КАЗАРЯН** (хормейстер, профессор, Заслуженный деятель культуры РА, председатель АМО)

**ЛЕВОН АЛЕКСАНДРОВИЧ ЧАУШЯН** (композитор, профессор, Заслуженный деятель искусств РА, председатель АМА)

**АРТУР ЮРЬЕВИЧ АВАНЕСОВ** (композитор, пианист, к-т искусств., доцент)

**КАРИНЕ АЗАТОВНА ДЖАГАЦПАНИЯН** (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)

**МАРГАРИТА АШТОТОВНА РУХКЯН** (музыковед, музыкальный критик, доктор искусств., Заслуженный деятель искусств РА)

**ИРИНА ЛЕОНИДОВНА ЗОЛОТОВА** (музыковед, пианистка, доктор искусств., профессор)

**АЛИНА АШТОТОВНА ПАХЛЕВАНИЯН** (фольклорист, музыковед, к-т искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)

**НУНЭ РОМЕОНОВНА АТАНАСЯН** (музыковед, к-т искусств., доцент)

**ЛУСИНЕ ЗАВЕНОВНА СЛАКЯН** (музыковед, к-т искусств., доцент)

**РУЗАННА ВАГАРШАКОВНА СТЕПАНИЯН** (музыковед, к-т искусств., доцент)

**МЕЖДУНАРОДНЫЙ РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ:**

**КОНСТАНТИН ВЛАДИМИРОВИЧ ЗЕНКИН** (музыковед, доктор искусств., профессор, пианист, проректор по научной работе МГК им. П. И. Чайковского, Москва, РФ)

**ЕЛЕНА БОРИСОВНА ДОЛИНСКАЯ** (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств России, основатель Института А. Шнитке, Москва, РФ)

**АЙК АРИСОВИЧ ҮТҮДЖЯН** (музыковед, медиевист, доктор искусств., дьякон, дирижер, Прага, Чехия)

**ВАЧЕ ПАРСУМЯН** (дирижер, издатель, директор-основатель музыкального Центра “Lark”, издательства “Дразарк”, Калифорния, Лос-Анджелес, США)

**ГРАНТ ОГАНЕСОВИЧ ХАЧИКЯН** (певец, искусствовед, филолог (англ., франц., русск. яз.) Женева, Швейцария)

**НАРИНЕ АРУТИОНОВНА ДЕЛЛАЛЯН** (скрипачка, артистка Национального симфонического оркестра Португалии, основатель скрипачка Трио Деллалян, председатель ОО “Айрек Мурабян”, Лиссабон, Португалия)

**АРТУР дьякон ВАРДАНЯН** (певец, хормейстер, регент, директор Духовной семинарии, Иерусалим, Израиль)

Главный редактор-основатель, музыковед, издатель,

Ответственный за выпуск номера: **ГОАР КАРЛЕНОВНА ШАГОЯН**

Ответственный секретарь: **АНАШ МЕСРОПОВНА КИРАКОСЯН**

Научный консультант: **СВЕТЛАНА КОРЮНОВНА САРКИСЯН**

Научный редактор: **ЦОВИНАР ГРАЙРОВНА МОВСИСЯН**

Редактор: **СОФА МАТЕОСОВНА АЗНАУРЯН** (рус.)

Переводчик: **НАРИНЕ ЛЕОНИДОВНА МИКАЕЛЯН** (англ.)

Автор идеи и дизайн обложки: **МАРИАМ ВЛАДИМИРОВНА ПЕТРОСЯН**

Художественный редактор (макет, верстка, дизайн): **ГОАР ВИЛЕНОВНА ОГАННИСЯН**

Журнал включен ВАКом РА в Список научных изданий для публикации результатов диссертаций.

Перепечатка материалов производится исключительно с согласия редакции журнала “Музыкальная Армения” в письменном виде. Редакция не всегда согласна с мнением авторов. Материалы не рецензируются и не возвращаются. Научные статьи рецензируются.

*Founder, information provider  
"YEREVAN STATE CONSERVATORY AFTER KOMITAS"  
State non-trade organization*

*Certificate # 03 A 059505,  
date of registration 07.04.2003*

## MUSICAL ARMENIA

N 2 (57) 2019

**Established in 1998**

*Scientific, critical and publicistic musical journal*

*Since 1996 publishing by the warranty of The Scientific Council of YSC*

### **EDITORIAL BOARD:**

**SONA H. HOVHANNISYAN** (Conductor, Professor, Rector of the YSC, Honored Worker of Art of RA, Chairman of the Scientific Council of the YSC)  
**LILIT V. YERNJAKYAN** (Oriental Studies, PhD Doctor, Professor, Honored Worker of Art RA, Corresponding Member Academic of the International Academy of Sciences "Ararat" of Paris, Chairman of the Management Board of the YSC)  
**TSOVINAR H. MOVSISYAN** (Musicologist, PhD Candidate, Docent, Vice Rector by Scientific Part)  
**SERGEY G. SARAJYAN** (Pianist, Professor, Honored Worker of Art of Poland, Chairman of the Publishing Council of YSC)  
**OLYA Y. NURIJANYAN** (Musicologist, PhD Candidate, Docent, Scientific Secretary of the YSC)  
**ARMEN B. SMBATYAN** (Composer, Professor, Honored Worker of Art of RA, Founder-director of journal)  
**GOHAR K. SHAGOYAN** (Musicologist, Corresponding Member Academic of International Academy of Sciences "Ararat" of Paris, Founder-editor-in-chief)  
**ZHANNA P. ZURABYAN** (Musicologist, PhD Doctor, Professor, Honored Worker of Art of RA)  
**SVETLANA K. SARKISYAN** (Musicologist, PhD Doctor, Professor, Honored Worker of Culture of RA and Polish Republic)  
**ANNA S. AREVSHATYAN** (Musicologist, Medievalist, PhD Doctor, Professor, Honored Worker of Art of RA)  
**DAVID G. GHAZARYAN** (Conductor, Professor, Honored Worker of Culture of RA)  
**LEVON A. CHAUSHYAN** (Composer, Professor, Honored Worker of Art of RA)  
**ARTHUR Y. AVANESOV** (Composer, Piano Performing Arts, Docent, PhD Candidate)  
**KARINE A. JAGHATSPANYAN** (Musicologist, PhD Doctor, Professor, Honored Worker of Art of RA)  
**MARGARITA A. RUKHKYAN** (Musicologist, music critic, PhD Doctor, Honored Worker of Art of RA)  
**IRINA L. ZOLOTOVA** (Musicologist, Pianist, PhD Doctor, Professor)  
**ALINA A. PALEVANYAN** (Musicologist-Folklorist, PhD Candidate, Professor, Honored Worker of Art of RA)  
**LUSINE Z. SAHAKYAN** (Musicologist, PhD Candidate, Docent)  
**RUZANNA V. STEPANYAN** (Musicologist, PhD Candidate, Docent)  
**NUNE R. ATANASYAN** (Musicologist, PhD Candidate, Docent)

### **INTERNATIONAL EDITORIAL COUNCIL**

**KONSTANTIN V. ZENKIN** (Musicologist, Pianist, PhD Doctor, Professor, Chormaster, Vice-Rector for Science in MSC after P. I. Tchaikovsky, Honored Art Worker of RF, Moscow, RF)  
**ELENA B. DOLINSKAYA** (Musicologist, Pianist, PhD Doctor, Professor, Honored Art Worker of RF, founder of A.Schnittke's Institute, Moscow, RF)  
**HAYK A. UTIDJIAN** (Conductor, Regent, Deacon, Medievalist, PhD Doctor, Praha, Czech Republic).  
**VACHE BARSUMYAN** (Conductor, Publisher, founder-in-chief of "Lark" Musical Center, "Drazark" Publishing House, California, Los Angeles, USA)  
**HRANT H. KHACHIKYAN** (Singer, Art critic, Philologist English, French, Russian of languages, Geneva, Switzerland)  
**NARINE H. DELLALYAN** (Violinist, Artist of the National Symphony Orchestra of Portugal, Founder and violinist of Dellalyan Trio, President of "Hayrik Muradyan" SO, Lisbon, Portugal)  
**ARTUR Deacon VARDANYAN** (Singer, Chormaster, Regent, Jerusalem, Israel)

*Founder-editor-in-chief, musicologist, publisher,  
Responsible of the published issue: GOHAR K. SHAGOYAN  
Responsible secretary: ANUSH M. KIRAKOSYAN*

*Scientific consultant: SVETLANA K. SARKISYAN  
Science editor: TSOVINAR H. MOVSISYAN  
Editor of texts: SOFA M. AZNAURYAN (russ.)  
Translator: NARINE L. MIKAELYAN (eng.)  
The concept and design of the cover: MARIAM V. PETROSYAN  
Artistic editor (modeling, layout, design): GOHAR V. HOVHANNISYAN*

**The publication is entered into the List of the issues accepted by the Supreme Certifying Commission of RA for publishing the results of theses. Re-printing is possible only on written permission by "Musical Armenia" journal. The publishing house does not always share opinions or points of view of authors. Materials are not returned from the publishing house. Scientific articles are reviewed.**

**ГЕОРГИЙ  
ШМАВОНОВИЧ  
ГЕОДАКЯН**

Комитас - фигура необычная. Он был крупным ученым и в то же время тонко чувствующим, несравненным художником-творцом. На первый взгляд, и задача, которую онставил перед собой, напоминала по характеру скорее задачу исследователя, чем художника. Как неутомимый археолог или, быть может, художник-реставратор, он кропотливо "счищал" накопившиеся веками чуждые наслоения, чтобы обнажить первозданную сущность национальной музыки.

Комитасу по праву принадлежит открытие огромной и ценнейшей области армянской народной музыки - крестьянского фольклора. До него знакомство с нею основывалось на случайных и далеко не самых характерных образцах. В многочисленных записях Комитаса крестьянская песня предстала со всей возможной полнотой и была сохранена от забвения и безвозвратной гибели.

Уже один этот факт был бы достаточен, чтобы обеспечить Комитасу самое почетное место в ряду крупнейших деятелей национальной культуры. Но Комитас сделал значительно больше. Его занятия фольклором и теоретическими вопросами не носили узкоакадемического характера. Они интересовали его прежде всего как художника, который стремился возродить забытые традиции армянского национального искусства прошлых веков. Возвращение на новом уровне, соответствующем современным представлениям профессиональной музыкальной культуры.

Комитасу удалось блестящее решить эту труднейшую творческую задачу. Он создал самобытный стиль, непосредственно связанный с характером крестьянской песни и армянской средневековой духовной музыки. Стиль Комитаса, его подход к народной и духовной музыке значительно отличался от принципов, сформировавшихся в европейском классическом искусстве XIX века, и был близок поискам передовых композиторов современности.

Творчество Комитаса как бы раскрыло необозримую ретроспективу национального искусства, повело к самим истокам его зарождения и в то же время оно было обращено в будущее, неразрывно связано с новой эпохой в развитии мирового художественного процесса. Именно этим и можно объяснить всеобъемлющий характер влияния искусства Комитаса на последующие поколения армянских творцов.

(см. С. 82)

# Կոմիտասյան օրեր՝ Ավարտապետի ծննդյան 150-ամյակին «Երեք արվեստի բուհերի շաբաթ» նախագծի շրջանակներում: Կազմակերպիչ գիտական գծով պրոռեկտոր, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ծովինար Դրայիր Մովսիսյան:

«Կոմիտասյան օրեր»՝ Ավարտապետի ծննդյան 150-ամյակին «Երեք արվեստի բուհերի շաբաթ» նախագծի շրջանակներում: Կազմակերպիչ գիտական գծով պրոռեկտոր, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ծովինար Դրայիր Մովսիսյան:

Նոյեմբերի 19-25-ը տեղի ունեցավ Կոմիտաս վարդապետի 150-ամյա հորելյանին Ավարտապետի հական կոմիտասյան օրերը՝ «Մեր Կոմիտասը» խորագրով:

Ներկայացվեցին Երևանի Գեղարվեստի ակադեմիայի սաների գրաֆիկական և գեղանկարչական աշխատանքները, ելույթներով հանդես եկան Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոմսերվատորիայի սաները, «Կոմիտաս» երգչախոմբը, խմբավար Դովիաննեն Միրզոյան և այլոք: Արվեստի Երեք բուհերի համատեղ այս ծրագիրն ապագա արվեստագետներին Կոմիտասի անվան և կերպարի շուրջը մեկտեղվելու, այն ոգեկոչելու և նրանով ոգեշնչվելու գեղեցիկ մի առիթ դարձավ... Նոյեմբերի 20-ին, միջրուհական կոմիտասյան օրերի շրջանակներում, Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ երաժշտության պատմության ամբիոնի վարիչ Լուսինն Սահակյանը հանդես եկավ դասախոսությամբ՝ «Կոմիտասի թատերական աշխարհը» թեմայով: Նույն օրը ԵՊԿ օպերային ստուդիայում տեղի ունեցավ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Եթեկու դոցենտ Յուրի Կոստան-յանի «Քեմական շարժում, պլաստիկա» թեմայով վարպետության դասը:

Նոյեմբերի 21-ին, Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, տեղի ունեցավ արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ հայ երաժշտական ֆոկուրագիտության ամբիոնի վարիչ Նույն Արանասյանի դասախոսությունը՝ «Կոմիտասը և իր ժամանակը» թեմայով և շնորհանդես՝ Թնարիկ Արրահամյանի ներկայացմանբ:

Նոյեմբերի 25-ին շաբաթն ամփոփվեց գիտաժողովով, որի գեկուցումները հրատարակում ենք «Երաժշտական Հայաստան» ամսագրի սույն համարում:

**Խմբագրական**



Կոմիտասյան օրեր 19.- 25.11.2019 թ. Ավարտապետի ծննդյան 150-ամյա հորելյանին

Միջրուհական գիտաժողովի մասնակիցներ և հյուրեր

<...>, Անուշ Կիրակոսյան, Լուսինն Սահակյան, Նույն Արանասյան, Նվարդ Եղոյան, Դանիել Երաժիշտ, Ալինա Փակելանյան, Նինա Դայրասպետյան, Ռիտա Աղայան, Դասմիկ Դարությունյան, Լիլիթ Դարությունյան, Ծովինար Մովսիսյան (գիտաժողովի կազմակերպիչ և նիստի նախագահ), Լիլիթ Երճակյան, Անահիտ Բաղդասարյան, Թնարիկ Արրահամյան, Գոհար Շագոյան, Մուշեղ Դարությունյան

## **ՄԱՐԳԱՐԻՏ ՄԱՄԻԿՈՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

**Բանահրական գիտությունների դոկտոր,  
Հայ-ռուսական համալսարանի պրոֆեսոր  
E-mail. margarit2011@gmail.com**

**U** ողոմնը ծնողներից՝ Թագուհի Հովհաննեսյանից, Գևորգ Սողոմոնյանից, և հորեղբորից՝ Հարությունից, ժառանգու-

թյուն էր ստացել աստվածատուր ձայն, իսկ մանկուց կրած զրկանքներն ու տառապանքը դարձան այն ճանապարհը, որով թրքախոս մասուկն անցավ անտրուպունց ու մեր մշակույթի պատմության մեջ մնաց Կոմի-

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորիրի երաշխավորությամբ, Ալինա Աշոտի Փակելանյան՝ 14.2.2020 թ., ընթերցվել է գիտաժողովում և ընդունվել տպագրության 25.11.2019 թ., ներկայացրել է հեղինակը՝ 20.12.2019 թ.:

## **ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ-ԿՈՄԻՏԱՍ. ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

տաս թամբ անունով:

Խրիմյան Հայրիկի (1820-1907 թթ.) կարգադրությամբ ու Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանի (1833-1911 թթ.) ձեռամբ 1895-ի փետրվարի 26-ին կուսակրոն քահանա ձեռնադրված Սողոմոն սարկավազը հավատարմության երդում տվեց ինչպես Աստծուն, այնպես էլ հայ երգին, հայ ժողովրդին ու միշտ հավատարիմ մնաց իր ոխտին՝ չգայրակղվելով և վրասկական բեմերով, գերադասելով ազգային արժեքներին աննացորդ ծառայելով:

Այս ծառայության ոգին Կոմիտասին միավորում է մեր մշակույթի մեջերի հետ՝ Մաշտոցից մինչև Հովհաննես Թումանյանի:

Ստեղծագործական դաշտում Կոմիտասին ու Հովհաննես Թումանյանին միավորում էր Արարտան աստվածային ոգին:

Խոստովանելով Կոմիտասի գողտրիկ բանաստեղծությունները վերընթերցելուց հետո թերթեցի Հովհաննես Թումանյանի երկերի ակադեմիական հրատարակության առաջին հատորը, ստվորության ուժով (ասում եմ՝ ստվորությունը տարիների ընթացքում դառնում է բնավորություն) էջամշաններ դրեցի ամ բաճատեղծությունների էջերում, որոնցում տեսա ՀՀ դարավագրի հոգսերով ապրող այս հայ մարդկանց կենդանի, ապրող ոգին:

Դրանք շատ-շատ են...

Հովհաննես Թումանյան-Կոմիտաս ստեղծագործական առնչություններն սկսվում են «Սորմն էր երկինքը» ոտմանով, հանրածանոթ «Կարավի երգը»-ով (ձայնագրել է Կոմիտասը, գրական մշակման է ենթարկել Հովհաննես Թումանյանը) ու հասնում մինչև «Անուշ» օպերա, որն անգամ անավարտ վիճակում ունի ոչ միայն պատմական նշանակություն: Ապացույց՝ Արզակ Ուկանյանի վերջերս կատարած սրանելի գործը՝ Կոմիտասի «Անուշ»-ի ներկայացումը համերգային տարբերակով:

Հովհաննես Թումանյան-Կոմիտաս առնչությունների քննությունն ինձ համար ավելի քան հաճելի գրադարձ էր. կրկին վերապեցի ասավիրանտական տարիներից ծանոթ այն բացատրիկ ուրախությունը, երբ նոր փաստ, հոդված, նամակ գտնելուն պես շտապում ես ծնողներիդ, գործընկերներիդ պատմել գտածիդ մասին: Հայ-Ռուսական համայնարամի հայոց լեզվի ամրինի գործընկերներիս ու ինձ համար հաճելի նորություն ու շահենկան գրույցի թեմա դարձավ այն փաստը, որ 1911 թ. Փարիզից Կ. Պոլիս վերադաշնալիս Կոմիտասն Ալեքսանդրիայում մեկ ամիս հյուրընկալվել է իր երգչախմբի անդամ, երգիչ ու դաշնակահար Միքայել Խաչատության՝ աշխարհահռչակ երգուիդ Գոհար Գասպարյանի (1924-2007 թթ.) հայրական տանը: Երգչու-

ին սիրով ու գուրգուրանքով էր պահում Կոմիտասի՝ ինքնազրով իր հորը նվիրած «Ձեռաց տեսրակ հայ սրբազն և գեղջուկ համերգի» (խմբագրեց՝ համառօտ ներածութեամբ Կոմիտաս վարդապետ), (Աղեքսանդրիա, 1911 թ.) գրքովլիք\*:

Թումանյանագիտության ու կոմիտասագիտության ստվար հատորներում հուշերի, նամակների, գիտական ուսումնասիրությունների, հոդվածների ժողովածուների էջերում, պակաս հետաքրքիր չէր այս մեծերի հանդիպումների վկայություններ փնտրելու:

Հաջողվեց գտնել մի քանի հետաքրքիր փաստ:

Ամեն ինչ սկսվեց Հովհաննես Թումանյանի «Բանաստեղծություններ» (Սոսկա, 1890 թ.) գրքով, որով Կոմիտասը հիացած էր: Ազգագրագետ Ստեփան Լիսիցյանը (1865-1947 թթ.) իշշում է. «Ամհայտությունից լույս աշխարհ էր հայտնվել մի իսկական բանաստեղծ և մեկ անգամից կանգնել էր մեր աչքերի առջև իր ամրող հասակով, և հիացած նայում էինք նրա տաղանդի մեծությանը» ու վկայում. «Եվ քանի անգամ դասամիջոցին առաջին լսարանի ուսանող Սողոմոն սարկավազը (ապագա Կոմիտաս վարդապետը) ականջիս տակ շնջաց.

– Լավ է, չէ, լավ է, չէ...» (1. էջ 348)\*\*:

Պահպանվել են Կոմիտասի չորս նամակները (2. էջ 66-70) գրված Թումանյանին (Սր. Էջմիածնում):

1908-ի մայիսի 24-ին Կոմիտասը Թումանյանին

\* Գրքովի օրինակը պահպան է Հայաստանի Ազգային գրադարանում: Առաջարանում Կոմիտաս վարդապետը գրում է. «Գեղջուկը բնուրեան հարազատ զառակն է, ուստի ճաշակել է բնուրինը բովանդակ հոգուվ ու սրտով: Իր երգությունը մէջ բնուրինը կը խօսի, որովհետև բնուրինն է նախ իր մէջ խօսած: Իր սրտի[ն] մէջ բնուրեան ծովը կը յուզուի, վասն զի ինքն իսկ բնուրեան ալիբներությունը վրայ կը դեգերէ: Իր երգերն իր կեանքն են, զի իր ամրող կեանքը իր երգերությունը մէջն է մերշնչած: Վերջապէս, գեղջուկ երգերը տեսակ-տեսակ աստն հայելիներ են, որոնք զատ-զատ, իրենց ծնունդ առած վայրերն ողբերը, կիման, բնուրինը և կեանքը կ'անդրադարձնեն» (1. էջ 272):

Գրքովի վերջին՝ 39-40-րդ էջերում տպագրված է համերգի «Յայտագիր»ը:

1911-ի ապրիլի 7-8-ին Կոմիտասը Կ. Պոլսից մեկնել է Եգիպտոս՝ Աղեքսանդրիա, որտեղ մայիսի 23-ին 190 հոգիանց երգչախմբով համերգ է տվել, իսկ հունիսի 23-ին երգչախմբը երկություն է ունեցել Կահիրենում:

\*\* Բարեբախտ ատիթյուն 2009-ի մարտի 24-ին, իր վախճանից ամիսներ առաջ, բումանյանագետ Լոսիկ Կարապետյանը (1921-2009 թթ.) ինձ նվիրեց իր կազմած և 1969 թ. հրատարակած «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» հատորը: Գիրքը երկրորդ անգամ հրատարակվել է 2009 թ: Նարարանքում փակագծերում նշվում են այս գրքից մեջբերումների էջերը:

## Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

գրում է, որ ծրագրել է ամառվա արձակուրդին զրադշախ «Անուշ»-ով, դժգոհում է, որ Թիֆլիսում չեն հանդիպել:

Կոմիտասի հաջորդ նամակից (1908-ի հունիսի 8-ը) պարզվում է, որ Թումանյանը չի կարողացել Էջմիածնին գնալ. նա ջերմախտով էր հիվանդացել և խոսափել Սր. Էջմիածնին մեկնելուց: Ծրագրել էին հանդիպել Դիլիջանում... բայց չհանդիպեցին, ինչպես պարզվում է Կոմիտասի երրորդ նամակից (1908-ի հունիսի 2-ը): Հովհաննես Թումանյանը ծրագրել էր 1913 թ. աշնանը Թիֆլիսում կազմակերպել զրական-երաժշտական մեծ երեկոյթ: Նա Կոմիտասին հրավիրել էր գելուցումով համդես զալ, բայց վարդապետը ստիպված էր հրաժարվել: Կոմիտասի չորրորդ նամակը (1913-ի հունիսի 19-ը) յուրատեսակ հրաժեշտ էր. «Հակառակ բոլոր փափազին, չը կարողացայ քեզ տեսնել Տփիխում... Իսկ սեպտեմբերից պիտի գտնուիմ անպատճառ Պոլիս, որ արդին հաստատուել եմ և գործ եմ սկսել»:

Կոմիտասի և Թումանյանի ստեղծագործական առնվազությունների մասին նոյն են պարունակում իշխանութիւնի Մարիամ Թումանյանի (1870-1945 թթ.) նամակներն ու «Իմ հիշողությունները Հովհաննես Թումանյանի մասին» հուշերը\*:

«Ես չեմ հիշում, թե որտեղ և երբ ծանրացա Կոմիտասի հետ, բայց վաղուց զիտեի նրան որպես երաժբարի: Իմ մեջ միտք հղացավ առաջարկել Կոմիտասին Թումանյանի «Անուշ»-ը օպերա դարձնել», – գրում է իշխանութիւնի Մարիամ Թումանյանը:

Իշխանութիւնի Կոմիտաս վարդապետին է ուղարկել Թումանյանի՝ 1903-ին Թիֆլիսում հրատարակած ժողովածուն:

1904-թ. հունվարի 22-ին Կոմիտասը գրել է Մարիամ Թումանյանին.

«Ծնորհափայլ իշխանութիւն,

Ուրախությամբ կարդացի պ. Հովհաննես Թումանյանի «Անուշ»-ը և շատ անուշ գտա, պատրաստ եմ Ձեր փափազն իրագործելու» (2. էջ 479):

Կոմիտասն առաջարկում է պոեմը «հարմարեցնել», «որոշ հասլաներ կարեն, լրացնել, նորից գրել, «որպան կարելի է խույս տա թուրքերն բառերից՝ երգի ողին պահելու համար: Ամրողարտյան կապն իրեն երաժշտական երկ թերի է, կիսնդրեն լրացնեն...», «Գրքամքը շուտ պատրաստե, որ ես էլ ուսումնասիրել կարողանամ ու երաժշտության ծրագիր մշակեմ: Չեմ կարող որոշ ասել, թե ե՞րբ պատրաստ կլինի, որովհետև ես մենակ եմ, և բոլոր գործերն ինձ վրա են ծանրացած», – գրում է Կոմիտասը (2. էջ 480):

Մարիամ Թումանյանը կատարել է Կոմիտասի համձանարդարությունը. «Թումանյանը դեռևս ծանրոր չէր Կոմիտասի հետ. հետագայում նրանք շատ մտերմացան:

Արդյոք Թումանյանը օպերայի համար փոփխության ենթարկեց իր «Անուշ»-ը, այդ ինձ հայտնի չէ, մի-

\* Լույս են տեսել «Հովհաննես Թումանյանը Ժամանակակիցների հուշերում» հաստորում:

2003 թ. Երևանում լույս տեսավ «Մարիամ Թումանյան. Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները» գիրքը:

այն այսքանը զիտեմ, որ Կոմիտասը բավական բան ծայնագրել էր և մի քանի կտոր էլ ինձ մոտ նվազել է, որ սրանչելի գտա» (2. էջ 480):

Մարիամ Թումանյանին հասցեագրած մեկ որիշ նամակում (1909-ի փետրվարի 14-ը) Կոմիտասը դժգոհել է, որ Թումանյանին բանտարկելու պատճառով «Անուշ» օպերայի աշխատանքը կիսատ է մնացել (2. էջ 481): «Այս նամակից երևում է, որ նրանք միասին աշխատել են», – գրում է Մարիամ Թումանյանը (2. էջ 481):

1904 թ. մայիսի սկզբին Թումանյանն Էջմիածնում էր: «Թումանյանի սիրած մարդկանցից մեկը կաթողիկոսն էր՝ Խրիմյան Հայրիկը.\* նա նոյնպես շատ էր սիրում բանաստեղծին ու հաճախ կանչելով իր մոտ՝ ժամերով զրուցում էր», – պատմում է Մարիամ Թումանյանը (2. էջ 482):

Արձանագրված է, որ նրանք հանդիպել են 1904-ի մայիսի 5-ին Սր. Էջմիածնում. բանաստեղծին իր լուսանկարն է նվիրել Կոմիտասին՝ «Կոմիտաս հայր սուրբին: Իր բարեկամը՝ Յովհաննես Թումանյան» մակագրությամբ:

1905-ի գարնանը Կոմիտասը Թիֆլիսում էր:

1905-ի մարտի 30-ին Կոմիտասը Վահան Տեր-Առաքելյանի (1888-1941 թթ.) հետ հյուրընկապվել է Թումանյանի տանը: Տեր-Առաքելյանը հիշում է, որ այնուղի հետաքրքիր զրուց է ծավալվել հայ մշակույթի, հայ ժողովրդական երգերի մասին, Կոմիտասը երգել է ու ի պատասխան իր ունկնդիրների, հատկապես՝ տանտիրոց «Տն. Էղ ի հայ զարմանահրաշ մարդ ես որու» հիացմունքին՝ ասել. «Զարմանահրաշը ես չեմ, այլ մեր զեղուկն է, մեր ժողովրդական երգն է, որովհետև վաս բանը չի կարող լավ դառնալ, ինչքան էլ աշխատի Կոմիտասը: Ով ուզում է ստեղծել հայ կուլտուրական երաժշտություն, նա պիտի հիմք ընդունի ժողովրդական երգը, նա պիտի դեկավարվի այդ երգի ոճական սկզբունքներով, այլապես նրա ստեղծած երաժշտությունը չի լինի հայկական ժողովրդական երաժշտություն» (2. էջ 574):

Կոմիտասի դեկավարած 60 հոգուց կազմված քառաձայն երգչախումբը 1905-ի ապրիլի 1-ին և 3-ին համերգ է տվել Թիֆլիսում, իսկ ինքն ապրիլի 6-ին և 7-ին դասախոսություն է կարդացել «Հայ ժողովրդական և եկեղեցական երգերը» թեմայով: Հովհաննես Թումանյանը չէր կարող ներկա չլինել մշակեմ: Չեմ կարող որոշ ասել, թե ե՞րբ պատրաստ կլինի, որովհետև ես մենակ եմ, և բոլոր գործերն ինձ վրա են ծանրացած», – գրում է Կոմիտասը (2. էջ 574):

1905-ի նոյեմբեր-դեկտեմբերին Կոմիտասը Թիֆլիսում էր բուժման նպատակով, բայց Թումանյանը զրադշախ էր հայ-քարարարական ընդհարումներին:

1907-ի հոկտեմբերի 31-ին Թիֆլիսում Խրիմյան Հայրիկի հոգեհանգստյան արարողություն է կազմակերպվել, որտեղ ելույց է ունեցել Հովհաննես Թումանյանը:

Քանաստեղծը հեղինակել է նաև «Խրիմեան Հայրիկի օրերից մէկը» գողտրիկ պատումը:

#6 **Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(57)2019**

## Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

թեցմելու խմբով\*:

1907-ի մայիսի 6-ին Լեռն Շանթը (1869-1951 թթ.) Մարիամ Թումանյանին հասցեազրած նամակում հումորով ու ցավով գրել է մեծ բանաստեղծի՝ ազգամշջյան կոտորածները կաճիսարգելու ջանքերի մասին. «Նրա էլ ամբողջ ուժը կրչում է ծրաբ-պրտի բաների վրա, ինքն էլ շատ լավ գիտե ու տաճշվում է շարունակ, բայց կախարդական շրջանակի պես ընկեր է մի անգամ մնար ու էլ դուրս գալ չի կարողանում, – դժգոհում է L. Շանթը, – նա էլ սաստիկ ծարավ է գրական աշխատանքի ու ստեղծագործության: Ինչ որ տրտունջի առիթ չի տալիս, դա նրա որդիների հարստությունն է. Վաղը-մյուս օրը սպասում է իր տասներորդ ցավակին»\*\* (2. էջ 470):

Արմենակ Թումանյանը, ով 1905-ի մայիսին բանաստեղծին ուղեցել է թուրքական գյուղերում շրջելիս, պատմում է, որ նրա «ջանքերն ապարդյուն չանցան», և 1906-ին Լոռու և Տորչալուի հայերի ու թուրքերի միջև ոչ մի անախորժություն չի եղել, ավելին, վերացել է նաև «սովորական դարձած գողությունը, որ երեսն ավարտվում էր մարդասպանությամբ» (2. էջ 580):

Ազատ Մանուկյանը վկայում է, որ 1905-ին Ստեփան Լիսիցյանի հրատարակած «Հասկեր»\*\*\* մանկական ամսագրին աշխատակցում էին բազմաթիվ մուազորականներ (այդ թվում նաև Կոմիտասը), որոնց միջև «կապ ստեղծող Հովհաննես Թումանյանն էր» (էջ 509):

1907-ի նոյեմբերի 6-ին Սր. Էջմիածնում հուղարկավորում էին Խրիմյան Հայրիկին (վախճանվել է հոկտեմբերի 29-ին): Ի հիշատակ Խրիմյան Հայրիկի Կոմիտասը Գևորգյան հոգևոր ճեմարանում համերգ է տվել:

Ենթադրում եմ՝ այդ օրերին բանաստեղծն ու երգահանը կարող էին հանդիպել:

Կոմիտաս վարդապետը 1908-ի փետրվարի 8-ից մինչև 15-16-ը կրկին թիֆլիսում էր:

1908-ի դեկտեմբերի 5-ին Թիֆլիսում Արշակ Զոպանյանը (1872-1954 թթ.) դասախոսել է «Հայկական բանաստեղծությունն անցյալում» թեմայով: Կոմիտասը հավանաբար ներկա է եղել, իսկ Թումանյանը՝ հաստատապես: Հաջորդ օրը տեղի է ունեցել Կովկասի հայոց բարեգործական ընկերության երեկոյթը, որին ներկա է եղել Կովկասի փոխարքա կուն Իլլարիոն Իվանովի Վորոնցով-Դաշկովը (1837-1916 թթ.) տիկնո՞ց՝ Ելիզավետայի հետ: Երկան երգախմբից հետո երոյթ է ունեցել Կոմիտասը:

Դեկտեմբերի 7-ին Ա. Զոպանյանն ու Կոմիտասը մասնակցել են «Գեղարուեստ»-ի խմբագրատանը տեղի ունեցած խորհրդակցությանը: Հանդեսի խմբա-

\* 1905-1906 թվականներին ցարական Ռուսաստանի Ելիզավետպոլի, Թիֆլիսի ու Երևանի նահանգների բնակավայրերում հայերի և կովկասյան թարարների միջև տեղի ունեցած ազգամշջյան ընդհարումներ:

\*\* Հովհաննես և Օլգա Թումանյանները (Մանանյան, 1871-1971 թթ.) ունեցել են տար ցավակ: Թամար Թումանյանը (1907-1989 թթ.) ծնվել է մայիսի 10-ին:

\*\*\* Ստեփան և Կատարինե Լիսիցյանները 1905-1917 թթ. և 1922 թթ. հրատարակել են «Հասկեր» հանդեսը:

գիր-հրատարակիչ Գարեգին Լևոնյանը\* (1872-1947 թթ.) պատմում է, որ պարբերականի առաջին համարում տպագրելու համար նյութեր է ստոցել նաև Կոմիտաս վարդապետից (2. էջ 440):

Պատմական փաստ է այս մեծերի հանդիպումը՝ 1908-ի վերջերին նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի (1857-1925 թթ.) արվեստանոցում: Պահպանվել է հանդիպման մասնակիցների հայտնի լուսանկարը: Մեր մշակույթի յոթ մեծերն են լուսանկարված՝ Կոմիտաս, Հովհաննես Թումանյան, Ղազարոս Աղայան (1840-1911 թթ.), Արշակ Զոպանյան, Ավետիք Իսահակյան (1875-1957 թթ.), Գևորգ Բաշինջաղյան, Վրթանես Փափազյան (1866-1920 թթ.): Այս պատմական լուսանկարի մասին Արշակ Զոպանյանը պատմում է «Բաշինջաղյանի աշխատանոցին խմբանկարը» հորվածում (4. էջ 142-144): «Կոմիտաս Թիֆլիս եկած էր երկու յոյսով, – գրում է Ա. Զոպանյանը. – Մինչ մղել Թումանեանը, որ օր առաջ գրել իր «Անուշ» քերթուածէն հանուելիք լիպրեթօն, որպազի անոր վրայ ինք ալ շարադրէր ամրողական երաժշտութիւնը իր ծրագրած օվիերային, որուն քանի մը մեներգեներու եղանակները միայն գրած էր: Միս յոյսը թիֆլիսաբնակ մէկ քանի ազդեցիկ անձնաւորութեանց աջակցութեամբ հայ երաժշտութեան լաւ կազմակերպուած համերգ մը տալն էր: Թումանեան խոստացեր էր իրեն, բայց մինչև այդ ատեն ոչ մէկ տող էր շարադրեր: Այդ անգամուն անիկա իմ ներկայութեանը կատակներով կրկնեց իր խոստումը, բայց զգացի, որ տրամադիր չէր այդ աշխատանքը կատարելու և Կոմիտասին, զրու շատ կը սիրել, սիրոր չկոտրելու համար էր, որ բացէ ի բաց մերժողական պատասխան մը չէր տար»:

Կոմիտասի հոյսերը, դժբախտարար, ի դերև ելան:

Ա. Զոպանյանը պատմում է, որ Թումանյանը դժգոհում էր, թէ «իր քերթուածէն օվիերայի յարմարող թատրոնահան մը հանելը իր գործը չէր, և թէ այդ աշխատանքը ուրիշ մը կատարելու էր»:

«Կոմիտասին կրկնեցի Թումանեանին ըսածը, բայց ան (Կոմիտասը. – Մ. Խ. Խորեն) յամառեցաւ յուսալ, թէ Թումանեան վերջ ի վերջոյ պիտի ինքն իսկ շարադրէր իր ուզած լիպրեթօն», – հիշում է Արշակ Զոպանյանը և հավելում, որ Արմեն Տիգրանյանը (1879-1950 թթ.) «գտաւ Թումանեանի քերթուածէն լիպրեթօն մը հանող մէկը» (4. էջ 142-144)\*\*:

Կոմիտասի ծրագրած և չկայացած համերգի մասին

\* Գարեգին Լևոնյանը 1908-1922 թթ. հրատարակել է «Գեղարուեստ» գրական-գեղարվեստական, երաժշտական հանդեսի 7 գիրք:

Լևոնյանը պատմում է (3. էջ 152), որ Կոմիտասի հետ ծրագրել էին հանդեսը հրատարակել Սր. Էջմիածնում, բայց ինչ-ինչ պատճառներով չկարողացան իրագործել իրենց ծրագիրը:

\*\* Արմեն Տիգրանյանը 1908-ին սկսել և 1912-ին ավարտել է «Անուշ» օպերան՝ ըստ Հովհաննես Թումանյանի նոյնանուն պիտի: 1908-ին օպերայից հատվածներ են թեմադրվել Թիֆլիսում: 1912-ին օպերան թեմադրվել է Ալեքսանդրապոլում, 1935-ին՝ Երևանում:

Պահպանվել են Հովհաննես Թումանյանի նամակները Արմեն և Արմենուի (1888-1962 թթ.) Տիգրանյաններին:

## Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակին

Չոպանյանը պատմում է «Կոմիտաս վարդապետ և հայ երաժշտութիւնը» (5. էջ 103-127) հոդվածում\*: Նա Կոմիտասին անվանում է «Անհուն զօրութիւն մը մեր Մշակոյթին համար, օրինութիւն մը մեր ազգին համար», և հիշտակում է նրա անմոռաց համերգ-դասախոսությունները Բեղյանում (1899-ի մայիսի 5-ին և հունիսի 14-ին) և համերգը Փարիզում (1906-ի դեկտեմբերի 1-ին):

Ա. Չոպանյանը դժգոհում է, որ թիֆլիսարքանակ «ցողեր»-ը ոչ միայն չընդառաջեցին մեծ երգահանի խրնորանքին, այլև իրենց անտարբերությամբ վիրավորեցին նրա զգայուն հոգին՝ իրենց վերապահելով համերգի տոմսերը տարածելու գործը միայն:

Կոմիտասը Թիֆլիսում էր նաև 1909-ի գարնանը, երբ դեկավարում էր Ներսիսյան դպրոցի երգչախումբը: 1908-ի դեկտեմբերի 24-ին Հ. Թումանյանին քանտարկել էին այսպես կոչված «Դաշնակցության գործով»: Նա բանտից դուրս եկավ 1909-ի հունիսի 13-ին, երբ Կոմիտասը մեկնել էր: Ներսիսյան դպրոցի սաներից կազմված երգչախումբը Կոմիտաս վարդապետի դեկավարությամբ 1909-ի մարտի 3-ին մասնակցել է տարրեր դաշնաներին պատկանող երգչախումբի համերգին, որին ներկա է եղել Կովկասի փոխարքան:

Կոմիտասի հերթական այցը Թիֆլիս էր՝ 1909-ի հոկտեմբերի վերջերին. հոկտեմբերի 26-ին Ալեքսանդր Մանրաշյանցի (1842-1911 թթ.) կնոջ հուղարկավորության ժամանակ եղույթ են ունեցել Ներսիսյան դպրոցի երգչախումբը և Կոմիտաս վարդապետը: Նոյն թվականի հոկտեմբերի 30-ին նա գրել է Ա. Չոպանյանին, որ նախորդ օրն է վերադարձել Թիֆլիսից:

1910-ին Կոմիտասը գնաց Կ. Պոլիս, համերգ տալու պատրվակով Թիֆլիս եկավ 1913-ի հունիսին և Կ. Պոլիս վերադարձավ օգոստոսի 21-22-ին: Ազատ Մանուկյանի (1878-1958 թթ.) տանն այս մեծերը կրկին հանդիպեցին: Թումանյանին ուղեկցել են Անուշ (1898-1927 թթ.) և Սեղա (1905-1988 թթ.) դուստրերը, որոնք Ազատ Մանուկյանի սաներն էին: «Անուշը, որ ավելի երաժշտական էր, քան մյուսները, Կոմիտասի թախանձանը երգեց Գայանյան դպրոցում սովորած Հովհաննեսի «Ամուշը», որ նոր էի ճայնագրել», – պատմում է Ազատ Մանուկյանը (2. էջ 512):

1918-ի հունիսին Օշականում նշվեց Սրբոց Թարգմանչաց սոներ, որին մասնակցում էր նաև Թումանյանը: Այդ օրերին, Սրբ Էջմիածնում Կոմիտաս վարդապետի հյուրերն էին՝ Հովհաննես Թումանյանը, աշուղ Զիվանին (1846-1909 թթ.), Վրքաննես Փափազյանն ու նկարիչ Եղիշե Թաղևոսյանը (1870-1936 թթ.): Զիվանոց հետո Սեծ լոռեցին երգել է «Այս, ինչ լավ են սարի վրա» երգն ու ստացել ընկերների կրկնակի շնորհակությունը՝ որպես բառերի ու երաժշտության հեղինակ:

Սա այս երկու մեծերի՝ Կոմիտասի ու Թումանյանի հման հայտնի վերջին հանդիպումն էր:

1912-ի դեկտեմբերի 25-ին Կոմիտասը գրել է Արշակ

Չոպանյանին. «Պէտք է նախ բոլոր հայերը խմբուին մէկ տէրութեան, մէկ օրենքի տակ, աճին ու զարգանան բարոյապէս և նիւթապէս, և ժամանակն ինքն է, որ պիտի բերէ մեզ մեր ազատութիւնը. շտապելով՝ առաջինը չառած, երկրորդ քայլին դիմելով՝ բոլորովին պիտի կորչինք. տաճակին ոչ մի յոյս մի ունենար, մի սպասէք. նրա ուղեղը քարէ ժարդից է, զարգացման անընդունակ, լոկ փշրելու համար պիտանի և ուղի տակը՝ սպայատակներուն յարմար» (2. էջ 187):

Հեռու չերև և 1915-ի ապրիլը...

«Թողող ողջ մնա իմ ժողովորդը... Ես նրա սրտում երբեք չեմ մրսի», – շշնջում էր աքտորից վերադարձած, բայց կատարված մեծ ոժիքի ամրող ծանրությունը հոգում պահած Կոմիտասը:

Նրա համար պակաս ցավու չէր իր կորած ձեռագրերի հարցը...

Հովհաննես Թումանյանի կյանքում իրար հաջորդեցին բանտարկությունները, Արտավազդ որդու (1894-1918 թթ.) մահը, հայոց գոյամարտը. այս ամենը քայրացին նրա առողջությունը, խեցին արարման համար նախատեսված ժամանակը (և ոչ միայն ժամանակը...): 1918-ին գրած «Զինվորագրվել են» հոդվածում նաև դժգոհում էր. «30 տարի է, որ որոնում եմ իմ տեսը, դեռ չեմ գտել, և 30 տարի է, ես միայն պատրաստվում եմ իմ գործով՝ գրականությունով զբաղվելու և դեռ չեմ սկսել...»: «Դերենիկ Դեմիրճյանի (1877-1956 թթ.) «Հովհաննես Թումանյանի մասին» հուշերում կարդում ենք. «Թումանյանը երազում էր գրականության նվիրվել, որքան էլ սա տարօրինակ լինի ասելը: Նա թիշ գրեց, և գրեց ի միջիալլոց կարծես: Նրան խանճարում էր բազմազբաղ կյանքը և նյութականի կազմակերպումը, որ չէր կարելի առանց այդ բազմազբաղության» (3. էջ 45):

Արածով չբավարարվելու սրբազն դժգոհությունը, ընտրած բնազավառում նորանոր բարձունքների ձգտելու աստվածային շնորհը տրվում են իսկապէս մեծերին...

«Ես հավատում եմ, որ գուցե մոտ ապագային հայ ժողովուրդը կարողանա կերտել մի նոր Ուսկեղար: Նոր մի Ուսկեղար՝ նաև հոգեսոր, նշակութային իմաստով: Մեր ժողովուրդն այդ ընդունակությունն ունի, այդ հանճարն ունի, և ահավասիկ, ես նախատեսում եմ այդ արշալուսը, զարթոնքը այդ նոր Ուսկեղարի՝ իրքն պատասխան հինգերորդ դարի, մեր օրերի մի նոր հուշարձան», – հավատում էր երջանկահիշատակ Վազգեն Ակարողիկոսը (1908-1994 թթ.):

Վեհափառ խոսքերն ինձ համար յորահասուկ բովանդակություն են ստանում, երբ ամեն կիրակի ինքս ինձ պարզեւատում եմ Կոմիտաս վարդապետի յորն անզամ վերամշակած «Պատարագ»-ի հոգեպարար հնչուններով:

Համամիտ եմ կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի հետ, երբ պետում է, թէ չի կարելի բավարարվել Ս. Հովհաննեսի տաճարը մեկ անգամ տեսմելով, Լուդվիգ վան Բեթհովենի (1770-1827 թթ.) 9-րդ Սիմֆոնիան և Կոմիտասի «Պատարագ»-ը մեկ անգամ լսելով:

XX դարավակը հայ իրականության մեջ բացադրիլ

\* «Անահիտ» հանդեսի նոյն թվում (էջ 2-7) տպագրված է Կոմիտասի ինքնակենսագրությունը (մինչև 1908 թ.): Ա. Չոպանյանը խմբագրական նշումով արժևորում է Կոմիտասի երկերի ցանկը՝ գրված Կոմիտասի ձեռով:

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

անհատները շատ էին, բայց այդ փաղանգում Հռվիաննես Թումանյանը, Կոմիտասն ու Զորավար Անդրանիկը (1865-1927 թթ.) դարձան Հայ Ոգու անպարտելիորյան խորհրդանիշը, այն խորհրդանիշը, որ մեր չափ ու չափանիշ կորցրած օրերում բոլորին զորգուրանիք ու պաշտպանության կարիքն ունի, եթե իսկապես ուզում ենք կերտել նոր Ուսկեղար:

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. Բաղիկյան Խ. Գ., Կոմիտասն ինչպիսին եղել է, Երևան

**Բանայի-բառեր.** Ստեղծագործական առնչություններ, իշխանությ Մարիամ Թումանյան, «Անոշ» օպերա, նամակներ, հանդիպումներ, ժամանակակիցների հուշեր:

**Ключевые слова:** творческие отношения, княжна Мариям Туманян, опера "Ануш", письма, встречи, воспоминания современников.

**Keywords:** Creative relations, Mariam Tumanyan, opera "Anush", letters, meetings, memoirs of contemporaries.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՄԱՐԳԱՐԻՏ ՄԱՄԻԿՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ծ. 1955 թ.) ՀՀ «Տարվա Ուսուցիչ» (1993 թ.), բանահրական գիտությունների դրկուոր (2002 թ.): Աշխատում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ որպես առաջատար գիտաշխատող, հայոց լեզու և գրականություն է լասավանդում Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում: Հրատարակել է «Դերենիկ Դեմիրճյանի երգիծանքը» (2004 թ.), «Համաստեղի գրականությունը» (2004 թ.) ուսումնասիրությունները: Նրա աշխատափրությամբ լույս են տեսել «Համաստեղ. Նամականի» (2003 թ.), «Համաստեղ. Մատենագիտական ցանկեր» (2004 թ.), «Համաստեղ. Սոռացված էջեր» (Ա-Բ-Գ-Դ հաստրներ, 2005-2007 թթ.), «Արամ Հայկազ. Նամակներ» (2009 թ.), «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» (Ա-Բ-Գ-Դ-Ե-Զ-Ը հաստրներ, 2010-2016 թթ.), «Արամ Հայկազ. Ապրոդ ծառ մը (պատմվածքների ժողովածու)» (2012 թ.), «Համաստեղ. Աղօրարան» (2017 թ.) գրքերը:

**Сведения об авторе:** ХАЧАТРЯН МАРИАРАТА МАМИКОНОВНА (род. 1955) - "Учитель года" РА (1993), доктор филологических наук (2002). Работает в Институте литературы им. М. Абегяна НАН РА в качестве ведущего научного сотрудника, преподает армянский язык и литературу в Армяно-Русском (Славянском) университете. Автор исследований: "Сатира Дереника Демирчяна", "Амастег. Литература" (2004); книг: "Амастег. Эпистолярное наследие" (2003), "Амастег. Библиографические списки" (2004), "Амастег. Забытые страницы" (4 тома, 2005-2007), "Арам Айказ. Письма" (2009), "Арам Айказ. Забытые страницы" (7 томов, 2010-2016), "Арам Айказ. Живое дерево" (сборник рассказов) (2012), "Амастег. Молитвенник" (2017).

**Information about the author:** KHACHATRYAN MARGARITA MAMIKON (b. 1955). Teacher of the Year of the RA (1993), Ph.D. in Philology (2002). Senior Researcher in M. Abegyan Institute of Literature of the NAS of RA. Pedagogical courses on Armenian Language and Literature at the Russian-Armenian (Slavonic) University. M. Khachatryan is the author of "Derenik Demirchyan's Satire" (2004) and "Literature of Hamastegh" (2004) research works. Thanks to M. Khachatryan's hard work the following books were published: "Hamastegh. Collection of Letters" (2003), "Hamastegh. Bibliographical Records" (2004), "Hamastegh. The Forgotten Pages" (Vols. 1-4, 2005-2007), "Aram Haykaz. Collection of Letters" (2009), "Aram Haykaz. The Forgotten Pages" (Vols. 1-7, 2010-2016), "Aram Haykaz. A Living Tree. Collection of Stories" (2012), "Hamastegh. The Dawn" (2017).

## Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակին



Կոմիտասյան օրեր 19.- 25.11.2019 թ.  
Միջրուհական գիտաժողովի մասնակիցներ և իյուրեր

Խճանկար զիտաժնեղինեցից



Ողյունի խոսք՝ ԵՊԿ ռեկտոր,  
պրոֆեսոր Սոնա Շովհաննիսյան



ԵՊԿ երգչախումբ խմբավար պրոֆեսոր Շովհաննիս Միրզոյան



Գիտաժողովի ներածական խոսք՝ գիտական գործ  
պրոբեկտոր Ծովինար Մովսիսյան

### ***Резюме***

Доктор филологических наук, профессор РАУ **Маргарита Мамиконовна Хачатрян.** – “*Ованес Туманян–Комитас: личные и творческие соприкосновения*”.

Великий Комитас (Согомон Согомонян) так же, как и Ованес Туманян жили заботами армян начала XX века и стали людьми, которые без остатка послужили армянскому народу и армянской культуре. Творческие отношения Туманян–Комитас начинаются с романса “Мутн эр еркинкы” (“Темным было небо”) и всем хорошо известной песни “Какавик” (“Куропатка”), которые записал Комитас, а их литературную обработку сделал О. Туманян. Далее была совместная работа над оперой “Ануш”, которая даже в неоконченном виде имеет не только историческое значение. К счастью, в письмах, в воспоминаниях очевидцев, в газетах того времени сохранилось множество свидетельств о многочисленных встречах этих двух великих людей. В начале XX века О. Туманян, Комитас и полководец Андраник, наряду с другими великими армянами, стали символами несокрушимости армянского духа.

Символы, которые в наши дни потеряли все идеалы, нуждаются в нашей любви и защите, если, конечно, мы на самом деле хотим создать Золотой век.

### ***Summary***

Doctor of Philology, Professor of RAU **Margarita Mamikon Khachatryan.** - “*Hovhannes Tumanyan and Komitas: Personal and Creative contacts*”.

Soghomon Soghomonyan, a Turkish speaking young boy, remained in the history of our culture under the heartwarming name of Komitas, and Hovhannes Tumanyan, the greatest son of Lory became known as the Poet of All Armenians. They were highly concerned about the hardships the Armenian people went through in the early 20th century and gave their all to the people and to the Armenian culture. Their creative relationships began with writing "Mutn er erkingy" ("The Sky Was Dark") romance and a well-known song "Kakavik" ("A Quale"), notated by Komitas, with the poetic text adaptation by Tumanyan. Later on they began to work on the "Anush" opera, which even in its unfinished version was not only of historical interest. Fortunately, the letters, the newspapers and the memories of the contemporaries present lots of evidence regarding numerous interactions between those two great people. In the beginning of the 20<sup>th</sup> century Tumanyan, Komitas, Commander Andranik together with many other great Armenians became symbols of invincible Armenian spirit.

They need our love and protection, especially today as we are losing our ideals if only we are really striving to create the Golden Age.

# ՔՆԱՐԻԿ ԱՐՄԵՆԻ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

**Խ. Արովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական  
Համալսարանի Հայ նոր և նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման  
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ «Սփիտը» Գիտառուստմնական Կենտրոն  
E-mail. spyurkka@gmail.com**

ԿՈՄԻՏԱՍԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԻՆՔՆԱՆԿԱՐԸ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

**Կ**ոմիտասապհութիւնը, կապուած նրա  
նաևն ակագրական ժառանգութեան ուսում-  
նասիրութեան հետ, տպաւորիչ ճանա-  
պարի է անցել: Բայտական է նշել, որ բազմաթիւ ցիրու-  
ցան պատառիկներից հնարաւոր է ներկ տասնամետակ-  
ների ընթացքում հաւաքագրել ստուար մի թուաքանակ,  
որին այնուհետեւ ամփոփուել է երեք հրատարակութիւն-  
երի մէջ՝ 2000 թ., 2007 թ. (Յօնիկ Բերարեանի կազմո-  
ւով) և 2009 թ. բանասէր Գորգէն Գասպարեանի աշ-  
խատասիրութեամբ, այս ուղղութեամբ կատարուած աշ-  
խատանքի հաշուառումով, միաժամանակ վրէամերի ու  
անձգութիւնների սրբագրութեամբ, խնամքով արուած  
ծանօթագրութիւններով: Աղբիւների ուսումնասիրութիւ-  
նու ցոյց է տալիս, որ անելիքներ, այնուամենապես, մնում  
են:

Այս յօդուածում մեր առաջադրութիւնը, սակայն, դուրս է այս համատեքստից եւ փորձ է՝ երեւան հանելու Կոմիտաս վարդապետի մարդկային ու գիտական նկարագիրը, նրան հետաքրքրող հարցադրութիւնների ուղղութիւնը, նամակների հասցեատէրերի ու նրանց հետ յարաբերութիւնների յատկանշական զծերի արտացոլումը: Նամակների միջոցով նմանատիպ մի աշխատանք՝ «Կոմիտաս վարդապետ իր նամակների միջով» խորագրով, դեռ 1935-ին կատարել է երգչուի Մարգարիտ Բարյենանը՝\* արուեստագետի կերպարը կազմելով իրեն հասցեագրուած նամակները նկատի առնելով:

(3. Էջ 153-165)\*: Ի հարկէ, դրանք բաւական լոյս են սրվում Վարդապետի կերպարի վրայ, սակայն մի կողմից դիտուած են մէկ անձի հայեցրով, միևնույն բերում են Կոմիտասի կեանքի հանգրուանների յաշորդական արձանագրումով:

Իսկ Կոմիտասի կենսապատումը կարելի է ամբողջացնել ոչ միայն Ս. Բարայեանին, այլև ամենատարբեր անձերի ուղղուած նամակներում։ Դրանք մէկ պատմում են բեղյիմեան շրջանի խանդավառութեան, ուստիմնառութեան, երա վարած կենցաղի ու օստաբների հետ ունեցած փոխարարերութիւնների մասին, մէկ բացայսում Արք. Էջմիածնում ապրած տարիներից ու միջավայրից ունեցած անբաւարարութիւնը։ Կոմիտասն անկեղծօրէն խոստովանում է. այն տաղտուկը, որը երբեմն բերում էր վաճական միջավայր՝ արուեստագլւահին զրկելով ստեղծագործական թոհիքից. «...մի լցուիր, մի լար, մի ողբա Խորենացու պէս, իր իսկ ողբով. այժմ նոյն պատկերն է մեր շուրջը, և նոյն ուրուականն է ուրում մեր անբուժելի ցաւերը» (4. Էջ 162)\*\*, - բռնորում է Ա. Չապանեանի 1909-ի Ապրիլի 15-ին Արք. Էջմիածնից ուղղուած նամակում։

Անկեղծութիւն է յորդում այդ նամակներից, եւ ակրախ է բանաստեղծական նարեկացիական ոճը: Ծառովիդի է հասցէատէրն էլ՝ Վեհափառը. «Որնում եմ հանգիստ՝ չեմ գտնում. ծարափ եմ ազնի աշխատանքի, խանգարում եմ. փափարում եմ հեռու մնալ՝ յսել ականջներ՝ չլսելու համար..., բայց զի մարդ եմ, չեմ կարողանում» (4. էջ 166): Ծարունակութիւնն արդէն ինքնազիտակցող, սեփական տաղանդը զնահատող, արժանապատի մարդու կեցուածքի արտայայսութիւն է. «Եթէ հաճոյ է Վեհիդ ինձ չկորցնել, այլ գտնել, արտասուելով աղերսում եմ արձակեցէր ինձ Սր. Էջմիած-

\* Այս առիթով կ'ուզէինք կատարել բանափրական մէկ ճշդում. Գորգէն Գասպարեանն իր կազմած «Նամականի»-ի առաջարանում («Մշակոյթ»-ը ծանօթազրկելիս չի ճշդում դրա՝ պարբերական լինելու հանգամանքը, թիր և հրատարակութեան վայրը, որն ընթերցողին կանգնեցնում է շփոթի արջեն:

\*\* Այսուհետեւ այս իրատարակութիւնից մէջքերումների էջերը կը տրուեն տեսառում՝ փակագծերի մէջ:

\* Կոմիտասն ընտանեկան յարկի ջերմութիւն առանձնապէս զգալու հնարաւորութիւն չունեցաւ: Փոխարէնը, սակայն, կարելի է ասել, այդ ջերմութիւնը նա սոուց ու սոսացաւ Բարպահանելերից: Յատկապէս խօսքը վերաբերում է Մարզարիտին, որի հետ բարեկամութիւնը մեզ յիշեցնում է Յովի. Թումանեանի և իշխանուի Մարիամ Թումանեանի տպաւորիչ նամակագրութիւնը: Կոմիտաս-Մ. Բարյական այս նուրք ու զգայն յարաբերութիւնը գեղարուեստական հրաշալի լուծում է ստացել սփյուռքահայ գրող Մարգիս Վահագնի (Մարգիս Փալափուրեան) «Սիրոյ կերոն» պատմուածքում (1. էջ 202-222)` գրուած Վարդապետի ծննդեան 100 ամեալի տարին՝ 1969-ին, բնարան ունենալով Պ. Աւագիկի՝ տարը տարի առաջ գրուած «Անրելի զանգակատուն» պօտմի «Ասա, /Վարդապետ Ո՞վ էր քո սէրը, /Բախստի պէս թարուն /Քո սրտի տէրը» տողերը (2. էջ 153):

«Երաժշտական Հայաստան» ամսագիրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ, Ալինա Աշոտի Փակլանճան՝  
14.2.2020 թ. և ընթերցվել է զիտաժողովում, ընդունվել տպագրության՝ 25.11.2019 թ.,  
ներկայացրել է հեղինակը՝ 2.2.2020 թ.:

## Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

նայ Միաբանութեան Ուխտից եւ նշանակեցէք Սեւանայ Մենաստանի մենակեաց: Քսան տարին կորցրի, գոնէ մնացած տարիներս շահեցնեմ» (4. էջ 162):

Ճիշտ այսպէս իր անքաւարարութիւնն էր յայտնում Յովհաննէս Թումաննեանը Փիլիպոս Վարդազարեանին գրած իր նամակներից մէկում (1898 թ., Օգոստոս, Շուլավեր). «Բանաստեղծը միայն խաղաղութեան մէջ կարող է անփոփուել, ոգեստրուել ու ստեղծագործել – մանաւանդ մեծ գործեր, օրինակ պօէմ, դրամա եւ այլն: Ես այսքան բան որ ունեմ կիսատ-պարա ընկած՝ նրանից հո չի, որ ուժու չի պատել, այլ նրանից, որ խանգարել են: ...Խանգարել որ ասու եմ, ես դժուարութիւնը չեմ հասկանում, ...ես այն արգելքներն եմ ասում, որ մարդու հենարաւորութիւն չեն տալիս, չեն թողնում պարապի, ուշըն իրան հաւարի, ժամեր ունենայ իր իշխանութեան տակ իրեւ բանաստեղծ» (5. էջ 203):

Ի դէպ, ամենայն հայոց բանաստեղծի հետ Վարդապետի հանդիպումը մէկ անգամ չէ, որ քննութեան նոր կարող է լինել. չմոռանանք, որ նամակագրութեան ոլորտից Կոմիտասի հասցէատէրերից մէկն էլ, կամ եթէ կարելի է ասել, եերոսներից մէկն էլ Թումաննեանն է: Չիսուրանալով «Անոշ» օպերայի ստեղծագործական ծալքերի մէջ (նիսթը բազմից է արծարծուել երաժշտագիտութեան մէջ, այդ թուում՝ նաև նամակների հաշուառումով), որը Կոմիտասի ստեղծագործական երազանքը կարելի է համարել, եւ որը զոյսի բերելու համար նա անգամ դիմում էր իշխանութիւն Մարիամ Թումաննեանի բարերար «միջնորդութեանը», յանձնարարութիւններ տալով բընազրի փոփոխման համար, նշենք, որ վերոնշնալ անքաւարութիւնն էր ապրում Վարդապետը հենց Յովհաննէս Թումաննեանի առիթով 1909-ին նոյն Մ. Թումաննեանին ուղղուած նամակում. «Մեր Յովհաննէսի չարձակութը շատ վատ տպաւորութիւն թողեց վերաս, որքան զրկում է մեր գրական-բանաստեղծական կեանքը նորա անզորդ բանուումն ընկած մնալովը» (Խօսքը վերաբերում է ամենայն հայոց բանաստեղծի՝ Մետեխիի բանուում եղած շրջանին. – **Ք.Ա.**, 4. էջ 156):

Նամակի մէջ նկատելի է առնուազն երկու հանգամանք. առաջինը բանաստեղծին տրուած բարձր գնահատութիւնն է՝ գրական կեանքի կազմակերպչի, հաւաքական կերպարի տեսակետից, միաւ՝ ոճը, որը պակաս հետաքրքրական չէ, այն է՝ ամբողջովին պահուած է խօսիք թումաննական կոլորիսը:

Յովհաննէս Թումաննեանն ու Կոմիտասը ճակատագրակից էին նաև մէկ այլ կէտում. Ի սկզբանէ Յովհ. Թումաննեանի համար նոյնպէս կարծես վճռուած էր հոգեւոր կոչումը, միայն թէ այդ հոգեւորի ճանապարհին նրան յաջողուեց խուսափել քահանայական փիլոնից, իսկ Կոմիտասի անուանը միշտ ուղեկից մնաց Վարդապետս ախտորոշ, որը շատ աւելին է, քան պարզ եկեղեցական աստիճանը կարող է յուշել: Նրանք երկուսն էլ կրում էին նոյն ազգային մշակոյթի վարդապետական գաւազանը. Թումաննեանը եղաւ մեր ժողովրդին «հայրենի օրէնքովը իին վերջին հանգիստը» կարդացողը, իսկ Կոմիտասը՝ պատարագ մատուցողը:

Արհասարակ, դժուար է պատկերացնել հայ երգի մշակին առանց գրականութեան հետ շփումների. պա-

տահական չէ, որ նրա տեսադաշտում կայում ներկայութիւն են գրական մարդիկ՝ Յովհաննէս Յովհաննիսեանը, Գարեգին Լետոննեանը, Թէոդիկը, Հրաշեայ Աճառեանը, Վահան Մալէկեանը եւ այլք: Նրա նամակների գրոց-բրոց հասցէատէրերի մէջ «առաջնորդինը», սակայն, Արշակ Զօպաննեանն է, թուով 36 նամակ: Դա ոչ միայն պայմանաւորուած էր վերջինիս խմբագրական պաշտօնով կամ վարդիկան կեցութեամբ, այլ առաջին հերթին արդինը էր երկու արուեստագէտների հոգեկցութեան: Ա. Զօպաննեանն այդ ժամանակ մի տեսակ համակարգում էր հայ մշակոյթի ծառալում եւ տարածումը քրանսիական միջավայրում, եւ հայ գրողներից շատերն էին հիբրունկալուս նրա «Անահիտ», աւելի ուշ «Վերածնունդ» պարբերականների էջերում, իսկ նրա յարկարաժինը գրամշակութային իրաստեսակ հաւաքանակ բառատեղիի էր վերածուել: Այս երկու արուեստագէտների մտերմութիւնն ընկալելու համար բաւական է միայն ուշադրութիւն դարձնել այն զուարթախոն ու զուարթաբան տօնայնութեանը, որով դիմում է Կոմիտասը Ա. Զօպաննեանն է:

«Սիրելի Զօպանն»

Ինչպէս երեսում է, տաք տեղ ես գտել. հը, գործերն ու բոյթերն ինչ են անում (խօսքը Մարգարիտ եւ Արմենուի Բարայեանների մասին է. – **Ք.Ա.**), որո ինքը զինքը ինքեանց զինքեանց հանդիսացուցի՞ր» (4. էջ 148) կամ «Սիրելի Արշակ բիծա» (4. էջ 232):

Նոյն այդ երգիծախանը բառապաշարը բնորոշ է նաև Յովհ. Թումաննեանի հետ նամակագրական գրոցին:

«Սիրելի Յովհաննէս,

Էջմիածին չեկար, մնակից վախեցար. Էդ պիծի մնական ինչ է որ մարդու նորանեն վախենայ, ես քեզ այնպիսի տեղ տայի, որ մնակ չէ, մնակի աղբերն իր ճտերով չէր կարող մնուքը գործել» (4. էջ 140):

Պակաս կարեւոր չեն նաև Կոմիտասին ուղղուած նամակների դիմելածները, որոնք էլ իրենց հերթին են վկայում Վարդապետի՝ այլոց կողմից ընկալման մնայն, ինչպէս օրինակ՝ Մ. Բարայեանից ստացուած «Սիրելի Հայր սուրբչիկ» (4. էջ 269) կամ «Թանկազին Հայր Սուրբիկ, մայմոնչիկ» (4. էջ 267) սկսուածքով մի շարք նամակները:

Կոմիտասը նաև մեծ դաստիարակ է, ես սա չպէտք է հասկանալ ուղիղ իմաստով միայն. նա, իրեւ խորագիտակ մանկավարժ, իր պարտը էր համարում ուշադրութիւնը լինելի աշակերտութեանը՝ իր գտած եւ այսօր յամենայն դէպս պոլսահայ միջավայրում շատ յայտնի «քէրթէնքէլ»-մողէսներին մատուցուղ նիսթի նկատմամբ: Նա ոչ միայն լծուած էր երաժշտութիւնը մաքրելու, այլ այն ճիշտ սովորեցնելու աշխատանքին: Եւ այս ճանապարհին նա դրսեւում էր բացառիկ պատահական վերաբերմունք, ինչպէս օրինակ ցոյց է տրուած նրա՝ Վահրամ Ենակ. Մանկունուն ուղղուած 1902 թ. 14 մարտ, Սր. Էջմիածինի բուագրուած ընդարձակ նամակում, որը բնուում է Արամ Բժշկեանի «Դասագիրը հայ եկեղեցական ճայնագրութեան» անունով տետրակը (4. էջ 68-74):

Իրեւ մասնագէտ՝ խստապահանց էր իր նկատ-

## Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

մամբ եւ նոյն մօտեցումը դրսեւորում էր այլ արտևառագլւտերի հանդիպ, մանաւանդ եթէ խնդիրը վերաբերում էր ազգային արժեքներին: Ինքնաքննադատութեան հրաշալի օրինակ են տալիս Մ. Բարյեանին ուղղուած հետեւեալ տողերը. «...Նատ թանկ եմ իմ սրտակից բարեկամներիս խրաքանչիր, նոյնիսկ չնչին համարած կամ բծախնդիր նկատողութիւնները. ես կատարեալ չեմ, ինչպէս բոլոր մարդիկ, բայց կատարելութեան նրգուող, նոյնիսկ այն դէպերում, երբ ես մերժում եմ մէկի կարծիքը. թէեւ մերժում եմ առժամանակ, բայց այդ ինձ մտածել է տալիս, թէ ինչո՞ւ այս կամ այն կոտրը դոր չէ եկել մէկին կամ միստին եւ ես աշխատում եմ հարցը լուծել» (4. էջ 125): Նոյն անապառութիւնը դրսեւորում է նաև այլոց պարագային, ինչպէս օրինակ երբ գրում է Մատրէս Իզմիրեանին Ռուրէն Ղորլանեանի «Երգեցողութիւնը Սր. Պատարագի, դիրին մշակմամբ դպրոցական եւ ժողովրդական նկեղեցական քառաձայն խմբերի համար» տեսրի շուրջ. «Արհասարակ չպէտք է արտօնել մի գրուածք, ով ուզում է դաշնաւորած լինի, առանց նախապէս ենթարկելու մի մասնագլւտ ժողովի մանրազնին քննութեան. թէ չէ, մենք կ'ունենանք նկեղեցական եղանակների մի այնպիսի խանճաշփորութիւն (առանց այն էլ տակն ու վրայ է եղել մեր հոգեւոր երաժշտութիւնը), որի առաջն առնելն անհնարին կը լինի» (4. էջ 174-175):

Զարգացնելով իր մտորումները՝ նոյն նամակում անդրադարձ է կատարում նաև մէկ այլ կարեւոր՝ լեզուական պահանջի. «Էւրաքանչիր ազգի երաժշտութիւնը բխում է իր մայրենի լեզուի չորս անրաժան յատկութիւններից՝ **ամանակ, եկեւօ, հեշին եւ ոզի**. սրա են պատկերացնում մտքի եւ զգացմունքի աշխարհները»\* (4. էջ 175): Ի դէպ, մօտաւրապէս նոյն բոլունդակութեամբ մի նամակ է լուս հենց իրեն՝ Ռուրէն Ղորլանեանին (4. էջ 175-176):

Քազմաքի ուղղութիւններով գրուած եւ մինչեւ 1914 թուականը ձգուող կոմիտասեան նամակները թոյլ են տալիս արձանագրելու, որ այնքան էլ միշտ չէ մեր պատմութեան ճակատագրական անկինադարձով եւ կեանքի վերջին տարիների տխուր թաւալումներով պարզել հեղինակի կեանքի ու ստեղծագործութեան զնահասութիւնները, որոնք մի տեսակ թախծի ու կարեկցանիք սահմանում են դրել նրա կերպարը, որի ամրողացման ճանապարհին պակաս կարեւոր դերակատարութիւն չունեն նաև իրեն ուղղուած զնահասութիւնները: Մեզ համար յատկապէս ուշագրաւ են բանահաւաք Տիգրան Չիրունու 1916-ի Յուլիս 7/20 եւ 1917-ի Փետրուար 7/20, Կ. Պոլիս թուագրուած երկու նամակները, որոնք ցոյց են տալիս Կոմիտաս մարդու ու մասնագլւտի հեղինակութիւնը, որ անսասան է նաև ճակատագրական դէպերից յետոյ. «Ապագայ ամէն անակնկալ պատահականութեանց հանդէպ ներկայ ձեռագիրովս Ձեզ լիազօր կտակարար կը կարգեմ իմ անգոյութեանս պարագային իմ... վեցեակ գաւակներու եւ իմ ձեռագիր երես-

\* Պատահական չէ նաև Կոմիտասի՝ բանաստեղծութեանը դիմելու փորձառութիւնը. պարզ ակնարկն անգամ այդ բանաստեղծութիւններին երեւան է հանում դրանց ոիթմականութիւնն ու երաժշտականութիւնը:

նեակ մը ազգագրական **աշխատութիւններու** համար» (ընդգծումներ՝ ձեռագրում. – Ք.Ա.) (6.):

Սա Կ. Պոլիսն է, որտեղ Կոմիտասն իրեն տանտէր է զգում, որին ազգային երաժշտութեան տարածման զործում ամէնից «յարմար» միջավայրն է. պարզ ակնարկն անգամ այստեղից ուղղուած նամակների խանդակառ տրամադրութիւններին բերում է միաժամանակ թէ Էջմիածնի հետ ունեցած տարրերութիւնը, թէ Կոմիտասի բաւարարուածութիւնը նոր իրականութիւնից: Դրանցից մէկը վերաբերում էր երաժշտանոցի բացմանը. «Ա խ, որքան եմ ցանկանում, որ մեր երաժշտանոցը բացուէր, եւ դու էլ (խօսքը Մ. Բարյեանի մասին է. – Ք.Ա.) զայիր այստեղ ու միասին առաջ մնէինք երաժշտութիւնը մեր շրջանակի մէջ» (4. էջ 206), միսան իր սիրելի խմբի կազմումն էր. «Խումբս, որի անոնը «Գուսան» եմ որել (ին Գողթան երգիչների, ժողովրդական աշունների անունով, որ Գուսան էն կոչում), շատ յառաջադիմեց. եկող տարի աւելի կատարեալ կը լինի, եւ շատ բան կարող եմ անել» (4. էջ 209): Յայօր, երկու տարի անց, 1914-ի Յուլիս 22-ին, նոյն Կ. Պոլսից Ա. Զապանեանին յորուած նամակներում պիտի արձանագրէր. «Կառավարութիւնը միշտ պոչ է խաղացնում եւ նորէն անբարեհած է դէպ մեզ՝ հայերին» (4. էջ 233), եւ այդ նոյն Պոլսում մնալը պիտի ճակատագրական լինէր նրա համար:

Կոմիտաս վարդապէտը զնահատանիքի ու շայոյ խօսքերի պակաս չի զգացել. դրանք յատկապէս ուշագրաւ են «օսուր» զնահասութիւնների առումով, ինչպէս օրինակ Օսկար Ֆլայշերից եւ Մարտ Զայֆերթից ստացած նամակները, որոնք պատմում են դեռ XIX դարավերջին Եւրոպայում նրա վայելած հեղինակութեան մասին, թէ «Ձեր հմտալից եւ խորիմաստ դասախոսութիւնները օգնեցին մեզ խոր հայեացը նետել այն երաժշտութեանը, որ ցարդ մեզ համար գրեթէ փակ էր, եւ որը կարող է շատ բան ստորեցնել մեզ՝ արեւմտացիներին» (4. էջ 240) կամ «...Ձեր դասախոսելու եւ երգելու կատարեալ արուեստը – սրանք բաներ են, որ մեզ զարմանք կարող էին պատճառել եւ որոնք վառ կը մնան ձեր ունենիդիների յիշողութեան մէջ» (4. էջ 242):

Բայց այս մէկը՝ «հայկականը», ուշագրաւ է իր տարրութեամբ, օրիմորնի հրաշալի օրինակով, յուզական շեշտադրութեամբ. պատահական չէ, որ այս վերագրուած է «Հայկական գեղեցկութիւններ»\*, ինչը սովորաբար բնորոշ չէ ճանակագրական ժանրի համար:

\* Հետաքրքրական է, որ ծանօթագրութիւններում գրում է, որ այն առաջն անգամ տպագրուել է (7. էջ 349-352): Նախ, չի նշում պարբերականի երատարակութեան վայրը, օրը՝ Կ. Պոլիս, 11 Յունիս, Տարաք, որից պարզ կը դառնար նամակի մօտապ թուակնը: Բացի այլ՝ հենց «Տաճար»-ի խմբագրական ծանօթութեան մէջ նշում է, որ այն նախապէս լուս է տեսել «Լուսաբեր-Արեւ»-ի էկղուում: Նշանակում է առաջին անգամ լուս է տեսել հենց այս պարբերականում, ինչի յիշասակութիւնը չկայ «Նամականի»-ում: Ես մէկ հանգանանք (8. էջ 496-497), նշում է, որ համերգն արդէն կայացել է: Թերեւս այս թիրմացութեան արից է սուսել Տիգրան Կանարականի նշումը: Աւելի վաղ կայացած լինելու մասին է վկայում ես մէկ փաստ, այն, որ ԳԱԹ Կոմիտասի ֆոնդում (թի 250ա), պահում է Ալեքսանդրիայում կազմած երգախմբի լուսանկարը՝ 1911թ. Յունիս 3 թուագրում: Բ դէպ, կարծես դիպաւածով բովանդակութեան հասուածում նոյնպէս նամակը դրուած է սխալ էշակալումներով:

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

Խուզն արևմտահայ գրող Տիգրան Կամսարականի՝ 1911-ի Յունիսին Վարդապետին ուղղուած նամակի մասին է. «Ով վարպետ վարդապետ, ինչ բանի աւելի իիանամ ձեր մէջ, ձեր արուեստորոք ճայնին (Յորդելակ ինչպէս յիշեցիր Կորինին), թէ գերանորք արուեստին, պատարուն զիսութեան, թէ բոցանորք պերճախօսութեան, հրապորիչ բանախօսին, թէ... բայց դուք վիմուլըն էք, հայր սուրբ» (4. էջ 260):

Մեկնութիւնները, կարծում ենք, աւելորդ են: Մնում է մեր մէջ տեսական պահենն Վհուկ Հայր Սուրբ գործի ու մեղեդու կախարդաններ:

## ԾԱՆΟԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Վահագն Ս., Մատանիներ /պատմուածքներ, Պէյրութ, Առլաս, 1969 թ.: *Vahagn S., Mataniner /patmuatsqner, Pejyruth, Atlas, 1969 th.*
2. Սեւակ Պ., Երևեր, երեք հասորով, հ. 2 /պօէմներ, Եր., Սովետական գրող, 1983 թ.: *Sewak P., Yerker, yereq hatorov, h. 2 /poemner, Yer., Sovetakan grogh, 1983 th.*

3. //Մշակոյթ, պարբերական, Ա. Տարի, թի 3-4, Փարիզ, 1935 թ.: //Mshakoyth, parberakan, A Tari, thiw 3-4, Pariz, 1935 th.

4. Կոմիտս Վարդապետ, Նամականի /աշխատասիրութանը Գորգեն Գասպարեանի, Եր., Սարգսին Իսահենց-Փրինթինֆո, 2009 թ.: *Komitas Vardapet, Namakan /ashkhatasirutheamb Gurgejn Gaspareyani, Yer., Sargis-Khachentz Printhiso, 2009 th.*

5. Թումանյան Յովի, Երևերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 9 /նամակներ. 1885-1904 թք., Եր., ՀՀ ԳԱԱ Գիտութիւն, 1997 թ.: *Thumanean Yovh., Yerkeri liakatar zhoghovatsu tas', hatorov, h. 9 /namakner. 1885 -1904 thth., Yer., HH GAA Gituthiwn, 1997 th.*

6. Տիգրան Չիթունու փոնդ, ԳԱԹ, թի 238/2: *Tigran Chithunu fond, GATh, thiw 238/2.*

7. Կամսարական Տ., Հայկական գեղեցկութիւններ., //Տաճար, թի 22, 11 Յունիս, Պոլիս, 1911 թ.: *Kamsarakan T., Haykakan geghetzkuthiwnner, //Tadchar, thiw 22, 11 Eyunis, Polis, 1911 th.*

8. //Տաճար թի 21, 4 Յունիս, Պոլիս, 1911թ.: //Tadchar, thiw 21, 4 Eyunis, Polis, 1911 th.

**Բանայի-քանոն.** Կոմիտսա, նամակակազրական ժառանգութիւն, արուեստագէտի կերպար, կենսապատում, մանկավարժ, ստեղծագործութեան զնահատութիւն:

**Ключевые слова:** Комитас, эпистолярное наследие, образ художника, автобиография, педагог, оценка творчества.

**Keywords:** Komitas, epistolary heritage, character of the artist, biography, pedagogue, estimation of the creation.

**Տեղեկություններ եղանակի մասին.** ՔՆԱՐԻԿ ԱՐՄԵՆՈՎԱ ԱԲՐԱՄՅԱՆ - բանասիրական գիտութիւնների թեկնածու (2013), դուռըն (2018)։ Ասարել է Խ. Արուեստի անուան Հայկական Պետական Սանկավարժական Համալսարանի բանափառական բաժանմունքը (2006)։ Ասեանիսութեան թեման է՝ «Զարեհ Խրախունին և արեւելահայ բանաստեղծութիւնը», գիտական դեկավար՝ թ.գ.դ., Պորֆ. Սուրեն Դամիելեան։ Հետոնակ է «Զարեհ Խրախունին և արեւելահայ բանաստեղծութիւնը» մենագրութեան և երեք տասնենակից աւելի յօդուած-ուսումնակիրինների, ինչպէս օրինակ՝ «Լուրին» վեհի գեղագիտական մի բանի հայցերի մասին» / «Աւեսիս Սահարութեան» միջազգային գիտաժողովի միթքեր, Եր., 2017, էջ 17-25։ «Հայ-բուրժական գրաշակուրային թճանկներ» Յաղոր Խաչիկեան և Ելիք Շափաք» / «Կապի ակունքը լոյսի», Սփիտիրի հայագիր եւ օսպագիր գրողների 6-րդ համահայկական համաժողովի միթքեր, Եր., 2018, էջ 110-118։ «Արևմտահայ եենինակների դասաւանդման մեր փորձից» / «Ալում» գիտական յօդուածների ժողովածու, թի 1 (18), Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 333-341։ «Հանարին՝ XIX դարի գրական հանգրուություն» / «Հայ-ֆրանսիական գրասապատմական աստրնչութիւններ» գիտաժողովի միթքեր, Եր., 2019, էջ 99-112։ «Դգման Սահապանի բանաստեղծութեան հորիզոնները» / «Հայկագեան Հայագիտական Հանձես», 39-րդ հասոր, Պէյրութ, 2019, էջ 471-484։ Կազմել եւ խմբագրել է Սփիտիրի գրականութեանը վերաբերու տասնեակ գրքեր՝ Պուտք Հասունեան, «Ալուստ» (2006), Զարեհ Խրախունի, «Տօնականց» և «Տօնականց» (2007 և 2010). Գեղոր Ածենեան, «Գեղարվունստական երկեր», «Բննադասական երկեր», «Հասպարապարական երկեր» (5 հատոր, 2012-2018)։ Գիտական հետարքությունների շրջանակի ընդունում է արևմտահայ դասական հայություններ, սուպարագիր գրականութիւններ, արևմտահայերէնը։

**Сведения об авторе:** КНАРИК АРМЕНОВНА АБРАХАМЯН - кандидат филологических наук (2013), доцент (2018). Окончила филологический факультет Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна (2006). Тема диссертации: "Зарэ Храхуни и Восточно-армянская поэзия" (рук.- доктор филологических наук, профессор Сурен Даниелян). Автор монографии "Зарэ Храхуни и Восточно-армянская поэзия" и более 30-и исследовательских статей, в частности, "О некоторых проблемах в романе "Тишина" / Материалы международной конференции "Аветес Агаронян", Ер. 2017, С. 17-25; "Армянско-турецкие литературно-культурные отношения: Акоп Хачикян и Елиф Шафак", "К источнику света", Материалы Всеармянской 6-ой конференции арmenoязычных и иноглядьчых писателей, Ер., 2018, С. 110-118; "Из нашего опыта преподавания западно-армянских авторов" / Сборник научных статей "Акунг", N1 (18), Ер., 2018, С. 333-341; "Ламартин в центрах армянской литературы XIX века" / Материалы международной конференции "Армянско-французские литературно-культурные связи", Ер. 2019, С. 99-112; "Горизонты поэзии Игна Сариаслан", "Арменоведческий Журнал Айказян", N39, Бейрут, 2019, С. 471-484. Является со-автором и редактором десятка книг по литературе армянской диаспоры, таких, как: Ропер Амбеджян. "Потолок" и "Обратная сторона потолка" (2006); Зарэ Храхуни "Праздничный звонок" и "Праздничный вызов" (2007, 2010) Геворк Аджемян "Художественные произведения", "Критические произведения" и "Публицистика" (в 5 томах, 2012-2018). В сферу научных интересов входит западноармянская классическая литература и литература армянской диаспоры, а также иностранная литература и западноармянский язык.

**Information about an author:** KNARIK ARMEN ABRAHAMYAN - PhD candidate (2013), Docent (2018). Graduated from the faculty of philology of Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Dissertation topic: "Zareh Khrakhuni and the Eastern Armenian Poetry". Q. Abrahamyan is the author of one monograph: "Zareh Khrakhuni and the Eastern Armenian Poetry" and of more than thirty research articles, namely "About Some Aesthetic Questions of the Novel "Silence" /Issues of the International Conference "Avedis Aharonian", Yerevan, 2017, p. 17-25, "Armenian-Turkish Literary and cultural Relationships: Agop Khachikian and Elif Shafak" / "To the Spring of Light", Panarmenian Conference on Armenian Language and Foreign Language Armenian Writers', Yerevan, 2018, p. 110-118, "From our Teaching Experience of Western Armenian Authors" /"Akunq" Collection of Scientific Articles, Yerevan, 2018, p. 333-341, "Lamartine in the Centers of the 19th Century Armenian Literature" /Issues of "Armenian-French literary-cultural relationships" International Conference, Yerevan, 2019, p. 99-112, "The Poetic Horizon of Igna Sariaslan" / "Haigazian Armenological Review", N39, Beirut, 2019, p. 471-484. She has collected and edited numerous books on Armenian literature of the Diaspora, such as Rober Haddejian "Ceiling" and "The Other Side of Ceiling" (2006), Zareh Khrakhuni "Celebration Bells" and "Calling Festival" (2007 and 2010), Gevorg Achemian "Fiction Works", "Literary Works" and "Critical Works" (5 volumes, 2012-2018). K. Abrahamyan's research interests include the Western Armenian literature of classical period and the problems of the Armenian literature of the Diaspora, foreign literature, and Western Armenian language.

## Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն



Գիտաժողովի նախակիցներ՝ Դամիկ  
Չովհաննիսյան, Մարգարիտ Խաչատրյան,  
Անի Փաշայյան

Խ ճ ա ն կ ա ր 25.11.2019 թ. գիտաժողովից



Գոհար Շագոյան, Ռուզաննա Ստեփանյան, Ծովինար Մովսիսյան,  
Սոնա Չովհաննիսյան, Լիլիթ Երմքալյան, Արամ Չովհաննիսյան



Լիլիթ Անտոնյան



Սուշեն Դարբուրյունյան

### Резюме

Кандидат филологических наук, доцент АГПУ  
**Кнарик Арменовна Абрамян.** - “Автопортрет  
Комитаса в эпистолярном наследии”.

В статье представлена попытка характеристики личности и творческого образа Комитаса на основе его эпистолярного наследия. Письма относятся к периоду жизни композитора, в течение которого он получал образование в Европе, служил в духовной семинарии в Эчмиадзине, а также ко времени его музыкальной деятельности в Константинополе.

Автор рассматривает переписку Комитаса с писателями (Ованес Туманян, Аршак Чопанян и др.), а также с представителями интеллигенции (Мариам Туманян, Маргарит Бабаян, Тигран Читуни, Оскар Флейшер, Макс Зайферт), отразившую индивидуальность самого композитора, а также особенности восприятия его личности зарубежными авторами.

### Summary

PhD candidate, Docent ASPU **Knarik Armen Abrahamian**, - “Self-portrait of Komitas in his epistolary heritage”.

The article discusses the personal and artistic features of the great Armenian composer Komitas viewed through his epistolary heritage. The letters refer to the period in Komitas' life when he was receiving his education in Europe, serving in Etchmiadzin Seminary, and his creative endeavor in Constantinople.

The article also reviews Komitas' correspondence with Armenian writers (Hovhannes Tumanyan, Arshak Chobanyan, and others) and other Armenian and world intellectuals (i.e., Mariam Tumanyan, Margarit Babayan, Dikran Tchitouni, Oskar Fleischer, Max Seiffert) for better understanding of the personality of the great composer.

## ԱՆԻ ԱՍԱՏՅԱՆԻ ՓԱՇԱՅԱՆ

Գրականագետ,  
բանասիրական գիտությունների թեկնածու,  
Հայ-Առուսական համալսարանի հայագիտության ամբիոնի դոցենտ  
E-mail: anipashayan@yahoo.com ani.pashayan@rau.am

## ԿՈՄԻՏԱՍԻ ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ «ԿՈՄԻՏԱՍ. ՏԱՍԼ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱՐՔԸ

**1** 939 թվականին «Մշակույթ» հրատարակչությունում լույս է տեսել «Կոմիտաս վարդապետ. քնարերգություններ» գիրքը՝ Կոմիտասի առաջին կենսագիր, բանասեր, բանաստեղծ և հասարակական գործիչ Թորոս Ազատյանի խմբագրությամբ: 1905-ից մինչև 1914 թվականը տարբեր տարիներին կոմպոզիտորը գրել է բնուրյան, սիրո խոհական բանաստեղծություններ: Իհարկե, միայն այսպահը չէ Կոմիտասի գրական ժառանգությունը, որ ներկայացրել է Ազատյանը: Իրականում նա կրոստից փրկել և տրպագրել է բարձրակարգ բանաստեղծություններ: Ճիշտ է նկատել Սամսոն Գասպարյանը, երբ 1961 թ. հրատարակված «Կոմիտաս. կյանքը, գործունելիքը» ստեղծագործությունը՝ աշխատասիրության «Խմբավարը, երգիշը, մանկավարժն ու պոետը» բաժնում գրում է, որ հրատարակությունը շնորհալի գործ է կատարել: «Արանց չափազանցության պետք է նկատել, որ Կոմիտասը պոեզիայի բնագավառում նույնական ինքնատիպ է, հնարամիտ, ջերմաշունչ և նորարար է տաղաչափական արվեստի մեջ: Այդ է վկայում նրա պատկերակից բանաստեղծական տողերի զարմանալի երաժշտականությունը, Կոմիտասի աշխարհիկ բնարական շերմ շունչը, որը բնուրագրում է նրա հոգումնալից ներքնաշխարհը, նրա կյանքի զգացողության թովչանը ու հրապուրանը» (1. էջ 200): Իսկ 1969 թվականին Կոմիտասի ծննդյան հարյուրամյակի առթիվ լոյս տեսած «Կոմիտաս. բանաստեղծություններ» ժողովածուի առաջարանի հեղինակ Լևոն Միրիշանյանը հակիրք վերլուծել է Կոմիտասի բանաստեղծական աշխարհը և կարևոր եղանակումներ արել. «Սերված լինելով ազգային-ժողովրդական մտածողությունից, ինչպես բոլոր՝ հողից, Կոմիտաս-բանաստեղծը Կոմիտաս-երգաստեղծի նման ափեափ լի է առողջ կենսազգացողությամբ: Դա նրան հետու է պահում որևէ որոշակի ստեղծագործական ազգեցությունից՝ միշտ մոտիկ թողնելով մայր ակունքներին» (2. էջ 9): Ժողովածուում առանձնացված է բանաստեղծությունների բովանդակության արամաբանությունն առանձին խորագրերով, ինչպես՝ «Բնու-

թյուն», «Սեր», «Խոհ», «Քնարերգ», «Գյուղերգ»: Ավելի ամրողական վերամշակված տարրերակ կարելի է համարել 2004-ին Աղյին Սորիկյանի կազմած «Կոմիտաս. Փշոր մը քնարերգություն» ժողովածուն՝ նվիրված Կոմիտաս վարդապետի ծննդյան 135-ամյակին: Այստեղ արդեն ամփոփված է նախորդ ժողովածուների, ինչպես նաև Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում հրատարակած բանաստեղծությունների, եւ Զարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասի ֆոնդի նյութերի հիման վրա եղած փորձը: Եվ, որպես նախարան, որոշ կրասումներով օգտագործել է Պարույր Սևակի «Դիմանկարի փոխարեն» հոդվածը, որն առաջին ամգամ լոյս է տեսել «Գրական թերթ»-ի 1969 թ. նոյեմբերի 21-ի համարում: Ա. Սորիկյանն իր վերլուծության մեջ արդարացիորեն նկատում է, որ «Կոմիտասը հայերին հայոց երգ ու նվազ տվեց...» (3. էջ 7): «Ինչպես Մաշտոցը՝ Կոմիտասն էլ «հերթական մնօնություն չէ մեր մշակույթի պատմության մեջ և այդ պատմության մատյանում չի զբաղեցնում մի դրվագ միայն: Նա միայն երգահան չէր, թմրուզ և դարագլխային՝ մի ամբողջ դպրոցի հիմնադիր... Նայելով այս բարձունիքից՝ Կոմիտասն չի կարելի համեմատել իր մեծ ժամանակակիցներից ու նախորդներից և ոչ մեկի հետ» (3. էջ 7): Այս ժողովածուում առանձնացված են հետևյալ շարքերը՝ «Ճանապարհ», «Գորով սեր», «Հոսուն-Խոսուն», «Օրհնություն», «Անմար սեր», «Քայոյակմեր», «Գրի խաղեր»:

Պետք է նկատել, որ կոմիտասյան բանաստեղծությունը շարժում մեղեղային շղթա հիշեցնող տերսու է, որը խոր աղերսներ ունի մեր միջնադարյան գրականության և հասլապես թումանյանի պոեզիայի մտածողության հետ: Բնուրյան նկարագրությունները սոսկ պատկերներ չեն, այլ՝ շարժուն համակարգ, կյանքի համակղմանի պատկերում: Զգացվում է աշխարհիկ կյանքի մասին նրա ունեցած գեղագիտական ընկալումը: Աշնան, զարման, սիրո, կյանքի թրթիռների պոեզիա, այսպես կարելի է բնուրագրել կոմիտասյան գիրը: Բանաստեղծ Կոմիտասի պատկերած բնուրյան, «օդը»

## Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

ամպերմ ու երկինքն են. նրանց հետ է իր գրուցը, նրանց հոգու արձագանքն է տիրում տողերի ենթատեղասում. «Տեղաց անձրև մաղ տալով, գոռաց երկինք, բոլոր արավ» (3. էջ 52): Եվ դրա հետևանքով էլ ծերուկ երկիրը առաջ է անում: Երբեմ մեր պոեզիայում այսպիսի պատկերներ չեն եղել, որպիսին Կոմիտասի բանաստեղծության մեջ կարելի է տեսնել: Բանաստեղծություններում ակնհայտ է բնարական հերոսի միայնակությունը, թախծի ու տիրության անընդհատական ներկայությունը: Նոյնիսկ թվում է՝ բանաստեղծը տողերի միջոցով «ազատազրություն» է նրանցից, որոնք կրնկակիու հետապնդում են.

Լուս, անտերունչ, խուլ, անմոռունչ՝ չորով-փորով  
կեօ ծառեր,

Ծոռվ-փոռվ լեռ քարեր, և հենավորի՝ ասրի կորին,  
ն մենավոր:

(4. էջ 201)

Տարվա բոլոր եղանակներն իր տեսադաշտում են, ան տեսնում է նրանց իրար մեջ, իսկ առանձին՝ մենավոր են: Ընդամենը մի քառյակում նա պատկերում է բոլորին.

Գարուն ցելավ ծաղկունիկ բացերով,  
Ամառն ելավ հասկունիկ ծոցերով,  
Աշունն առավ խատուտիկ քարերով,  
Ձմեռ պատավ պատուտիկ սառերով:

(4. էջ 31)

Սա նաև ծայնային պոեզիա է: Հեղեղը, գետը, հողի հառաջը, բնության ծնունդն իր կանչերով, թշունների երգով մեղեղային պոետիկայի դրսուրումներ են: Բանաստեղծության մեղեղային որովան դրսուրում կա այստեղ, որն էլ իր ենթաշերտեր ունի: Հնչյունները հետանում են, հետազայտում ծովալում իրար մեջ, քարձանում վերև և իջնում, դիստնան ծայներն ավելի աղմկու են դարձնում ասելիքը կամ հալչում այլ տարածքներում: «Կյանք» բանաստեղծությունը հենց դրա ապացույցըն է: Կոմիտասը նուրբ գեղագետ է, նորարար պատկերներին զույներ, շարժմանը տեմայ հաղորդելու, նոր բառեր գտնելու առումով.

Շառաչ, շառաչ, Սարեն հեղեղ բամելով,  
Գետը լցավ ու գալարեց,  
Սիրտը խցավ ու պալարեց, Ցելավ, ցելավ...

(4. էջ 17)

Հայտնի է, որ Կոմիտասը շրջել է զուլից զուլ, երգեր հավաքել, մոտիկից տեսել ժողովրդի կյանքը, ձանաչել հասարակ մարդուն: «Ժողովրդի դպրոցը բնական դպրոց է, ոչ արվեստական», - ասում էր նա (5. էջ 94): Կոմիտասի բանաստեղծական տերսություն շատ կարևոր տեղ են զրադեցնում կետադրական նշանները. դրանցով նա տրամադրություն է հասդրում, ավելի արտահայտիչ դարձնում քառի երաժշտականությունը: Հատկապես երկարացման նշանի օգնությամբ ասելիքի ավելի խոր շերտերն են երևում: Ամենակարևորը, սահման, նրա բանաստեղծական շղթայում շարժումն է: Շարժում և ծայնային տերսու, այսպես կարելի է անվանել կոմիտասյան խոսքը: Սիրային գործերն աչքի են ընկնում զգացմունքայնությամբ, թիվ բառերով շատ բան

ասելու հնարավորություն ունեմ, ինչն աղերսներ ունի Քուչակին վերագրվող հայրենների հետ: Սիրո հոյզի հետ եռացող երկնքի պատկերը երևում է մի քանի տեղ, աշխարհն ավելի զգացական է դարձնում, եթե սիրո հրաշտուններ են լսվում: «Ի՞ն երազում» բանաստեղծությունը սիրո հիմն է հիշեցնում, որտեղ տեսիլի և երազի միջոցով կառուցում է երևակայական բացարկ տարածք.

Ով այս գիշեր, իմ երազում քեզ հետ  
մեկտեղ պարեցինք,

Սեր-ոգիններ սուրբ սեղանում մեղրամուներ  
շարեցին

Ուկի-արծաթ ամպի ծալեն նուրբ ու բարակ

բող շարեցինք,

Ինձի-բեզի կարմիր-կանաչ սիրո շապիկ կարեցին: (4. էջ 38)

Կատարյալ է այստեղ գեղեցիկի զգացողությունը: Իրոք, ցնցող են երազայնության գեղագիտությունը, նրագոյն զույների խաղը և զգացմունքի առատությունը: Վերջինն ամենուր է սիրային գործերում: Երազում կատարվող իշխող է դառնում: Նորույթ կարելի է համարել երազում մեծ սիրո ծննդի նման պատկերը.

Եվ այս գիշեր, քո երազում, տեսել ես, որ ես ու դու Երես-երես ճանաչել ենք սիրո ծովում իրարու:

(4. էջ 38)

Սիրո ծով վիխարերությունը հենց Կոմիտասի տեղաստային զյուտն է: Սիրո գոյմերին միանում է բնության հերքը, որ երգ է դառնում: Իրականում կոմիտասյան տերսուն աներևույթ մեղեղի է, որը չի դադարում. ահազնանալու և ոիքմիկ տարրեր դրսուրումներ ունենալու հակում ունի: Սերը բանաստեղծի համար փրկություն է.

Քեզի սիրեւ՝ դրսախս երթալ  
ու վարդերով բնանալ:

(4. էջ 41)

Խոհափիլիխոփայական տաղերում զգացվում է բանաստեղծի տանջվող հոգին: Քնարական հերոսը դժվար ուղի է անցնում: «Սալահատակն ու ուղին» տարրում նա դարձալ թիվ բառերով մի ամբողջ կյանք է ներկայացնում: Եվ ինչ կյանք է դա՝ վիխարերական իմաստով սալահատակների վրա քայլածի, ով ծանր քարերի վրա է դարբնել կյանքը: Իհարկե, քանի այդպես էլ չի մացավ, թե ինչ դժվար էր մարդը կերտում իր կյանքը, բայց այդ դժվար կյանքն էլ քարի պես պնդացավ: Փաստուն, կոմիտասյան խոհերի գեղարվեստական խորը պայմանակրված է բովանդակության հարստությամբ և կատարյալ է գեղեցիկի զգացողությամբ: Դիմելով Աստծուն «Աղերս» բանաստեղծության մեջ՝ բողոքում է չարից, խնդրում հուր, որ «որպես խոտեր էլ չդողան իմ ուտեր» (4. էջ 58): Կոմիտասը գիտեր հայ միջնադարյան տաղերգուններին, կարդացել էր նրանց ստեղծագործությունը: Հովհաննես թումանյանի պոեզիայի հետ աղերսները պայմանակրված են Տիեզերին մոտ զգա-

Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի հ ն

լու հետաքրքիր իրականությամբ: Նաև երկուսն էլ իրենց պողպահայով մոտ են զուղաշխարհին. ցորեն, հասկեր, նոներ, գեղջկական կենցաղ: Եվ այս ամենը նա վրձնում է նկարչի աչքերով, որին ավելանում է նաև մեղեղին: Դիպուկ է թորոս Ազատյանի բնորոշումը բանաստեղծին. «Կոմիտասյան տաղերգություններն անձիգ ու իմքնելի բխումներ են գրեթե բոլորն ալ: Երբեմն քանի մը տողով հոգեկան հոգումի մը բարախումն պատկերը կու տայ ան: Իր ներշնչման տարրերը (ծառ, ծաղիկ, դալար, սար ու դաշտ, հունձք ու բերք, հով ու անձրև, շաղ ու անպ, լուսին ու երկինք) գիտ կենդանացնել, շունչ ու լեզու տայ անոնց, զանոնք խօսեցնել, անոնցմով ստեղծել դաշտ համանուազ մը, որուն վրային կը սահի կ'անցնի հետացոյ գեփիւր մը, քնրուշ թե բարախումներով, և այս բոլորին կը խառնուին յաճախ անանձնական սիրոյ սրտազրաւ մեղեղիներ» (6. էջ 72): Իսկապես, կոմիտասյան տաղերը մտքի խոր բափանցումներ են՝ ներքին ձևակառուցվածքով՝ բառերի մուավոր շրայնվ, հոգեբանական խորրով:

Կոմիտասն ունի մի բանաստեղծություն, որն աշխատանքի գոլը է և այդ:

Ելավ շինական՝ ցանեց առավ բուռոյ լի ցորեն.

Անցավ դաշտեն ու ձորեն, բարձավ տասը լիր

gnɒbə:

(4. t2 90)

«Նոճներ և մայրիներ» տաղը խորիմաստ է, այն իր մեջ խստացնում է փոխարերական մի քանի իմաստ: Այն, որ փորձում է առանձնացնել բնության ձայնը: Բարձրահասակ ծառն է քնարական հերոսը, որի տեսակը շատանում է, ասես պարում են քամու դիմաց: Եվ ճանապարհին են ծառերը: Նրանք հպարտ են և ձգուում են դեպի երկինք, բարձր, ավելի բարձր: Դա ձգուումն է դեպի կատարյալը, այն, ինչը մեծ երգահանք և բանաստեղծը փորձում էր իրականացնել ուսման, կրթական ծրագրերի փոփոխությունների միջոցով: Կարելի է մըտածել, որ Կոմիտասը կարող էր երաժշտություն գրել իր բանաստեղծության համար: Գուցե և չի հասցրել... Սակայն դա արեց մեր ժամանակների լավագույն երգիչ-երգահաններից մեկը՝ Վահան Արծունիի:

Անդրադարձով երգահան Արծրունու «Կոմիտաս. տասը հայտնություն» երաժշտական շարքին՝ մեզանում առաջին անգամ պետք է փորձեմ համեմատել բանաստեղծության և մեղեդու փոխկապակցվածությունը։ Առաջին հերթին նկատելի է հարազատությունը կոմիտասյան բնագրին։ Երգահանը մեղեդու միջոցով ար-

տահայտել է Կոմիտասի կյանքի ողբերգական՝ 1915 թվականի դեպքերի արձագանքը նրա հոգևոր աշխարհում: Չարմանալի է, բայց ակնրախ, որ ինչպես և կոմիտասյան բանսատեղծությունը, Արծունու երաժշտությունը նոյնպես լավատեսարժյամք է տողորված: ամենակարևորը, պահպանված է երաժշտության մեջ հոյսի հոգևոր զարափարը: Կոմիտասյան տեսատի հնչյունային պոետիկան այստեղ բացվում է հոգեպարար հունով: Այսպիսով ատելեցվում է անվերջանալի հոգևոր տարածություն, որի մեջ խառնվում են հայկական մոտածողության մերելային նրբերանգները: Կոմիտասի բանսատեղծությունների լուսի շրեղությունն այստեղ ակնհայտ է: Նաև պահպանված է բովանդակության ներքին դիմամիկան, որը հիշեցնում է միջնադարյան տաղ և այդ գրելանձի փոխանցումը XXI դարի մարդու մտապատկերում: Մեղեդու կայացմանը նպաստում է լարային գործիքների, և հատկապես փայտյա փողայինների համարումը: Մեղեդային գիծը թույլ է տալիս այն հնչեցնել նվազախմբային ցանկացած կազմի համար: Այս առումով կոմիտասյան պոեզիան և Արծունու երաժշտությունը մեղեդուն ամեն անգամ փոփոխվելու հնարավորություն է տալիս՝ ինչ-որ տեղ դարձնալ ճկուն կերտվածքը: Սակայն Վահան Արծունու «Հայտնություն» շարքի մեջ մտնող հատկածները տարբերվում են միմյանցից՝ պահպանելով սակայն հիմնական պայմանը՝ ազգային գոյների համապարփակությունը: «Սալահատակն ու ուղին». բովանդակության խորությունն արտահայտվում է (Andante) տեմպով, որը նպաստում է հիշեցնելու միջանակ մարդու բարդ և դրամատիկ անգումային կանոնու լուսի ներկայությունը:

«Իրեն զարդ» մեղեղին, հատկապես ձայնի հնչողականությունը առաջարկություն է լինելու համար: Այս գործությունը միշտ աղքաղաց տաղ է հիշեցնում: Զգացվում է մտքի և հոգու վեհությունը, դեպի լուսն ընթացող դժվարին ճանապարհը և հորդորը: «Ճրագ առ, Պահե վառ» (4. Էջ 48) նաև անսպաս սիրո զովքն իրեն զարդ, իրեն սրտի հուսառու: «Պատրաճը» բանաստեղծությունը, որն ընդամենը վեց տողից է բաղկացած, ոչ միայն կենազրական է, հոգու և թիթեռի նմանեցումը, հույսով վեր ու վար թռչելը, իրեն բեռ զգալը, սակայն թիթեռն ինչպես կարող է բեռ լինել: Եվ վերջում հույսը չկորցնելը լավատեսություն է հաղորդում ամրող բանաստեղծությանը: Մի կյանքի պատմություն, ընդամենը վեց տողով: Մեղեղին լարուն է, լարային գործիքների արկված նյարդերն ասես չեմ դիմանում թիթեռի «հոգնոր բերին», հստակ զգացվում է նրա վեր ու վար թռչելը, ամենակարևորը՝ լուսը նորից վետվետում է մեղեղու բոլոր ծալքերում:

Հինգ տող է «Բաղձանք» տաղը: Նրա ասելիքի խրտությունը փոխանցվում է մեղեդուն: Ամբողջ խոսքը՝ մեղեդուն ծավալուն և երկար տևողություն ունեցող հընչություններով, իր մեջ կրում է մեծ խտանյութ, որքերորդականների սահման անցումներով և մեղքմատիկ դրսեռություններով միտքը հասնում է նոր՝ լուսի ավելի խոշոր տարածության և հանգրվանում այստեղ: Վերջին երկու տողը. «Տնիր իմ հիւկի, թոշեմ երթամ» (4. Էջ 78) խորհրդանշական եղավ Կոմիտասի կանոնում:

Արծունին խորապես ըմբռնել է Կոմիտասի բանա-

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

ստեղծական խորի ասելիքը: Ահա, «Ճանապարհ» տաղը: Լավատեսական իմբերով այս գործը կյանքի զովքն է, որը պատմում է Անհունի մասին, ինչի մասին միշտ զրել է Թումանյանը: Ճանապարհի թեման անբարդ է, որն իր ստեղծագործության ատաղձ է դարձրել նաև Կոմիտասը: Կյանքի ծառը՝ անսկիզը, տերևներով, որ առատորեն բաշխում է կյանք՝ դառնապով լավատեսության խորհրդանիշը: Այսպիսով, մեծ հարազատություն կարելի է տեսնել Կոմիտասի առեղջայի և Արծրունու երաժշտության միջև: Եթե ամփոփեն ասելիքը, ապա պիտի առանձնացնեն այդ հարազատության հիմնական կետերը: Առաջինը լավատեսությունն է: Ահա հենց սա է ամենաշատը միավորում այս երկու տեքստերը: Երկրորդ հարազատությունը շարժումն է՝ կենացնի ու կենացի: Մերեկին, որ նույնական խոր է, տեմպ այսի ունենա, և հետաքրքիր է, որ հենց սա նույնական հաշովվել է ստանալ:

Ամփոփելով արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ Կոմիտասի քնարերգությունն ուսումնասիրման պետք ունի: Տաղաչափական դրսուրումները, ոիրմը, բովանդակությունը, բառերի և հնչյունների երաժշտա-

կանությունը, բառապաշարը, լավատեսությունը և դեպի լույս տանող հետազիծը ցույց են տալիս բարձր արժեք կրող բանաստեղծական տարածք, ինչի իր երաժշտությամբ մանրանասնորեն արտացոլել է երգահան Վահան Արծրունին:

## **ՄԱՆՈԹ-ԱԳՐՈՒԹ-ՑՈՒՆ**

1. Կոմիտաս, Բանաստեղծություններ, Եր., 1969 թ.: *Komitas.*, Banastehtsuthyunner., Yer., 1969 th.
2. Գասպարյան Ս., Կոմիտաս. կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը, Եր., Հայպետհրատ, 1961 թ.: *Gasparyan S.*, Komitas. kyanq', gortsuneuthyun', stehtsagortsuthyun', Yer., Haypetrat., 1961 th.
3. Կոմիտաս, Փշոր մը քնարերգություն, Եր., 2004 թ.: *Komitas.*, Pshur m' qnarerguthyun., Yer., 2004 th.
4. Բրուտյան Յ. Գ., Կոմիտաս, Եր., Հայստան, 1969 թ.: *Brutyan Tz. G.*, Komitas., Yer., Hayastan., 1969 th.:
5. /Կոմիտաս վարդապետ մատենագիտական ժողովածու, Երևան, 2013 թ.: *Komitas vardapet, (matenagitakan zhogovatsu)*, Yer., 2013 th.

**Բանալի-բառեր.** Կոմիտաս, բանաստեղծություն, ոիրմ, քնարերգություն, Վահան Արծրունի, հայտնություն, շարք:

**Ключевые слова:** Комитас, стихи, ритм, лирическая поэзия, Вахан Арцруни, откровение, цикл.

**Keywords:** Komitas, poetry, rhythm, lyrical poetry, Vahan Artsruni, revelation, cycle.

**Տիտելություններ հեղինակի մասին.** ԱՆԻ ԱՍԱՏՈՒՐԻ ՓԱԾԱՅԱՅՆ, գրականագետ, խմբագիր, լրագրող, բանասիրական գիտությունների թեկնածու (2007 թ.), ԱՄՆ-ի հայ գրողների միուրիյան պատվագոր անդամ, Հանրային խորհրդի մշակույթի ենթահանձնաժողովի անդամ: Ավարտել է Երևանի Հ. Մարտոսյանի անվ. միջնակարգ դպրոցը, Ա. Քարաչանյանի անվ. երաժշտամանկավարժական ուսումնարամի դաշնամուրային քամբնը, 1994-ին ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, ասպիրանտուրայի ինզիգրանտուրային քամբնը: “Դասավանդում է՝ 1995-ից Միիրար Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի և բժշկական տերմինարանուրիյան ամբիոնում՝ որպես ավագ դասախոս, 2002-ից Հայ-Ռուսական (Սալվոնական) համալսարանի հայագիտության ամբիոնի դրույն: 2007-ին ԳԱԱՍ Սանտկ Արքունական անվ. գրականության ինստիտուտում պաշտպանել է գիտական ասենախտություն՝ ‘Աղասի Այվազյանի արձակի արվեստը’ թեմայով, ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Հեղինակը՝ մենագործության «Գիտության և ոգու ասվելու» (Էմիլ Գարենյանը), Եր., 2004 թ., - 410 էջ, մերժական աշխատանքի «Գործական աշխատանքներ հայոց լեզվից» (Մ. Հերացու ԵՊՀՀ), Եր., 2000, 17 էջ, 10-ից ավելի գրտական հեղինական աշխատանքածանության մեջ: Այվազյանի ստեղծագործություններին, ինչպես նաև լեզվաբանության տարրեր բաժիններին: Հանդես է մանուկում՝ ‘Հանդես Երևանի համալսարանի’, «Նոր-Դար», «Նորոր», «Կանքեղ», «Անդին» գրական ամսագրերում, ‘Գրական թերություն», «Ազգ» օրաթերթում: Կազմել և խմբագրել է 30-ից ավելի գեղարվեստական և գիտական գրքեր, բանաստեղծական ժողովածուներ, վեպեր, զրել գեղարվեստական գրքերի առաջարանական համարանքներ, խմբագրել է 7 հատորից բաղկացած «Գրականի երգարանը»: 2000-ից Ա. Այվազյանի երկերն ուսումնասիրություն: Խմբագրել է գրողի «Խորի խորությունը» գիրքը, իսկ 2007-ից՝ որպես Աղասի Այվազյան հիմնադրամի անդամ և մասնագետ կազմակերպել է ‘Այվազյանական ընթերցումները’ միջոցառությունները: 2 անգամ մասնակցել է կազմակերպելու ‘Այվազյանական դրամատուրգիական փառատոմներ’ միաժամանակ կազմելով և խմբագրելով շորոշ 3 տասնյակ ժողովածուներ: 2015-2019 թթ. «ՀՀՄ» ուսանուկայանով վարել է «Գրական ընտրանի», 2019 թ. մայիսից՝ ‘Նոյան տապահան’-ում վարում է ‘Երկուոր՝ հեղինակ որոնելին’ հեղինակային հաղորդաշարերը: Սասանացել է 4 տասնյակից ավելի և միջազգային համապետական 15-ից ավելի գիտաժողովների գեկուցումներում: Սասանացիտական հարրակներում և մանդուրմ տպագրվել է արդի հայ գրականության հիմնախիլիների մասին հրապարակումներում, հեղինակ է բազմաթիվ ակադեմիական հետազոտությունների: Նոր ուղի է բացել այլազանագիտական ուսումնասիրություններում: Տես՝ Վիկիպեդիայում Անի Փաշայան: Դրսման օրը 4.04.2020 թ. Ժամը 23.15:

**Сведения об авторе:** ПАШАЯН АНИ АСАТУРОВНА - литературовед, критик, редактор, журналист, кандидат филологических наук (2007), почетный член Союза армянских писателей США, член подкомитета по культуре Общественного совета, доцент, заведующая кафедрой армянского языка и литературы Российской-Армянского университета. Окончила: фортепианное отделение Музыкально-педагогического училища им. А. Бабаджаняна, филологический факультет Госуниверситета (1994), аспирантуру по лингвистике. Работает: с 1995 года на кафедре армянского языка и медицинской терминологии Ереванского государственного медицинского университета им. Мхитара Гераци (Ереван) в должности старшего преподавателя; с 2002 года является доцентом кафедры арменоведения Армяно-Русского (Славянского) университета. В 2007 году защитила диссертацию “Искусство прозы Агаси Айвазяна” в Институте литературы им. М. Абегяна НАН РА, получив степень кандидата филологических наук. Автор монографии “Рыцарь духа науки”, посвященную жизни и деятельности академика, об-

## Կ ո մի տաս վարդապետի ծննդյան 150 -ամյակի հա

щественного деятеля Эмиля Габриеляна (2004); научных статей по теоретическим вопросам, проблемам современной литературы, а также лингвистике. Участвовала во многих международных конференциях, составитель и редактор более 30 художественных и научных книг, сборников стихов, романов, автор предисловий к художественным книгам. Принимала участие в международных и республиканских конференциях по вопросам современной армянской литературы. Принимала участие в более чем 40 международных и республиканских конференциях по вопросам современной армянской литературы.

**Information about an author:** PASHAYAN ANI ASATUR, literary scholar, editor, journalist, Ph.D. in Philology (2007), honorary member of the Armenian Writers Association of the USA, member of the Sub-committee on Culture of the Public Council of the RA (Yerevan). A. Pashayan has graduated from A. Babajanyan Music College and completed post-graduate studies in the Faculty of Philology in YSU in 1994. She is a senior lecturer at the Department of Armenian Language and Medical Terminology at the Mkhitar Heratsi State Medical University. Since 2002 A. Pashayan is a Docent at the Russian-Armenian (Slavonic) University, Department of Armenology. In 2007 she defended the thesis "Aghasi Ayvazyan's prose" for the Ph.D. in Philology. A. Pashayan is the author of "The Knight of Science and Spirit" monograph about the life and work of Emil Gabrielyan, academician and public figure. A. Pashayan's research activity is focused on theoretical issues in literature, particularly on the problems in contemporary literature, and the works of Aghasi Ayvazyan along with the different linguistic aspects. Her research articles are published in the daily press, mainly in the "Journal of Yerevan State University", as well as in "Nor Dar", "Nork", "Kantegh", "Andin" literary magazines, and "Grakan Tert" and "Azg" newspapers. A. Pashayan has participated in numerous international scientific conferences. She is the editor of more than thirty scientific and fiction books, poetry collections, and novels, and the author of introductions to several fiction books. She is also the editor of the seven-volume "Pocket Songbook". Since 2000 she has been studying the works of A. Ayvazyan, specifically of his prose. She has been a lecturer at numerous Armenian and international and scientific conferences. A. Pashayan is the author of numerous publications reviewing the problems of modern Armenian literature, published on various professional platforms, as well as of numerous academic studies. Most of her research is devoted to the problems of contemporary Armenian literature. A. Pashayan has opened new avenues in the study of A. Ayvazyan's works. (See: [https://hy.wikipedia.org/wiki/...](https://hy.wikipedia.org/wiki/))

### ***Резюме***

Литературный критик, редактор, кандидат филологических наук, доцент РАУ Ани Асатуровна Пашаян. - “Стихотворения Комитаса и цикл “Комитас: Десять откровений” Ваана Арцруни”.

Впервые в научный оборот введено изучение поэзии Комитаса с точки зрения философского содержания. Подводя итоги, можно сделать вывод, что лирической поэзии Комитаса присущи нужно изучать. симметричные выражения, ритм, содержание, музыкальность слов и звуков, словарный запас, оптимизм и траектория, ведущая к свету, показывают поэтическую область высокой ценности, которую отобразил композитор Ваан Арцруни в цикле “Комитас: Десять откровений”.

### ***Summary***

Literary scholar, editor, Ph.D. in Philology, Docent at the Russian-Armenian (Slavonic) University Ani Asatur Pashayan. - “Komitas' Poetry and Komitas. Ten Revelations” by Vahan Artsruni”.

The study of Komitas' poetry is being for the first time introduced into the scientific circulation, as works noted for their profound philosophical significance. In summary, it should be concluded that the lyric poetry of Komitas requires further study. Its symmetrical expressions, its rhythm, and content, the musicality of words and sounds, its vocabulary, as well as the optimism and the trajectory leading into the light, show a poetic area of the highest value, and they were thoroughly reflected by Vahan Artsruni in his “Komitas. Ten Revelations” Cycle.

**Քանինահարուիի, Ժունալիստ, մանկավարժ**  
E-mail: anush.00000@gmail.com

իվանցիուս և առաջնահարաբեկ պատկերացները գոյացնելու մասին առաջարկ է առաջ բերելու համար առաջարկ է առաջ բերելու համար

ՀՈՒՅԱՒ ՈՒ ՀԱՎԵՐԺԻ ԱՆՎԵՐՁԱՆԱԼԻ ՃԱՆԱՊԱՐՀ

**Պ**ունեղ է մանկությունն ու քաղցրահուշ: Մանկության հուշապատճեանից չի հեռանում Հովհաննես Թումանյանի խը- ճանկար պատկերը: Դպրոցին ճամփեն Դերենի ձախ ափին էր, իսկ նրա խճանկար պատկերն աջ ափի քա- րափին... Կյանքին ողջ ընթացքին նա ողեկցեց ինձ: Նա՝ փորբաթիվ հայ ժողովրդի էն հանճարներից է, որոնց հարատևության ճանապարհին դեռ շատ դարեր կհայվեն:

Որքան խորացան նրա գրական ժառանգության, հրապարակախոսությունների, գրախոսությունների, նաև կենսագրության մեջ, այնքան հասկացա, որ նրա կերպարը համեմեղով անբնդիատ բարձրանում է բոլորից ու նաև անձականից, և զնում այն բարձրյալն ու անքըննելին, ով նրան այնքան շայլորեն պարզել է. այս միտքն ինքն էլ է հաստատում իր բարյակներում.

Իմ կնումքին երկինքը՝ ժամ, արկօ՛ ջահ սպրազան,  
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան  
Սերը եղավ կրնքահայրը, ցողը՝ մյուռոն կենասկետ  
Ու կրնքողը նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ այնետ

(1, t<sub>9</sub> 55);

Թումանյան հանձարի տեսակն աճովիճելիորեն ուղղակի եզակի պարզեց է մեր հոգևոր գանձարանին: Իսկ իր գրչակցի՝ մեծն Ավետիք Բասհակյանի բնութագրումն առավել քան դիպուկ է արժևորել նրան. «Թումանյանն անհաս գազարին է մեր քերթության»: Փիլիսոփա-բանաստեղծը «մարտահրավեր» նետելով Թումանյանի փոխարեն, կարծեն նրա ամուսից ասել է, թե դուք արդեն ունեք այն անհասանելի գազարը, որին պիտի ձգտեք:

Հեղու խնդիր չի դրված գրչակիր սերունդների առաջ, բայց փոխարենն անհատնում գրական ժառանգությունն է քողնված: Մեծ բանաստեղծն ու մտածողն առանձնակի հոգատարությամբ, սիրով, նվիրվածությամբ է բափանցել հայ մարդու հոգու խորքերը, ցալացել ու ապրել է գրուի աշխատավորի կյանքով, դժվարություններն իր վրա զգալով ու երթեմն էլ անձնապես կրելով:



Դուշանես  
Թումանյան  
Ալավերդի,  
Խճանկար,  
1969 թ.

Դրա շնորհիվ շատ տիպիկ և բնական է կերպարել իր ժողովրդին՝ որպես բնության մի անքակտելի մասնիկ։ Իսկ նրա բնության նկարագրությունը զարմանալի պատկերավոր է և կենացնի այնքան, որ շնչավոր կերպարի է նմանվում։ Էստեղ մտքի թռիչքը բավարար չէ։ Անչափ սիրո արտահայտություն է սա, հարազատ զույգի, հող հայրենիի նկատմամբ։ Որդիական սիրով սովորված Թումանյան-բանաստեղծի ցանկությունը Հայրենիքի ցավը կիսելն է, նրան օգտակար լինելը, ինչի համար էլ խորհուրդ է անում բնության հետ։

**Սեր գյուղա էն է, որ հպատակ,  
Լեռների մեջ ծիգապատ,  
Խոր ծորերի քարափին՝  
Զերը տված ծակատին՝  
Միտր է անում տիսրադեմ  
Ի՞նչ է ուզում զգիտեմ ...**

(2. tđ 89):

Անկեղծ ասած, զրիշ վերցնելու պատճառը բոլոր-վին Թումանյանին լուսաբանելը չէր, բայց որ նրան միշտ կարդալ ու հիշել պետք է, դա փաստ է: Չնայած մյուս կողմից Հովհաննես Թումանյանի թեկուոց գրականությանը ծանորանալու հետո, հնարավոր չէ մոռանալ նրան, քանզի այն դառնում է միևնույն արյուն, պարզապես սեփականություն: Ինքնանահպողության դասեր է տալիս մեծ մտածողը՝ հիշեցնելով հայ մարդու ազնիվ

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ,  
Ծովինար Հրայրի Մըլքիսյան՝ 15.2.2020 թ.,  
գրախու՝ 22.12.2019 թ. ընդունվել է տպագործական՝ 2.3.2020 թ.,  
ներկայացրել է հեղինակը՝ 20.12.2019 թ.

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն



Յովհաննես Թումանյան,  
Կոմիտաս,  
Դրվագ  
«Վերջատուն»  
լուսանկարից

Կերպարի, աշխատասիրության, իր տեսակին տեր կանգնելու և ավանդապաշտ լինելու մասին, ինչ համար էլ հայ ժողովուրդը մշտապես պայքարի մեջ է եղել: Ինչեւ, ցանկությունս է մի պահ ցուց տալ զարմանալիութեն համբնկուղ այն գուգահեռները թե՝ ինչ է ասրել նա իր ժամանակին, կրկնվում է և հիմա:

Հայոց մոտս խոշոր մտածող ու քանաստեղծ Պարույր Սևակի միշտ արդիական ու տեղին խոսքերը հիշեցի, որի առաջին տողը շատ «սազում» է Թումանյան մարդուն ու քանաստեղծին: «Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում»:

Այս իմաստով տեղին է Ավետիք Խսահակյանին ուղղած Թումանյանի հայտնի նամակը, որտեղ բացահայտ է նրա խոր ցավն ու անհանգստությունը Հայրենիքի ճակատագրի նկատմամբ, ավելին՝ նա հանճարեղութեն նկատում է, գուշակում քաղաքական աշխարհում տեղի ունեցող կործանարար «խաղերը», «տերերի» անխիճ ու անքարո վարքագիծը: Ղարսի պատերազմում հող հայրենիքն նվիրաքերած նրա երկու տղաների կյանքերը, մի շաբթ հոդվածներում ու նամակներում արտահայտած իր որոշակի մտահոգությունները, նրա ազգանվեր գործերն ու շատ այլ վկայություններ, վատ ապացույցն են այն բանի, որ Մեծ լորեցին ամեն կերպ մասնակից է եղել յոր ժողովուրդի համար ճակատագրական իրադարձություններին, իսկ հանճարեղ գրիշը դրանց լավագույն նկարագրողն է.

Ինչքա՞ն ցավ եմ տեսել ես,  
Նենգ ու դավ եմ տեսել ես,  
Տարել ներել ու սիրել,-  
Կատը՝ լավ եմ տեսել ես:

(2. էջ 72)

Սակայն դառը ճակատագիրն ու ծանր կյանքը պոետի մարդ տեսակին չկարծրացրին: Այդքան քնարական ու երգեցիկ պոեզիան, նրա նրանուր, զգայուն հոգու թրիխների արտացոլանքն էր, որը կարծես իր ուրուն միաձուլումը գտավ քանաստեղծի «Աս ինչ լավ են, ասարի վրա» երգ-քանաստեղծության մեջ: Սա թերևս միակ երգն է, որի բառերի ու երաժշտության հեղինակն է նա: Բառերի ու երաժշտության կատարյալ համադրությունը զեփյուրի նուրբ շոյանք է հիշեցնում, իսկ երաժշտության այսրան հայեցի ու դասական լինելը ուղղակիորեն զարմացնում է: Երաժշտությամբ շաղախված մի ամբողջ աշխարհ է կրել իր մեջ բանաստեղծը, որտեղ ամ-

պայմանորեն իր մտերիմ բարեկամի՝ Կոմիտասի դերակատարումը կար նաև: Այս երկու գերհանճարների ստեղծագործ մտքի միաձուլումը՝ «Անուշ» պոեմն օպերայի վերածելու Կոմիտասի մեծ երազանքի իրականացումը կլիներ, որը հաստատ հայ երաժշտարվեստին մի նոր փայլատակում կտար, ինչը ցավոր չիրականացավ...

Հայ գրականության ու երաժշտարվեստի մեծագույն վարպետների սիրտն ու զրիչը համահունց էին հային բաժին հասած այդօրյա դառն իրականության հետ, ավելին, նրանք ուղղակիորեն կրողն էին ու բախտակիցն ազգի ճակատագրի:

Ստեղծագործական կյանքի ու հետաքրքրությունների առումնով որքան հեռու, նոյնքան էլ մոտ են Կոմիտասի և Թումանյանի ուղիները: Իր պատճառն ու հետեւանքն ունի, որ մանկության հուշապատումի մեջ Կոմիտաս վարդապետի կերպարը մշուշու է եղել, ինչն ուղղակիորեն կապված է խորհրդային շրջանում պատմական որոշ շերտերի լուսարձնան արգելքի՝ դասագրքերում Վարդապետի կենսագրության այնքանով-որքանով լուսարձնան հետ: Այդ բացը լրացրեցին հետազա տարիներին ինքնուրույն տուսմասիրություններին բացահայտումները: Արդյունքում՝ դարձա Կոմիտասի երաժշտության ու պոեզիայի վարդապետության «գերին» ու նրան էլ Թումանյանի հետ միասին պահեցի հոգուն մեջ, որպես զոյլության անհրաժեշտության մի մաս:

Երբեմն միտք եմ անում. ինչ երանելի վայելք կլիներ երկու սրտացավ հանճարների գոյության վկան լինել, սակայն այս հետահար ցանկությունը խորհեղու տեղիք է տալիս: Ծանր ու դժվարին կյանք են ապրել նրանք, ոչ միայն ակամայից այդ ժամանակի ծնունդը լինելու պատճառով, այլև սեփական զաղափարական մտածողության ու իրենց պատկանելության խորը զիտակցման հետևանքով: Կարծում եմ, ժամանակն է ձերքազատվելու խորհրդային զաղափարախտությունների ներք նրանց մելանխոլիկ ու տխոր ներկայացված լինելու միտումից: Սրա ճիշտ պատասխանը մեկն է. ժամանակաշրջանն իհարկե իր ազդեցությունն է ունեցել այսօրինակ հանճարների վրա և իր հորձանուտում «մսադացի» նման փշրել առանց այն էլ նրանց մորմորող սրտերը, սրտեր՝ որ բարախել են սերունդների համար, որ երազանքների օվկիանոսում երջանկություն ու վայելք են զգացել ամենափոք հաջողությունից, որ մանկան զուգությամբ ու հանճարի զիտակցությամբ լի ժառանգություն են թողել: Սակայն, այսօրինակ Մեծերի ստեղծագործությունների մեջ ոչ միտումնավոր տիրության կարմիր հետագիծ դիտնան չէ, այլ իրականության խորն արտացոլում: Հանճարներ կան, ովքեր աշխարհ են զայիս պատմության խորհուրասներից և ի վերուս լուսավորված հոգով, անմար կանթեղի նման ուղի են հարթում դեպի ժամանակի հեռուները:

Երբ խորանում ես նրանց կյանքի մանրամասների մեջ, ուսումնասիրում ժամանակակից մեծերի հետ նրանց նամակագրական կապերն ու ստեղծագործական ժառանգությունը, ընթերցում կարծիքներ նրանց մասին, ակնհայտ է դառնում, որ նրանք կենսասեր ու

## Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

կեմսախինդ, վառ երևակայության տեր ու հումորով, լուսավոր աճահնք են եղել: Այս միտքն ավելի շատ առնչվում է Կոմիտասի հետ, ոմ կենապրությունը հանրային գործությունը է նրա կյանքի դժուս չբացահայտված էջերի ոչ ճիշտ փաստագրմամբ:

Ճիշտ ադամամութիք էր նման նրանց կյանքը, սակայն նրանք չխարիսխափեցին, այլ ապրեցին արևածագի հավասով, ավաղ, որը մի նոր փայլատակում կարող էր տալ նրանց աստղային մտքին: Այս երկու հայ հանճարենի ստեղծագործական կյանքի համադրման իիմքում ընկած է նրանց զգացականությունը, որն է՝ երաժշտությունը պոեզիայում և պոեզիան երաժշտության մեջ: Ինչպես Թումանյանի պոետիկ հանգավորումներից երաժշտություն է հնչում, նույնպիսի հմայքով Կոմիտասի երաժշտությունից պոեզիայի շրմչն է եղում: Այլ կերպ ասած երաժշտությունն ու պոեզիան նրանց արարի աներևույթ միասնությունն են ու անթարույց արտահայտություններ:

Բազմած լուսնի նուրբ շողերին,  
Շովի թկին թռչելով՝  
Փերիները սարի գլխին  
Շավարփեցին գիշերով...

(3. էջ 120)

«Անուշ» պոեմ, Նախերգամք  
Յովզելսես Թումանյան

Եվ այս գիշեր, իմ երազում քեզ հետ մեկտեղ պարեցինք,  
Սեր-հոգիներ սուրբ սեղանում մեղրամոմեր շարեցին...

(4. էջ 71)  
«Իմ երազում» բանաստեղծություն  
ԿՈՄԻՏԱՍ

Հանգավորման ինչպիսի նմանություն, մտքի ինչպիսի թարմություն է բուրում նրանց պոեզիայից: Ահա այսպիսին է նրանց սերը՝ տիեզերական ու անաղարտ, սիրառատ ու քերու իրենց սրտերի նման: Նրանք զարմացնում են իրենց հանճարեղ պարզությամբ, կրկին վերահստեղով, որ ամեն հանճարեղ բան պարզ է իր բնույթով, բայց ոչ էությամբ ու նշանակությամբ: Սակայն, երաժիշտ և պոետ Կոմիտասն առավել մտածելու տեղիք է տալիս, թե ինչպես՝ ապրելով օտար միջավայրում, կարողացավ թափանցել հայոց բառ ու բանի խորքերը, ոչ միայն վեր հանեց նոր բառեր, այլև սուեղծեց իրենը:

Կոմիտաս-Թումանյան ժամանակակից հանճարներ

**Բանայի-բառեր.** Հովհաննես Թումանյան, տիեզերական սեր, Կոմիտաս վարդապետ, Դեբեդ, Վայոց մեծ բանաստեղծ, «Անուշ» օպերա, Կարսկա Յանձնություն, Ավետիկ Իսահակյան, Պարույր Սևակ, գեղագետ, աղամանոր, Լոյսի ու Հավերժի ճանապարհ:

**Ключевые слова:** Ованес Туманян, Вселенская любовь, Комитас Архимандрит, Дебед, Великий армянский поэт, опера "Ануш", Карская война, Аветик Исаакян, Парууйр Севак, эстетик, красота и вечность.

**Keywords:** Hovhannes Tumanyan, cosmic love, vardapet Komitas, Debed, great Armenian poet, "Anush" opera, the Battle of Kars, Avetik Isahakyan, Paruyr Sevak, aesthete, darkness, road to Light and Eternity.

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

**Տեղեկություններ հեղինակի մասին.** Կիրակոսյան Անոշ ՄԵՍՐՈՎՈՎԻ [ծ. 14.12.1957 թ., ք. Ալավերդի (Լոռու մարզ, ՀՀ)]: Մենակատար քանոնահար, ժողովադատ, ԵՊԿ դասախոս: Հեղինակ է քանոն նվազարանի չորս դասագրքերի՝ «Անմար գոհարմեր» գիրք 1-ին (իրատ. 2005 թ.), Գիրք 2-րդ (Եր., 2010 թ.), «Փոխադրումներ քանոնի համար» գիրք 3-րդ (2010 թ.), «Խաչատուր Ներսիսյանի կոնցերտային պիեսները քանոնի համար» (2010 թ.), մի շաբաթ հողվածների՝ «Նրան էլ են փորձում յուրացնել» (հակիմ տարրերակ //Ավանապի, 8-14 ապրիլ 2009 թ.), «Բարեկամությունը ծննդում է ժամանակից», //Երաժշտական Հայաստան, ամսագիր, 1-3 (44-45) 2013 թ.], «Արմին Պողոսյան. կոչումով մանկավարդ», //Երամիշտ ամսաթերթ, ապրիլ 2013 թ., «...Խոկ քարեկամությունը շարունակվում է», //Հայաստան, շարաբարեր 13-20 դեկտեմբերի 2012 թ., «Երջանկուրյունը թերե է տալիս, հայրենափորյունն արժանապատվորյան զգացում», //Երաժշտական Հայաստան, ամսագիր: Ունի հողվածներ նաև «Հայ զինվոր», ՀՀ ՊՆ պաշտոնաթերթում, «Սարտիկ» Արցախի Հաճրապետուրյան պաշտոնաթերթում, Քեյրուրի (Լիքանան) «Խօսնակ» ամսաթերթում և այլ. Աշխատել է որպես քանոնահարութիւն՝ 1979–1983 թթ. Արմավիրի (Հոկտեմբերյան) շրանի Զերժինսկու անվ. սովորությունից երաժշտական դպրոցում, 1980–1986 թթ. Հայաստանի Թ. Արումյանի անվ. Երգի-պարի պետ. անսամբլում, 1986–1987 թթ. Հայաստանի Գուսանական պետ. անսամբլում, 1990–1991 թթ. Հայաստանի Պարի պետական անսամբլում, 1993–2001 թթ. ՀՀ ոպերիենուստատեսուրյան Ա. Սերանգովյանի անվ. Ժողովրդական գործիքների անսամբլում, 1994–1997 թթ. Դեկանական կուսական գործիքների բաժնի վարիչ, վարուս է քանոնի դասարանը: 2019-ից մինչև այժմ Ա. Բարաջանյանի երաժշտական դպրոցում՝ ժողովրդական գործիքների բաժնի վարիչ, վարուս է քանոնի դասարանը: Ունի հողվածներ նաև «Հայ զինվոր», ՀՀ ՊՆ պաշտոնաթերթում է մանկավարժական պարագիւկա:

**Сведения об авторе:** КИРАКОСЯН АНУШ МЕСРОПОВНА (род. 14.12.1957, г. Алаверди, Лорийский р-н, РА), солистка – канонистка, педагог ЕГК. Автор четырех учебников для канона: “Анмар гоарнер”, ч. 1 (2005), часть 2 (2010); “Переложения для канона”, 3-я книга (2010); “Концертные пьесы для канона Хачатура Нерсисяна” (2010). Автор ряда статей: “Его тоже хотят присвоить” (краткая версия //Авангард 8-14 апреля 2009 г., “Дружба рождается с улыбкой” //Музыкальная Армения 1-3 (44-45) 2013 г., “Армине Погосян. педагог по призванию” //Музыкант, апрель 2013 г.), “...А дружба продолжается” //Еженедельник Айасстан, 13-20 декабря 2012 г. и другие. Печатается в газетах “Еражишт”, “Ай зинвօր”, “Мартик”, в журналах “Музыкальная Армения”; “Хоснак”, Бейрут (Ливан). Работала: с 1979 по 1983 в музыкальной школе Дзержинского союзхоза Армавирского р-на; с 1980 по 1986 – в Гос. заслуженном ансамбле песни и танца Армении им. Т. Алтуняна; Работала в Ансамбле народных инструментов им. А. Мерангulyana Гостелерадио Армении(1993-2001), канонистка и руковоодитель Ансамбля народных инструментов Ереванского особого полка (1994-1997). Преподавала: в Госконсерватории им. Комитаса (1990 -2009); зав.отделением народных инструментов, педагог по классу канона в ДМШ им. К. Сараджяна (с 2009 по сей день), ведет педагогическую практику в Муз-пед. колледже им.А.Бабаджаняна (с 2019 по сей день); с 1986 по 1987 - в Гос. гусанском ансамбле; с 1990 по 1991 - в Гос. ансамбле танца Армении; с 1993 по 2001 - в Гос. ансамбле народных инструментов Радио и Телевидения РА им. А. Мерангulyana; с 1990 по 2009 - в Госконсерватории им. Комитаса; с 2009 по сей день - в ДМШ им. К. Сараджяна.

**Information about the author:** KIRAKOSYAN ANUSH MESROP (was born on 14 December 1957 in Armenia, Alaverdi). A soloist kanon player, as well as a lecturer of music at YSC Anoush Kirakosyan is an author of four books including "Eternal diamonds 1" (2005), "Eternal diamonds 2"(2010), "Works for kanon" (2010) and "Khachatur Nersisyan's concert plays for kanon" (2010). She also wrote a number of articles including "They want to make them theirs as well" (brief version in "Avangard", 8-14 April 2009), "Friendship is born from a smile" (//Musical Armenia" journal, 1-3 November, 2013), "Armine Pogosyan titled teacher" ("Musician" Yerevan State Conservatory magazine, April 2013), "...But the friendship is going on", //Armenia" newspaper, 13-20 December 2012, "Happiness gives wings, the patriotism - feeling of dignity", //Musical Armenia journal, and many more. She's also being published on "Musical Armenia" official magazine of the YSC, "Musician" newspaper, "Armenian soldier" the official newspaper of the Ministry of Defence of the Republic of Armenia, "Fighter" the official newspaper of the Ministry of Defence of the Republic of Artsakh, Lebanese (Beirut) "Speaker" magazine and not only. In different time periods she worked in different places among which were: 1979-1983 The musical school of the city Hoktemberian, 1980-1986 Tatul Altunyan Armenian state song & dance ensemble, 1986-1987 Armenian State Ensemble Minstrel Folk Songs of Armenia, 1990-1991 Armenian State Dance Ensemble, In 1993-2001 has been working at Public Radio Aram Merangulyan Ensemble of Folk Instruments. In 1994-1997 she was qanun player and the Director of the Ensemble of Folk Instruments of the Yerevan Special Regimen. In 1990-2009 was a pedagogue at the YSC, and since 2009 is qanun teacher and the Head of the Department of Folk Instruments at K. Saradjian Music School. Since 2019 is teaching Pedagogical Practice at the A. Babajanyan Music College. 1990-2009 Yerevan State Conservatory after Komitas, 2009 - present Musical school after K. Sarajyan.

## **Резюме**

Канонистка-солистка, преподаватель, журналист **Ануш Месроповна Киракосян**. - “Бесконечный путь света и вечности”.

Статья основана на изложении психологического и морального воздействия на автора двух армянских гениев: музыкального искусства - Комитаса и литературы - Ованеса Туманяна. Это сопровождало ее с самого детства, стало образом всей сознательной жизни и повлияло на процесс становления как музыканта и журналиста. Интересно само сочетание выдающихся личностей, что еще больше подчеркивает факт бесконечного бытия гениев в жизни армянского народа.

## **Summary**

Pedagogue at YSC after Komitas, soloist, kanon player **Anoush Mesrop Kirakosyan**.- “The endless road of the light and eternity”.

The article is the expression of the psychological and moral influence that the two Armenian major geniuses Komitas and H. Tumanyan had on the author in terms of music and literature. This has followed the author since her childhood and became a mainstream. It also has its influence on the formation of her personality as a musician and journalist. The combination of the two characters underlines their eternal presence in the everyday life of the Armenian nation which is quite interesting.

## **ՆՈՒՆԵ ՌՈՄԵՈՅԻ ԱԹԱՆԱՍՅԱՆ**

**Արվեստագիտության թեկնածու,  
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ  
E-mail. nune.atanasyan@gmail.com**

## **ՀԱՅ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**X**IX դարի ամբողջ ընթացքում ազգային մտածողությունն ապրում էր բուռն ժամանակաշրջան: Ազգային ինքնազիտակցության արթնացման, ազգային ինքնաճանաչման և զարդարության արտահայտվում էին մշակութային բուռն գործունեությամբ, հրատարակվում էին բազմաթիվ հանդեսներ, ամսագրեր, իմբնադրվում ընկերություններ, պարբերական մամուլում լույս էին տեսնում ժողովրդական երգի բազմաթիվ նմուշներ, երգերի գիտական դիտարկումներ, ազգային տարագի նկարագրեր: Հանդեսներում և պարբերականներում հրատարակված առաջին նմուշները ներկայացնում են հայրենասիրական, ազգային գիտակցությունը բարձրացնող երգերի օրինակներ: Այս երգերը իմբնականում ներկայացված էին միայն բանաստեղծական տեքստով: Դրանք իմբն են ծառայել առաջին ձայնագրյալ երգարանների և ազգագրական ժողովածուների համար: Տուրք տալով տվյալ ժամանակաշրջանի մղումներին՝ առաջին երգարանները պարտնակում են իմբնականում հայրենասիրական, աշուղական երգեր\*(2): Սակայն հետոքիեւ ի հայոտ են զայխ բազմաթիվ երգարաններ և ժողովածուներ, որոնց մեջ աստիճանաբար մեծ տեղ է հատկացվում գեղջկական երգերին:

Հայ բաղարային երաժշտական ստեղծագործությունն ամշուշտ, բազմադարյաւ ավանդույթ ունի: Բայց, քանի որ համեմատարար ամբողջական ու որոշակի նմուշներով միայն XIXXX դարերի բաղարային երգաստեղծությունն է մեզ հասել, ուստի ազգային երաժշտ -

\* Բազմաթիվ դասագրքերից նշենք օրինակ՝ Նիկողայոս Ա. Թաշճանի (1874 թ.), Եզնիկ քահանայ Երգնկեանցի (1880 թ.), Արշակ Բրուտյանի (1890 թ.) աշխատությունները:

Այսպիսի երգարաններից նշենք՝ Գամատ-Քարիսպա, Ազգային երգարան հայոց, Ս. Պետերբուրգ, տպ. Յակով Եօնոսի, 1856 թ., Գրիգոր թի. Գրիգորեանց, Սոխակ Հայաստանի, Մոսկովա, տպ. Ք. Բարխուդարեանի, 1895 թ., Եզնիկ թի. Երգնկեանց, Զայնագրեալ ազգային երգարան, Վաղարշապատ, ի տպ. Արքունիքի Էջմիածնի, 1882 թ., Ղազարութիւն Յովսէփեան, Քնարիկ մանկական, Ս. Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Ակորդուուլի 1887 թ. և այլն:

տական ֆոլկորի այդ բնագավառի մասին պատկերացում ենք կազմում տվյալ ժամանակաշրջանի նկութերով: Երգի այս տեսակը, ձևավորվելով հայ հասարակական կյանքի դրշակի պայմաններում, իր զաղափարակեղարվեստական բովանդակությամբ երաժշտառնական առանձնահատկություններով ունի որակական նոր արտահայտչածներ:

Գեղջկականի նման, բաղարային երգը նոյնապես կոլեկտիվ ստեղծագործություն է: Հորինվելով մեկ անհատի կողմից, բանավոր երգասացության ձևով անցնելով մի կատարողից մյուսին՝ այն հեղվում, գեղարվեստական առումով կատարելագործվում է և ժամանակի ընթացքում տարածվում է առավել մատչելի, հուզական, ներգործուն տարրերակներով: Եվ քանի որ այդ երգերն ստեղծվում են բաղարային, ինտոնացիոն և ոճական առումով խայտարդես երաժշտական միջավայրում, նաև կրելով այս կամ այն ազդեցությունը, ապա չեն կարող ոճական առումով լինել միաձոյլ և ազգային լեզվամտածողություն արտահայտող երգարվեստի հյուր:

«XIXXX դարերի հայ բաղարային ժողովրդական երաժշտական ստեղծագործության գոյացումն ու բնույթը սերտորեն ատնշվում են ժամանակաշրջանի, հասկապես XIX դարի 50-60-ական թվականներից ծավալված մշակութային ակտիվ շարժման ամբողջ ընթացքի հետ: ... Զաղարային երգը հնչում է տվյալ ժամանակաշրջանի համար բնորոշ դարձած բազմազան հավաքույթներում վերածվելով հայ բաղարային հասարակության երաժշտական կենցաղի զլաւաղոր բաղադրիչ» (3. էջ 4):

Գոյություն ունեցող բազմաթիվ նմուշները ցույց են տալիս, որ բաղարային երգի համար բնագիր են դարձել իմբնականում ժամանակի առաջավոր, հայրենական գրականության զաղափարական գեղարվեստական ուղղվածությունը կողմնորոշող հեղինակների բանաստեղծությունները: Մեզ հասած բաղարային երգերի նշանակալի մասն ստեղծված է արևելահայ և արևմտահայ այնպիսի նշանավոր բանաստեղծների բնագրերով, ինչպիսիք են՝ Անոնդ Ալիշանը, Ռաֆայել Պատկանյանը, Մկրտիչ Պեշիկարչյանը, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Հովհաննես Հովհաննեսյանը,

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորիրդի երաշխավորությամբ, Գոհար Կաղենի Շագոյան՝ 10.1.2020 թ., ընթերցվել է գիտաժողովում և ընդունվել տպագրությամ՝ 25.11.2019 թ., ներկայացրել է հեղինակը՝ 29.11.2019 թ.

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

Հազարու Աղայանը, Սմբատ Շահազիզը, Պետրոս Դուրյանը և որիշներ:

Հայ մեծաստղանդ այս քանաստեղծների հոգական ու ոգեշոնչ քանաստեղծությունները երգի էին վերածվում քաղաքային ժողովրդական երգին բնորոշ ստեղծագործական մեթոդով: Այս կերպ եղանակավորված քանաստեղծությունները ձեռք էին բերում հոգական նոր որակ և որպես ժողովրդական, տարածվում երաժշտական կենցաղում: Այս երգերի գեղարվեստական լավագույն նմուշները շարունակում են կենցաղավարել մեր օրերում ևս:

Քաղաքային ժողովրդական երգերը հիմնականում դրսուրվում են հայրենասիրական, քնարական և կենցաղային ժամանակակից ժամանակակից ժողովրդական միջոցների համակարգը ձեփավորվել է ազգային և այլազգի երաժշտական արտահայտչամիջոցների օրգանական միահյուսմամբ:

Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստում նրկատելի են գեղջկական և աշուղական երգարվեստի հաստկանիշներ, ինչպես նաև այլ երաժշտական մշակույթների ազգեցություններ: «Վերջինը գոյացել է հիմնականում հայրենասիրական քանաստեղծությունները ժողովրդի լայն շրջանակներում արագորեն տարածելու նպատակով: Նման մոտեցման վառ օրինակ կարող է հանդիսանալ Միքայել Նալբանդյանի փոխադրած գարբիրդիական զինվորի հարսնացուի (մեկ այլ դեպքում քրոջ. - Խմբ.) զգացմունքներն արտահայտող «Մեր Հայրենիք» երգի մելեկին» (3. էջ 7):

Քաղաքային երգերը լինելով ուշադրության կենտրոնում հավաքվել են, զրանցվել և հրատարակվել քաղմարդի երգարաններում: Այդ աշխատանքները կատարող երախտավորների շարքում նշենք Գ. Երանյանին, Ք. Կարա-Մորգային, Մ. Եկմալյանին, Մ. Ամասունուն\*, Ա. Բրուտյանին, Մ. Դեմորյանին, Մ. Թումանանին, Վ. Սամվելյանին, Մ. Մելիքյանին և շատ որիշների: Ներկա հակիրճ անդրադարձ նվիրված է այս ոլորտում Կոմիտաս վարդապետի կատարած աշխատանքներին:

Ինչպես զիտենք, Կոմիտաս վարդապետի ուսումնասիրությունների մեջ առանցքային տեղը պատկանում է գեղջկական երգերին, քանի որ նրա համոզմամբ, այն առավել բնորոշ ազգային նկարագիր ունի ու հայկական պրոֆեսիոնալ երաժշտության հիմք կարող է հանդիսանալ: Այնուամենայնիվ քաղաքային մշակույթը ևս այն-տեղ մի ինքնուրույն և սարողական բաժին է կազմում:

Կոմիտասը լինելով իր ժամանակաշրջանի առաջատար մտավորականներից, չէր կարող անտարբեր մնալ քաղաքային մշակույթի տարրեր դրսուրումների՝ հատկանշ ազգային պատառական և հայրենասիրական երգերի համեմականաց: Կոմիտասի Երգերի ժողովածուի 4-րդ հատորում ներկայացված են այս ժամրին պատ-

կամող նմուշներ և դրանց մշակումներ, որոնց Վարդապետն անդրադարձել է դեռ ուսման տարիներից՝ 1890-ականներից մինչև 1914 թ.:

«Կոմիտասն իր ամբողջ գործունեությամբ հանդես եկավ իրեն քաղաքացի-արվեստագետ, նա անտարբեր չգտնվեց այն օրերի համար «օրակարգի» հրատապ խնդիրներից նաև այս մեկի՝ ազգային պատագործության խնդիրի նկատմամբ: Նրան ն որպես քաղաքացու կամ արվեստագետի հոգական ազգային ազգային պատականության կորուստը, արևմտահայերի ծանր վիճակը, ուսական ցարիզմի գործադրած ազգային ճնշումները, հարազատ ժողովրդի լուսավորության ու վերածննդի խնդիրները» (4. էջ 7):

Այս բոլոր խնդիրները հիշեցվում են ազգային հայրենասիրական երգերում: Տեղին է նշել նաև Մ. Նալբանդյանի զնահատական այս երգերի վերաբերյալ, օրինակ՝ «Տէր, կեց զշայ» երգը: <...> յուր բովանդակության թե յուր քանաստեղծական վատվորուն հորինվածքի և թե հայոց ներկա վիճակի ճշգրիտ պատկեր հանդիսացնելու և դրա բարվորելու համար հարկադիր եղած հնարները խնդրելու մասին, արժանի է ազգի մասնավոր ուշադրությանը» (3. էջ 101): Կարծում ենք, այս նրկարագիրը կիրառելի է նաև այս բնույթի այլ քաղաքային երգերի դեպքում:

Կոմիտաս վարդապետն իր հերթին նոյնպես արժեվորել է ազգային հայրենասիրական երգերը: Գեղջկական երգերի հետ մեկտեղ, նա հավաքել և գրանցել է այս ժամրին նմուշներից: Արաքս Սարյանի «Հայ քաղաքային ժողովրդական երգերի ընտրանի» ժողովածում զետեղված են Կոմիտաս վարդապետի զրյին պատկանող նմուշներ (1. էջ 25): Այլ քանահավաքների շարքում այստեղ ներկայացված են կոմիտասյան գրառումները՝ «Դարդս լացեր», «Երգ պանդոխտ պատամելի», «Հայրիկ, Հայրիկ, քո Հայրենիք»:

Զայնագրելուց հետո, Կոմիտաս վարդապետն այս բնակավարի բավականիմ խայտարդիս ցանկություն ունի լավագույն տարրերակները, մաքրելու ու եղկելու դրամբ, անհրաժեշտության դեպքում երգերի տեքստերը խմբագրել է, ազատելով ավելորդ անցանկալի բովանդակությունից:

Վարդապետի բազմաձայնած և մշակած երգերի շարքում կան խորագետ տիտոր քնարական բնույթի՝ Վահանանց պատմությանը: Այս հերոսական թեմային նվիրված երգերի շարքում նշենք «Բամ, վորոտան», «Հիմի էլ լունը», «Մեզ նոր արև ծագե», «Իմ հայրենյաց հոգի Վարդան», «Ոչ հայկագունը» նմուշները:

«Երգերի մելեկիները մշակելիս Կոմիտասը նույլական ստեղծագործական մոտեցում է ցուցաբերել և ներդաշնակելիս այդ երգերը ևս, ընթունել է որպես իր «հարազատ զավակներ», - ինչպես նշում է Ռ. Արայանը, -

\* Սահակ վլդ. Ամսատոնի, Ժողովրդական երգերի ձայնագրյալ ժողովածու, 1884 թ. (անտիպ), Կոմիտաս, Հայ ժողովրդական երգեր և պարեր, 1891-1913 թթ. (հրատարակվել է 1950 թ.), Կոմիտաս վարդապետ, Շար Աննա, ժողովածու, Էջմիածնի տպարան, 1895 թ., Բրուտյան Ա., Ժողովրդական երգեր, պարեր և պարենակներ, 1895 թ.:

## Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

նրանցում, արտահայտիչ լնդիանուր պարզության պայմաններում, կարելի է տեսնել կոմիտասյան հնարամտությամբ գտնված նույնան արտահայտիչ հարմոնիկ թարմություններ՝ դինամիկ ու երանգավոր դարձվածքներ» (2. էջ 7):

Ուսումնասիրելով Կոմիտասի քաղաքային երգերի մշակումները՝ պատկերացում կազմեցինք այդ աշխատամքների ընթացքի և ծավաների մասին: Առաջարած և Ծանրագրություն բաժիններում գետեղված Ռ. Ա. Արայանի հոդվածներում նկարագրվում է Վարդապետի՝ այս ժամրում կատարած ստեղծագործական աշխատանքը:

Հրատարակված կամ ձեռագիր մնացած երգարաններում և հավաքածուներում հանդիպում ենք բազմաթիվ ազգային հայրենասիրական ընույթի երգեր: Դրանք ներկայանում են տեքստերով, իսկ ավելի ուշ շրջանում նաև մեղեդիներով հանդերձ: Ինչպես գիտենք, քաղաքային երգերն ստեղծվել են հիմնականում հայտնի բանաստեղծների ստեղծագործությունների հիման վրա, իսկ մեղեդիները հաճախ ընդօրինակվել են նախկինում հայտնի կամ սիրված երգերից: Այս մեղեդիները հիմնականում կրում են արևմտանվորական մշակույթի ազգեցությունը: Դրանց բնորոշ քայլերգայնությունը ուղղմական ողին արքնացնելու նպատակ էր հետապնդում, ինչպես նաև քաջություն ու սեր հայրենիքի հանդեպ: Այդ պատճառով, այս ժամրի երգերը տարբերվում են գեղջկական երգերից ճայնակարգային, մեղեդային, մնտրափիրմական ու երբեմն ազգային ինքնուրույն լեզվամտածության թերի դրսնորված հատկանիշներով:

Կոմիտաս վարդապետը, անդրադարնալով քաղաքային ֆորկորի նմուշներին, հստակ գիտակցում էր դրանց առանձնահատկությունները, սակայն այս երգերն այնքան սիրված, պահանջարկ վայելող, մեծ ու կարևոր գործառույթ կրող էին, որ անտեսել այս երգերի դեմք ու նշանակությունը հատկապես այդ ժամանակաշրջանում անհնար կլիներ և անհեռատես:

Կոմիտասի Երկերի Ժողովածուի 4-րդ հասորում գետեղված է 26 խմբերգ, 4 մեներգ, իսկ հավելվածում՝ բազմաթիվ տարբերակներ և ինքնուրույն նմուշներ:

Հատորում տեղ գտած բնարական երգերի նմուշները միայն լրացնում են այդ ժամանակաշրջանի քաղաքային երգերի հայրենասիրական ողին ու բովանդակությունը: Ա. Շահազիզի խոսքերով գրված «Ես լսեցի մի անուշ ծայս», Ա. Խասհակյանի՝ «Արևն իջավ սարի գրլխուն», «Դարդ լացեք, սարի սմբուլ» երգերն այդ օրինակներից են:

Ժամանակի ազգային-քաղաքական կյանքի գործնական պահանջներով է թելադրված եղել նաև Մայր Աթոռ Սր. Էջմիածնի և Վեհափառի գովերգող երգերի ստեղծումը, և պատահական չէ, որ Կոմիտաս վարդապետն այդպիսի երգերից երկուսն անվանել է «Ազգային օրիներգ» (1891 թ.):

Ինչպես նշում է Ռ. Ա. Արայանը, «ներկա հասորում պարունակող ստեղծագործությունները, իր գործունեության վաղ թե ուշ շրջանում Կոմիտասը կատարել է, և դրանք միշտ հաջողություն են գտել, այդ մասին բազմաթիվ տեղեկություններ կան ժամանակի հայկական

մամլուլում» (6. էջ 10): Երկերից մի քամիսը վերագրվում են արդեն իսկ 1890-ական թվականների առաջին կեսին («Մութ զիշերվա մեջ» 1892 թ., «Օն թինդ ի խինդ» 1894 թ.): Հաճախ մշակումներն ունեն բազում տարբերակներ, որոնք գրված են տարբեր ժամանակահատվածներում, օրինակ՝ «Ես լսեցի մի անուշ ծայն», կամ այլ կերպ՝ «Երազ» երգը:

Այս երգին Կոմիտաս վարդապետն անդրադարձել է թե վաղ՝ Էջմիածնական, թե ուշ՝ պղղական տարիներին: Հայտնաբերված և հատորում ներկայացված բոլոր տարբերակները եռաձայն խմբերգային մշակումներ են (մեկը՝ հիմնական բաժնում, երեքը՝ հավելվածում): Սակայն Կոմիտասի արխիվում՝ թիվ 498 թղթապահակուս, խմբերգային տարբերակներից մեկն ունի նաև «Փոքր և մեծ Փիլյանի, կլասնեսի և զորակի նվազակցություն»: Հավանաբար այս տարբերակն է կատարվել 1908 թ. ապրիլի 27-ին Գևորգյան ճեմարանի աշակերտական գրական երաժշտական երեկույթին, որի հայտագրում «Երազ» երգի համար նշված է «դաշնակեց և նվազուրդի\* վերածեց Կոմիտաս վարդապետ» (6. էջ 189):

Այս հանրահայտ ու մինչև այսօր սիրված և հաճախ կատարվող երգի միաձայն տարբերակը գտնում ենք տարբեր ժամանակաշրջանների և տարածաշրջանների երգարաններում, ի դեպ, տարբեր բանահավաքների և երգարաններ կազմողների կողմից ներկայացված: «Երազ» երգի ճայնագրություններն ունեն բազում տարբերակներ, սակայն մեղեդու հիմնական կորիզն անփոփոխ է: Երգի նույնագրված հիմնական տարբերակումներն արտահայտվում են մետրուիթմական փոփոխություններով: Օրինակ՝ Ս. Դեմուրյանի գրանցած տարբերակում չափը 2/4 է (3. էջ 54), մեկ այլ երգարանում երգը գրանցված է 4/4 չափով (7. էջ 104): Սակայն կոմիտասյան բոլոր տարբերակները գրված են 9/8 չափում: Այսուղեակը կա նորից հիշելու այն փաստը, որ քաղաքային երգը բանավոր ավանդույթ է և բանահավաքների գրառումները, որոնք XIX դարի վերջում և XX դարի սկզբում կատարվում էին բացառապես լսողությամբ, հիշողությամբ, հաճախ կրում էին բանահավաքի երաժշտական ազդեցությունը, որը պայմանավորված է մի շարք մասնագիտական և անհատական հատկանիշներով: Նշենք նաև, որ բանահավաքը հիմնականում երգը գրանցում էր հայկական նույնագրությամբ, ինչպիսի օրինակով որ մեզ են հասել բազմաթիվ քաղաքային և գեղջկական երգեր, և միայն հետազոտության դրանք փոխադրվել են եվրոպական նույնագրության: Չնայած այս ամենին, երգերը մեզ են փոխանցվել բավականին գրագետ գրանցված, իսկ տարբերակների նմանությունները հաստատում են երգի բոլոր բանահավաքիրը: Կոմիտասյան «Երազ» երգի մնտրափիրմի ընտրությունն ամբողջացվում է խմբերգային մշակման համատեքստում, առաջ բաշած գեղարվեստական խնդիրների լուծումներով: Մշակումները կատարված են տարբեր խմբերգային կազմների համար, բոլոր նմուշները գրված են տարբեր տոնականություններում, ինչն ընդլայնում է այս խմբերգե-

\* Նվազուրդ – այս պարագայում պետք է հասկանալ անսամբլ, նվազախումբ:

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

րի կիրառման շրջանակները:

XIX դարավերջի հայրենասիրական ամենատարածված երգերից մեկն է «Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիր» երգը, որը նաև ամենից ավելի ժողովրդականացած այն երգերից է, որոնք նվիրված են եղել Հայոց կարողիկոս Մկրտիչ Խրիմյանին (Մկրտիչ Ա Վանեցի, 1820-1907 թթ.): Խոսրվերի հեղինակն է վաճեցի Մեսրոպ Զանիկյանը: Այս երգը համախու հանդիպում ենք ժամանակի ձեռագիր ու տպագիր երգարաններում, ինչպես նաև բազմաթիվ ժողովրդական բանավոր կատարումների մշակված տարրերակներով:

Ինչպես նախորդ նմուշի դեպքում, «Հայրիկ» երգի բոլոր տարրերակներին բնորոշ է լայնաշունչ զարգացում, խորը բնարականություն, ինչը զգալիորեն բարձրացնում է այս մեղեդու գեղարվեստական արժեքը:

Ռ. Ա. Արայանի ուսումնասիրությունները բերում են այն եղարակացության, որ այս մեղեդին երգել է վեց երգ: Առաջին տարրերակը զետեղված է Գ. Տեր-Ալեքսանյանի ձեռագիր երգարանում՝ սիրային քնարական տեքստով, որը հետազայտմ, ժամանակի զարդարաներին հարմարեցնելով, փոխարինվել է հայրենասիրականով: Տարրերակներից մեկը սովորաբար կրում է «Անձոնք Պոլսեցի հայ մանկանց» (5. էջ 70) անվանումը: Հաջորդ երկու տարրերակներն արդեն նվիրված են Մկրտիչ Խրիմյանին, որը հոչակված էր Հայրիկ գրական և ժողովրդական անունով:

Հայրիկը 1880-ին Վան զնաց՝ սովյալներին նպաստ բաժանելու, նպատակ ուներ երկրագործների դպրոց հիմնել Վարսագում, սակայն 1885-ին համբական կառավարությունը հեռացրեց նրան Վանից, ապա արսորեց Երոսաղեն (6. էջ 664): Ահա այս հալածանքների կապակցությամբ է գրված Զանիկյանի տեքստը, որի բովանդակությունն առավել հասկանալի է դատնում այս պատմական իրադարձությունների ներքո: Մկրտիչ Խրիմյանի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու արիթով նոյն հեղինակը 1892 թվականին «հրապարակ է հանել ուրախ, ցնծագին, «պատասխան» երգը (Այսպիսի «պատասխան» երգի երևույթը հայ իրականության մեջ տարածված է եղել):» (2. էջ 175):

Այս երգի զարգացման ընթացքը եղարափակող տարրերակը «Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիքն» է, բայց ժամանակի ընթացքում, տարիներ շարունակ կենցաղավարվերով Հայաստանի տարրեր վայրերում, կատարվել է այլ բնկալունով՝ որպես վասպորտականցի հոր և որդու հայրենասիրական երկխոսություն: Հայրիկ անունն այս դեպքում գրվում է փոքրատառով: Այս երգի անզուզական տարրերակ զուանը Հայրիկ Մորավյանի ձայնից գրառած «Հայրենի երգեր» ժողովածուում (7. էջ 155): Ինչպես գրում է Ծանոթագրություններում Ա. Ա. Փափականին՝ երգը ներկայացված է այնպես, ինչպես այն երգել են Զնուկ զյուղում:

Այս երգի երկու տարրերակ գտնում ենք Ա. Ա. Սարյանի «Հայ բաղարային ժողովրդական երգերի ընտրանիում»: Երկու գրանցումների հեղինակն էլ Կոմիտասն է: Նմուշները տարրերում են իրարից. առաջինը փոփոխական չափ ունի, երկրորդը՝ անփոփոխ 3/4 (3. էջ 191-192): Կոմիտասյան խմբերային մշակումներն ար-

ված են վերը նկարագրված երկու տարրերակի հիման վրա՝ առանց մետրաժիրմական և մեղեղային փոփոխությունների:

Ինչպես հայտնի է, 1898 թվականի նոյեմբերին, դեռևս տասնորդ Կոմիտասը Բեյոլինից Գևորգյան ձեմարանի տեսուց Կարապետ Կոստանդնականին գրել է. «Եկող տարի Ճեմարանի 25-ամյակն է: Հարկավոր է մի քանի բան պատրաստ ունենալ... Գլխավոր ուժու գործ կդնեմ մի խոմք կազմելու... Ես արդեն ունիմ «Տէր, կեցո»-ն և «Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք»-ը թե խմբի և թե նվազի համար, և կպատրաստեմ ժողովրդականներից էլ ընտիրները»: Կոմիտաս վարդապետը, ոգևորված իր համերգային գործունեությամբ, ստեղծագործական մեծ եռանդով հավաքեց, մշակեց և թեմ հանեց ոչ միայն գեղօվական, այլև քաղաքանի երգերի անկրկնելի նմուշներ, որոնց փայլը չի խամրում ժամանակի ընթացքում և որոնք ամրագրում են հայ երգի բազմազան ու բարձրարժեք գեղարվեստական դրսնորումները:

XIX դարավերջի և XX դարասկզբի ազգային ինքնազիտակցության բարձրացման պայմաններում ծրնունդ առած և մեծ քափով զարգացած հայ բաղարային ժողովրդական երգը մեր օրերում ևս շարունակում է կենցաղավարել, նոր քափ է առնում՝ հեշելով ժողովրդի շորերից և բխելով ամեն հայի սրտից ու հոգուց:

Սակայն մերօրյա բաղարային արդի երաժշտական խայտարդետ միջավայրի և տեխնիկական սարքերի ու տեղեկատվական դաշտի բնդույնան պատճառով երգերը կրում են այլևայլ ազդեցություններ: Երբեմն անձանաչելի փոխվում են հայ ալամերական քաղաքային երգի հնչողությունը, և ինչն ավելի կարևոր է կատարման եղանակը: Երգեցողության արևելյան ելեկջների անթույլատերելի շրայլ օգտագործումը ցածրածաշակ երաժշտության տարածման պատճառ է հանդիսանում: Ուստի ճանաչելով և պահպանելով մեր քուն ավանդական երգերն ու կատարումների ազգային ավանդական առանձնահատկությունները, հարկավոր է ամեն կերպ նպաստել մեր մշակույթի մարքման և հղկման զործընթացին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Սարյան Ա. Ա., Հայ բաղարային ժողովրդական երգերի հասնելիք, Եր., Կոմիտաս., 2010 թ.: *Saryan A. A.*, Hay qaghacayin zhoghovrdakan ergeri hat'ntir, Yer., Komitas., 2010 th.
2. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 4, խմք.՝ Ռ. Արայանի, Եր., Հայաստան, 1976 թ.: *Komitas, Yerkeri zhoghovatsu*, h. 4, khmb.: R. Athayani, Yer., Hayastan., 1076 th.
3. Նայբանդյան Մ., Ընտիր երկեր, Եր., ՀՍՍՌ ԳԱ իրան, 1953 թ.: *Nalbandyan M.*, 'ntir erker, Yer., HSSR GA hrat., 1953 th.
4. Երգարան, կազմ.՝ Վ. Չարմիշյան, Եր., Անահիտ, 1993 թ.: *Yergaran*, kazm.: V. Chaqmisyan, Yer., Anahit, 1993 th.
5. Սոխակ Հայաստանի, լիակատար երգարան, հ. 1, Բագու, Հայկ. Մարդասիր տպ., 1874 թ.: *Sokhak Hayastani, liakatar yergaran*, h. 1, Bagu, Hayk. Mardasir tp., 1874 th.
6. Փափական Վ., Պատմութիմ հայոց գրականութեան, Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանցի, 1910 թ.: *Phaphazean V.*, Patmuthiwn Hayvotz grakanuthean, Thiflis, N. Aghaneantzi, 1910 th.
7. Փափական Վ. Ա., Հայրենի երգեր, Եր., Նոր գիրք, 2007 թ.: *Phahlevanyan A. A.*, Hayreni erger, Yer., Nor girk, 2007 th.

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

**Քանայի-քառեր.** Ազգային-ազատագրական պայքար, հայրենասիրական երգեր, քաղաքային երգեր, տարրերակներ, Կոմիտաս փառապետ, Խրիմյան Հայրիկ, մշակումներ:

**Ключевые слова:** национально-освободительное движение, патриотические песни, городские песни, варианты, Комитас архимандрит, Хримян Айрик, обработки.

**Keywords:** national liberation movement, patriotic songs, urban songs, variants, Komitas Archimandrite, Khrimian Hayrik, arrangements.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** Աթլանտիկ ԱՄԵՐԻԿԱՆ ՆՈՐԵԿԵ ՈՒՆԻՑԵՈՅ (1967 թ. ք. Երևան): Ավարտել է՝ 1990 թ. Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտական բաժնում (դեկ.՝ պրֆ. Մ. Գ. Հարությունյան): 1993-ից առ այսօր աշխատում է ԵՊԿ հայ երաժշտական ֆոլկորագիտուրյան ամբիոն, դասախոս, դրցենտ (2017-ից) ամբիոնի փարիչ (2018-ից)՝ փարուն «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն», «Հայ հոգևոր երաժշտուրյուն» և «Նոր հայկական նոտագրուրյուն» դասընթացները նաև 2001-ից առ այսօր ԵՊԿ երաժշտուրյան տեսության ամբիոնի դասախոս փարուն «Հարմոնիա», «Սոլիֆեն» և «Արևմտանվորական երաժշտատեսական համակարգեր» դասընթացները: 2000-ից Հայաստանի պետական կամերային երգչախմբի արտիստ, գեղարվեստական դեկ.՝ Ո. Միթյան: 2008-ից «Հայ Ասպետ» հեռուստախաղի երաժշտական փորձագետ և համեմախմբի անդամ: Հեղինակ՝ գիտական հողվածմերի «Ստեփան Դեմուրյանի «Հայ ժողովրդական երգեր» անոնց ժողովածման, //Երաժշտական Հայաստան, 1 (24) 2007 թ., «Ստեփան Դեմուրյանի դեկ. հայ ժակույրի և կրույժան զարգացման գործում», //Երաժշտական Հայաստան 4 (31) 2008-1 (32) 2009 թ. էջ 75-77, Ստեփան Դեմուրյան «Հայ ժողովրդական երգեր» ԵՊԿ, մատենաշար, պրակ 9, 2013 թ., Սահակ Ամատունի «Ժողովրդական երգերի ճայնագրյալ ժողովածու», «Հայ ժողովրդական երգեր և նվազմեր», ԵՊԿ, մատենաշար, պրակ 11, 2014 թ.:

**Сведения об авторе:** АТАНАСЯН НУНЕ РОМЕОВНА (род. 1967, Ереван). В 1990г. окончила музыковедческое отделение ЕГК им. Комитаса (класс проф. М. Г. Арутюнян). С 1993 по сей день работает на кафедре Армянской музыкальной фольклористики ЕГК преподавателем, доцентом (2017), заведующая кафедрой с 1918-го года, ведет курсы дисциплин: "Армянское народное музыкальное творчество", "Армянская духовная музыка", "Новое армянское нотированиe". Одновременно с 2000 г. по сей день преподает дисциплины: гармония, сольфеджио, западноевропейские музыкально-теоретические системы на кафедре теории музыки ЕГК. С 2000 г. - артистка Государственного камерного хора. Автор научных статей: "Неизданный сборник Степана Демуряна "Народные армянские песни" (//Музыкальная Армения, № 1(24)2007), "Роль Степана Демуряна в армянской культуре и развитии образования" (//Музыкальная Армения, № 4(31)2008) 1(32)2009, С. 75-77), "Степан Демурян" // "Народные армянские песни и наигрыши" (ЕГК, серия изданий, вып. 9, 2013), "Саак Аматуни. Сборник нотированых народных песен", // "Народные армянские песни и наигрыши" (ЕГК, серия изданний, вып. 11, 2014).

**Information about an author:** ATANASYAN NUNE ROMEO (born in 1967, Yerevan). In 1990 she graduated from YSC Department of Musicology professional class of Professor Margarita Gabriel Harutyunyan From 1993 till today works in YSC in the department of Armenian musical folklore studies. Pedagogue, docent (2017), a Head of Department Armenian musical folklore studies (2018). Armenian folk music and Armenian spiritual music courses and also from 2001 till today she is a lecturer of YSC's department of music theory she teaches courses of "Harmony", "Solfeggio" and "Western musical theoretical systems". From 2000 she is an Armenia Chamber Choir Artist. She is an author of scientific articles "Stepan Demouryan's "Armenian folk songs" unpublished collection" //Musical Armenia 1 (24) 2007, "Stepan Demouryan's role in the development of Armenian culture and education", //Musical Armenia 4 (31), 2008-1 (32) 2009 p. 75-77, Stepan Demuryan "Armenian folk songs", "Armenian folk songs and plays", YSC series 9, 2013, "Sahak Amatuni's "Folk songs recorded collection"" // "Armenian folk songs and plays", YSC, series, 11, 2014.

## **Резюме**

Музыковед, кандидат искусствоведения, доцент ЕГК **Нуне Ромеовна Атанасян**. – “Армянские городские народные песни в творчестве Комитаса архимандрита”.

На протяжении XIX века национальное мышление переживало период подъема. Признаки пробуждения национального самосознания были вызваны активной культурной деятельностью; созданы многочисленные журналы, организации, в периодических изданиях публиковались образцы народных песен, научные обзоры и описания национальных костюмов. Первые образцы, опубликованные в периодических изданиях – патриотические песни национально-освободительного движения. Городские песни, находящиеся в центре внимания, были собраны, записаны и опубликованы в многочисленных сборниках песен. Огромную работу в этой области сделали Г. Еранян, К. Кара-Мурза, М. Екмalian, С. Аматуни, А. Брутян, С. Демурян, М. Тумаджан, В. Самвелян, С. Меликян и др.

Комитас архимандрит, в свою очередь, также высоко ценил национально-патриотические песни. Наряду с народными песнями он собирал и записывал образцы этого жанра.

Во время своей творческой карьеры Комитас архимандрит регулярно ссылался на городские песни. Будучи одним из ведущих интеллектуалов своего времени, он не мог оставаться равнодушным к различным проявлениям городской культуры, особенно к национально-освободительным и патриотическим песням. В четвертом томе собрания сочинений Комитаса представлены работы в этом жанре, к которым мастер обращался со студенческих лет (с 1890 по 1914 год).

В этой статье мы представляем обзор городских народных песен “Сон” и “Айрик, Айрик, твоё Отечество”.

## **Summary**

Musicologist, PhD Candidate, Docent of YSC Nune Romeo Atanasyan. – “Armenian urban folk songs in Archimandrite Komitas works”.

Throughout the 19<sup>th</sup> century, national thinking experienced a period of boom. Signs of the awakening of national identity were triggered by vigorous cultural activity; numerous magazines, organizations were created, numerous samples of folk songs, scientific reviews and descriptions of national costumes were published in periodicals. The first samples published in periodicals are patriotic songs of the national liberation movement. Urban songs in the spotlight have been compiled, recorded and published in numerous song collections. Huge work in this area was done by G. Eranian, K. Kara-Murza, M. Ekmalian, S. Amatuni, A. Brutian, S. Demurian, M. Toumajan, V. Samvelian, S. Melikian and others.

Komitas Archimandrite, in turn, also highly appreciated the national-patriotic songs. Along with folk songs, he collected and recorded samples of this genre.

During his creative career, Komitas Archimandrite regularly referred to Urban songs. Being one of the leading intellectuals of his time, he could not remain indifferent to various manifestations of urban culture, especially to national liberation and patriotic songs. The fourth volume of Komitas Collected works presents songs in this genre, which Archimandrite elaborated from his student years, from the 1890's to 1914.

In this article we present an overview of urban folk songs “Dream” and “Hayrik, Hayrik”.

## ԼԻԼԻԹ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՆՏՈՆՅԱՆ

Գրականագետ,  
բանասիրական գիտությունների թեկնածու,  
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի դոցենտ  
E-mail. lilit.antonian@gmail.com

## ԲՆԱՇԽԱԲՐՀԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՒՅՆԵՐԸ. ԿՈՄԻՏԱՍ-ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

**Ա**խորդ դարասկզբին հայ արվեստը, ազգային վերածննդի երազմերով արքած, առանձնակի հղորացավ Կոմիտասի երևումով: Նրա կոմպոզիտորական արվեստը, զիտական մանկավարժական միտքը, մշակութարանական հայացքները, գրականուրյանը և ազգային երաժշտությանը ծառայելու մարդկային բացառիկ հատկությունները վաղուց ձանաչում են գտել հայ և միջազգային շրջանակներում: Անհատ իր կյանքը դրել է իր ապրած ժամանակաշրջանի վրա՝ հետևում թողնելով դարը: Նրա հոգին, ընդունված է ասել, հայ ժողովրդին է, որ հետուներում նոր տեխնիների ջահերն էր նրամարտում: Մնում էր բացառապես հանճարի նոյնացումը:

Կոմիտասի մասին թե հայ, թե եվրոպացի զիտականների կարծիքը ոգևորիչ է: Զնայած ժամանակին ունանք պնդում էին, որ առաջին հայացքից նա «մի նոյնանի արևելցի էր՝ պատրաստ ամեն նոտայի համար արյուն թափելու» (Ռիխարդ Շմիդտ): Ճշմարտությունն այն է սակայն, որ Կոմիտասը մտքով եվրոպացի է, սրբուով՝ հայ, այսպես կոչված, «եվրոպականացեալ հայ» (Ա. Արփիարյան): Նրա մշակութային բնկալման հայեցակարգը և զաղափարական խթանը կուլտուր-պատմական դպրոցի փիլիսոփայությունն է, որի տեսական պահանջների համատեքսում ազգերը համաշխարհային մշակույթի զանարանում իրենց մշակութային ներդրման չափով են ձանաչելի, ընդունելի: Սա արժեքարոր եղրահանգում է, որն ողջուրյուն էր տալիս ժամանակաշրջանի ներմշակութային գրեթե բոլոր գործընթացներին:

XX դարի 10-ական թվականներին հայ մշակույթի պատմության մեջ հատկապես Կոմիտասին հաջողվեց ընտանիք-ազգ-մարդկություն հարմճացում տարածաշատ հայ ընտանիքները վերածել հայ ազգի՝ այն ներկայացնելով միջազգային հանրությանը: Առհասարակ, Կոմիտասի շոնչը թևածում է ամրող արևմտահայ և արևելահայ գրական մշակութային իրականության վրա: Էր հայտնի դասախոսության մեջ՝ առտասանած դեռևս Թիֆլիսում՝ ավելի վաղ՝ անմիջապես իր առա-

ջին երկու համերգներից հետո, Կոմիտասն ընդհանրացնում է պատմամշակութային նշյալ դավանանքը: Նա ընդգծում է, որ ազգային երգերի մեջ հայերի դարավոր պատմությունն է և ժողովրդի անխառն հոգին. «Ինչ է ազգային երաժշտությունը, ինչն է նյութ տալիս ազգային ժողովրդական երգերին: Արդյոք նրա հպարտ լեռները, խոր ձորերը, դաշտերը, բազմազան կլիման, պատմական հազար ու մի դեպքերը և անցքերը, ժողովրդի ներքին և արտաքին կյանքը. այս, այս բոլորը նյութ են կազմում ազգային երաժշտության, մի խոսքով այն ամենը, ինչ ազդում է այդ ազգի զգայարաների և մտքի վրա» (1. էջ 324-325): Կոմիտասին հաջողվում է հայտնաբերել ու տարածել հայ բնաշխարհի բանական բնարերգությունն ու էպիկական երգը՝ բանավոր վերածելով գրավորի՝ փոխանցելի արվեստի, ինչը նրա գործունեությունը բացահայտելու բանալիներից մեկն է այսօր:

Գրականության ոլորտում նոյն հանգրվաններին է ձգտում երիտասարդ բանաստեղծ Դանիել Վարուժանը: Նա նախորդ դարասկզբի հայ մշակութային կյանքում զգայի աշխուժություն է քերում՝ լինելով բեղջիկան Գենսի համալսարանի շրջանակարտ, նաև՝ հետևորդ պողեզիայի դասական ավանդների՝ հայկական ռոմանտիզմի, նեոռոմանանտիզմի՝ Խաչատուր Արովյան-Ռաֆֆի-Սիհամանթո ուղեղծով: Արովյանին երկրպագում էր նաև Կոմիտասը՝ համար շեշտելով, որ այդ գրողն ուղղակի իր էտյան մի մասն է:

Հայոց պատմությունը վերագնահատելով ոչ այնքան անցյալով, որքան ներկայի հետ անցյալի անհաջելի միասնությամբ, Դ. Վարուժանը կերտում է հայ բնաշխարհի զուլալ բնարերգությունը՝ այլևս պողեզիայի ժամանակակից-նեոռոմանանտիզկական ուղղության տիրույթում:

1909 թ. ապրիլի 2-ին Թեոդիկին գրած նամակում Դ. Վարուժանն արձանագրում է այս ընթացքին հարաբերելու պատմական անհրաժեշտությունը. «Պետք է մեր սրտին նշյաները, որոնք երեք միլիոն ժողովրդին մեջ բաժանված են, հավաքել. կերպունացնել մեկ կուրծքի տակ, և զգալ իր սեփական կյանքը, զոնե նվազ ժա-

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ, Գոհար Կառլենի Շագոյան՝ 28.4.2020 թ., ընթերցվել է գիտաժողովում 25.11.2019 թ. և ընդունվել տպագրության՝ 18.4.2020 թ., ներկայացնել է հեղինակը՝ 18.4.2020 թ.

## Հայոց Ցեղասպանության 105-րդ տարելիցին

մանակվան մը համար՝ ի սեր Արվեստին, ի սեր Կյանքի Երգին» (2. էջ 408):

Ընդհանրացնելով հայ գրականության դարավոր գեղարվեստական փորձը՝ Դ. Վարուժանն այսն նոր չափանիշների վրա է դնում ազգային՝ նրա զարգացման կողմնորոշելով դեպի ավանդապահ «զավառ»։ Նրա բնարական ստեղծագործությունները շրջափոխում են պոեզիայի պրեսիլական համակարգը։ Պոետիկան կապվում է մեր հնամայ բանաստեղծության ակունքներին, ժողովրդական բնագդական, անխարար երգին։

Արհասարակ, կարելի է նկատել, որ ժամանակի հայ երաժշտությունն ու գրականությունը գեղագիտական առաջադրումների ուղղակի և անուղղակի ընդհանրության բազմաթիվ եզրեր են արձանագրում։

Կոմիտաս-Վարուժան գեղագիտական աղերսը, մեր դիտարկմամբ, գրական ժառանգորդական է, անմիջական ստեղծարանական։ Եվ դրանցից յուրաքանչյուրն առանցքային է հայ մշակույթի տվյալ որակի կերտման, զարգացման օրինաչափությունների համակարգման, ամրողացման տեսանկյունից։

Ակնայսն է, որ Կոմիտասի առաջադրած գեղագիտական հայտնի դրույթներն անմիջական արտահայտությունն են զուել Դանիել Վարուժանի վերջին մատյանի՝ «Հացին երգը» շարքում։ Դրանք գերակա են Կ. Պոլսում հրատարակվող «Մեհյան» հանդեսի համարներում, ինչպես և «Նաւասարդ» տարեգրի եզակի հրատարակության մեջ՝ ի Կ. Պոլիս։ Կոմիտասի և Դ. Վարուժանի ժամանակակիցների իշխողություններում պատկերված են այդ յորօրինակ պատմականութեան և գեղագիտորեան հագեցած ընթացքի ամենատարբեր կողմերը՝ անցյալ դարի 10-ական թվականների մտավորական միջավայրի մքնողորդը, հեթանոսական գրական շարժման առանձնահատուկությունը, հայ գրականության նորոգության հարցերի շուրջ գրական տարրեր դարրցների տեսական հանգանակները, առանձին գրողների հղումները։

Խնդիրն այն է, որ օսմանցիների մայրաքաղաքն ազգային մայրաքաղաք է գիտակցվում, այստեղ մեր հղուոր կրոնական իշխանությունն է՝ պատրիարքությունը, ինչպես Սր. Էջմիածնում՝ կարողիկությունը (Ա. Արփիարյան)։ Կ. Պոլսում Կոմիտասի գործունեության օրենսդիվ պայմանները սրանք էին։

Ակադեմիկոս Մերգել Սարինյանը գրում է. «XX դարի 10-ական թվականներին հայ գրականությունը մի անգամ ևս դրվեց տեսական-գեղագիտական ըննության առաջ։ Պատմական զարգացման հետանկարի տեսանկյունից դա արդեն երրորդ քննությունն էր. առաջինը, որ պարտադիր Արքվանն ու 50-60-ական թվականների գրական սերունդը, երկրորդ քննությունը, որ ազդարարեց 80-ականների սերունդը, և երրորդ՝ արդեն նորահայտ ուղղությունները մի խորհուրդ էին պարտադրում, ուր պիտի ստուգվեին այս կամ այն ազգի հղուոր տրվածքը համաշխարհային քաղաքակրթության ապագայում» (3. էջ 357):

Հասկես նոր շարժումներ ասսարեղ եկան՝ երեսն նոյնիսկ որոշակի շինոր առաջացնելով։ Դրանցից մե-

կը հեթանոսական շարժումն է, որը գործնականում ծառայում է հնադարի արժեքների ոգեկոչմանը։ Ս. Դանիելյանը, առանձնացնելով շարժումը, քննորշում է. «Պատմական առումով հեթանոս անցեալլ Հանրապետությունում է, գեղեցկութեան և ուժի, ազատութեան և սիրոյ մարմնացումը։ Ճանազողական հիմնարժեքի ուժ է ստանում ազատագրութեան հեթանոսական զարաֆարաբանությունը՝ որպէս նորագոյն շարժման նախահիմք, որպէս մինչքրիստոնեական ազատ կեցութեան պարզ գերադասութեան ակնարկ» (4. էջ 165):

«Մեհյան»-ի հեթանոսական գրական հանգանակը ստորագրում են մեր գրականության երիտասարդ ուժեւը՝ Դանիել Վարուժանը, Հակոբ Քյուֆեճյանը, Կոստան Զարյանը, Գեղամ Բարսեղյանը, Ահարոնը։ Նրանք հոգին էն մշակույթային մեկնարկի գաղափարական հանգակենուր. «Կը հաւատանք, Հայ հոգին՝ Լոյսն է, Ոյժն է, կեաբն է, նարմնաւրուած անդրիական շրեղութանը մէջ արիական ցեղին, որուն կը պատկանին» (5.):

Այսպիսով, հայ հոգու պաշտամունքը դատնում է առհասարակ մշակույթարանական զիխավոր նախարդյաց։

Ընդունելի է հայ գրականացների կարծիքը, որի համաձայն՝ հեթանոսական շարժումը հայկական նեռուումանտիկական շղթայի մեկ օղակն է։ Ժամանակաշրջանը, այսպիսով, տեղակողովում է «հայկական մշակույթի Ուկեղար» (Հակոբ Օշական) հասկացության սահմանում, իսկ «ուկեղար» ասելով՝ նկատի են ունենում ոգևորության մի քանի տարիները, որոնք հաշորդում են թուրքական Սահմանադրությանը (1909-1914 թթ.)։ Գաղտնիք չէ, թե ինչ օդ են շնչում հայերը թուրքերի տիրապետության տակ. «Բոսֆորի հավերժական գեղեցկության ներքը՝ ստրկության դարերից դուրս կերտելով գեղարվեստի սեփական մեհյանը» (Յ. Սիրունի) (6. էջ 70):

Այսպիսով, Կոմիտասի հետ Կ. Պոլսի մտավորականությունը ուսորի է, հատկապես՝ հայ բնաշխարիի երիտասարդ սերունդը և համակիրները՝ Կոստան Զարյան, Գեղամ Բարսեղյան, Դանիել Վարուժան, Հակոբ Քյուֆեճյան, Զապել Եսայան, Ռուբեն Զարդարյան, Լևոն Շանթ, Հակոբ Սիրունի, Ահարոն, Տիգրան Չոլկուրյան, Հակոբ Տեմիրյան, Գեղամ Տեր-Կարապետյան, Վահան Թերեխյան և այլք։

«Մեհյանի» 1914 թ. հունվարյան համարում Կոստան Զարյանն ամփոփում է հեթանոսական գրական շարժման շրջանակներում տիրող արամադրությունները. «Հայրենիքի սիրտին՝ մեր յարգանքներու մենաւոր և աղեսարշ ծաղիկներով հիսուած Պատար. Անոր՝ յոյսը և քրելքանը այն տարօրինակ պարին, զոր կըստեղենք ճակատագրապահեաս-ահաւասիկ» (5. էջ 36):

Ինչպես և նկատում ենք, անախորժության մեջամաղձիկ շեշտերը հաղթահարվում են և հայ գրականության մտահոգվում են գալիքի հայ գրականության, ապագայի սերնդի հանդեպ իրենց հոգածության հարցի շուրջ։

Կը նում ենք, որ երիտարքերի իշխանության զալը նպաստում է ազգային աննախատեազ գարթոնքի երևան

## Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն ե ւ

գայուն, հատկապես՝ արևմտահայ մտավորակամների հետ Կոմիտասի բազմաշափ համագործակցությանը:

Տիգրան Չիթունին՝ Կոմիտասի պաշտելիներից մեկը, գրում է. «Կոմիտաս վարդապետին հետ անմիջապես թղթակցության մտա 1908-ի Օսմանյան սահմանադրության հոչակումից հետո: Համիլյան բռնապետության ընթացքում այդ կարգի փորձը մտքով անկացնելն անգամ կախաղանի չվաճը վզին անցկացնել էր» (7. էջ 138):

Այսպիսով, հանգրվանելով Թուրքիայի մշակութային մայրաքաղաքում՝ Կոմիտասը լիարժեք փոխումքունում է գտնում հայ մտավոր սերուցքի կողմից՝ օրբստորե ընդարձակելով ազդեցությունը: Կ. Պոլիս գալով՝ նա արևմտյան հատվածի հայությանն արևելահայերի համեմատությամբ հավասարազոր ուշարդություն է դարձնում (8. էջ 10): Եվ դա օրինաշափ է. առջևում գործունեության նոր դաշտում է, որտեղ արձագանք են գրտնում հայ բնաշխարհի կենդանի խոսքն ու լեզուն, հայ գեղջուկի զգացմունքներն ու ազգային դժվարին պատմությունը:

Շրջափուկի գաղափարական նշանող գալիք սերմի համար հայության նկարագրի ամրողականացումն է՝ ենելով տեսալի ու տրվածքի ինքնարենությունից: Այս իմաստով բացառիկ ընդգրկուն է Կոմիտասի գործունեությունը՝ որպես էթնիկ շարժման սկզբնավորող և բնաշխարհի սերմի կենտրոնական ուժ: Այսպես թե այնպես, ծառացած զիսավոր խնդիրը հայ երաժշտության, մշակույթի, գրականության բարեկարգման հարցը է:

Հակոբ Քյուֆեճյանը, քննության առարկա դարձնելով արևելյան երաժշտության և կենդանի հայ խոսքի հարաբերության խնդիրը, հաստատում է. «Վարդապետ մը մեր երգերէն ստեղծեց մեզի, օտարացածներուն համար յայտնոթեան մը չափ հրաշալի երաժշտության մը» (8. էջ 3):

Արևելքում, փաստորեն, այդ շրջանում կոմպոզիտուրական դպրոցի հասկացություն զոյլություն չտներ, երաժշտությունն ընթանում էր՝ որպես ծիսական գործողությունների բաղադրիչ (Տ. Մանուրյան): Արևմտորում, սակայն, երաժշտության զարգացումը վերապահվում էր կոմպոզիտորին:

Կոմիտասը, հետազոտելով բաց մնացած բնագավառը, եզրահանգում է, որ հայ ժողովրդական երաժշտությունն ունի այս երկու զիսավոր ձյուղերը՝ արևմտյան և արևելյանը: Եվ եթե վերջինիս եղանակները «այն են ու բարդ, ճոխ, լուրջ, պայծառ, եռանդուն» ապա մյուսինը, պարզ, աղքատ, թեթև, դպուկ, խաղաղ» են (Կոմիտաս):

Մարմնավորելով կոմպոզիտոր անհատի ըմբռնումը՝ Կոմիտասը հետամուտ է լինում մեզանում ձևավորելու երաժշտական արվեստի արևմտյան ուղղությունը: Նա երբեք առիթը բաց չի թողնում՝ մեղեղին ժողովրդական մտածողություն, առ նրա ստեղծագործական բրնազդ ուղղորդելու համար: Անհրաժեշտ էր նոր բարի հաղորդել բանահյուսական հում նյութերի հավաքագրմանը, ապա դեռ նետել մեզ համար օտարածինն ու թյուրը և ընտրել զտարյուն հայկական բեկորները, նաև՝ երգել ու տարածել: Այդ ամենը նա հանձն է առնում երի-

տասարդ հայ գրագետների հետ:

Յուրաքանչյուր կոնկրետ դրսուրման դեպքում հրատակեցվում է, թե ինչպիսին պետք է լինի հայերենը ժամանակակից երաժշտության և գրականության մեջ, նոյնիսկ, նկատի ունենար բանահյուսությունից դուրս՝ բանաստեղծության մեջ: Այսպիսով, հայ երաժշտության զարգացման հնարավորությունը Կոմիտասը տեսնում է հայերենի օրինաշափություններին ներդաշնակվելու, մեր գեղարվեստական խոսքը, հայրենասիրական ողին նորոգելու ջանքում: Պահանջում է հայերենի մարդության, անխարարության ապահովում: Սա է առաջնային խնդիրը՝ առանց որի անհնարին էր հայ երգի գոյությունը:

Ուստի՝ մի կողմից՝ Կոմիտասը նոտագրում է ժողովրդական երգի բնօրինակներ, մյուս կողմից, ինչպես իրազեկում է բանասեր թ. Ազատյանը, ինքնուրույն բանաստեղծական փորձեր նախաձեռնում՝ դրանցից մի քանի համար երաժշտական խորհեր զարգելով նորատերություն:

Չնայած այս բնարական բանաստեղծությունները հետևողական թվագրում չունեն, մամուլում դրանցից մեկ-երկուսը հիշատակված են 1905 և 1914 թվականներին ներբոք: Սա, ինքնին վկայում է, որ գործունեության ամրող ընթացքում Կոմիտասը չի դադարել ստեղծագործել՝ իրեն քնարական բանաստեղծ: Դեռ է ենթադրել, որ այնպիսի ստեղծագործություններ կային, որոնք թերևս կցանկանար երգի վերածել՝ նոյնական տարածելով: Թե՞ն սա էլ միանշանակ չէ՝ հաշվի առնելով նրա ծայրահեռ համեմատությունը: Այս մասին է հուշում նաև թ. Ազատյանի արժեքավոր հրատարակությունը (9. էջ Գ-ԺԴ):

Կոմիտասը, բնականաբար, իր անձով չի սահմանափակվում: Նա պղսահայ գրագետներին հորդորում է գեղարվեստական գրականության տարածքում ամրապնդել հայոց լեզվի և մտածողության հանդեպ խնամատար վերաբերությունը: «Մեհյանի» հեղինակ Վահան Թերեխյանը, նույն տրամադրություններին ընդարձակելով, օրիներգում է հնամենի լեզվի զանձերը.

**«Զեզ, Հայ լեզու, կըսիրեմ մրգաստանի մը նրման**

Մեր անցեալին բանձրախիտ ստույբներուն մէջ՝ կարծես...» և այլն (5. էջ 53):

Հոչակելով օտարասինչ բառերից լեզվի մաքրագործման պահանջը՝ Կոմիտասը քննում է մեր լեզվի հիմքերն ու սկզբնադրությունները՝ գրաբարը, բարբառները, որոնցից էլ որդեգրում է բազմաթիվ հարազատ բառեր ու բացատրություններ: «Մեր բանաստեղծության վրա էլ տիրում է այն վեհապանձ պարզությունը, որը բխում է հայկական երաժշտությունից», - եզրահանգում է նա (10. էջ 122):

Ժողովրդական երգերի առաջին հիմնակի ծանրագրության մեջ հաստատում է նոյն դիրքորոշումը. «Ձերի տակ ունենալով քսանիինց հազար քառասողերի ժողովածու, բարդատել ենք նույն երգերի վարիանտները և վերցրել ենք մեր կարծիքով ընտանից համար-

## Հայոց Ցեղասպանության 105-րդ տարելիցին

ված ձևերը...Ժողովուրդը սովորաբար մի տուն միայն երգում է որևէ եղանակով՝ առանց մտքին ուշադրություն դարձնելու: Մենք աշխատել ենք հաջորդ տների բնավորությունն այնպէս անել, որ բոլորը միասին, որքան կարելի է, մի ամբողջություն կազմեն և հարմար լինին եղանակներին ու կրկնակների իմաստին» (6. էջ 70):

Դժվար չէ եղահանգել, որ կյանքի ուսումնասիրություն, սուր դիտողականություն, ժողովրդի հոգու ճանաչողություն դրույթները Կոմիտասը և հայ գրողները վերածում են ժամանակակից արվեստի չափանիշների:

Այնուհետև ուշագրավ են դառնում լրացուցիչ փաստերն ու տեղեկությունները:

«Նավասարդ» հանդեսի համար գրված Կոմիտասի նամակից տեղեկանում ենք, որ ծանր աշխատանքի մի քանի տարիներից հետո անգամ նա դեռևս դժգոհ է հայերի՝ **թքքավարի երգելոց**, որքան և տարիներ առաջ, որովհետև «հայ գեղջուկի երաժշտության քիմքն արևելյան է»: Ուստի՝ շուտով ծառանում է սրա դեմ՝ դարձալ խոստանալով «մաքրել մեր երգեցողությունը» (7. էջ 76):

Եվ արևելահայաստանում, և արևմտահայաստանում Կոմիտասի երաժշտական մշակումներն աչքի են ընկնում լեզվի և խոհի միազին շարժումով, հայերենի պարզությամբ: Կարող ենք նույնիսկ ասել, որ նախնական բնագրերի մեջ նա աննշան բան է փոխում, եթե միայն ստուգ չիներ, թե բանաստեղծության մեջ աննշան ոչ մի բան գոյություն չունի, և միակ բառի, անգամ վանկի փոփոխությունը համախ բավական է, որպեսզի պոեզիան նվազի կամ թեածի (Շ.Շահնոր) (11. էջ 10): Նրա այսպիսի «իմաստուն միջամտությունն» էր երաշխիքը, որ ժողովրդական բնատիպ երգը հետագա շարունակություն գտավ:

Հաստ ժամանակակիցների վկայումների՝ Կոմիտասը ոչ միայն հավաքագրում էր հայ ոգու նշանակները, այլև դրանցով երևան բերում, «հայի մտածող եւ զգացող»՝ **ոգու ուժը՝** արդի երաժշտական միջոցներով միաձայնի կամ բազմաձայնի վերածած:

Ժողովրդական պոետիկայի առանցքային խնդիր է դառնում ազգամշակութային բարդարիչների ճշգրիտ պահպանումը, անմշակ բնագրի **Փոնային տեղեկատվությունն**, որոնք կարող են արտահայտվել ակնարկի, փոխարենության կամ այլարանության միջոցով: Ժողովրդական երգի բանատող-պատկերներում պահպանում են հայ ժողովրդի առասպելաբանական մտածողությունը, հնավանդ առասպելների դրվագներ և պատառիկներ: Անձեռակերտ հուշարձանը փոխադրվում է հնագետի և ոսկերիչի հմտություններով: Կոմիտասն ընդարձակում է պատկերացումը բանարվեստի տարրեր ժամերի փոխադարձ ներքափացման և սահմանների մասին: Նա նկատում է, որ բանարվեստում պատկերային համակարգի հյուսումը տեղի է ունենում վաղնջական շերտերի համատեղմամբ, որոշակի հնանյութի սրողմամբ կամ սյուժետային ներածով: Ընդ որում՝ սրանք կրում են հնդեվրոպական առասպելների և աստվածությունների դրոշմը:

Հնմոն.

Քելե, քելե, քելքիդ մեռնեմ,  
Քո գովական խնդիր մեռնեմ:

Սիրավոր լորիկ, /Վիրավոր լորիկ, /Լորիկ,  
Սևավոր լորիկ, /Լորիկ ջան:

Քելե.քելե, սոյիդ մեռնեմ,

Քո չինարի բոյիդ մեռնեմ:

Քելե, քելե, քողիդ մեռնեմ,

Քո լուսընկա շողիդ մեռնեմ:

Քելե, քելե, բերնիդ մեռնեմ,

Քո սիրունիկ ձենիդ մեռնեմ:

Քելե, քելե, ձեռիդ մեռնեմ,

Քո հոր կըրակ սերիդ մեռնեմ:

Քելե, քելե աչիդ մեռնեմ,

Քո անուշիկ պաշիդ մեռնեմ (13. էջ 101):

«Մեռնեմ» բայով նշութավորված բանաստեղծական բաղադրիչի տեղական ազգային բնույթը պատկերի խորքային ընկալման մեջ է՝ մեռնող հարություն առնող հերանուական աստվածության սրողված հիմքի: Բայիմաստը հուշում է ոչ այնքան կոնկրետ գործողություն ու դրա արտահայտության փոխարերական կերպը, որքան մեռնող հարություն առնող աստծոն պաշտամունքի հիշողությունը ժողովրդի հոգեբանության մեջ: Ժողովրդական երգի վաղնջական բովանդակությունը մասամբ պահպանում է առապեկարանական հնագոյն գիտակցությունը:

Վ. Գ. Գալի բնորոշմամբ՝ ժողովրդական պոետիկայի պատկերավորության հիմքում ընկած է երկու պատկեր համատեղ տեսնելու հնարավորությունը: Այդ պատկերներից մեկը բառի և արտահայտության պատկերավոր (փոխարերական) իմաստն է, իսկ մյուս պատկերը՝ ուղղակի (նախնական) իմաստը: Այդ երկու պատկերները դրվում են մեկը մյուսի վրա: Պատկերավոր՝ դիցարանական նշանակությունը գտնվում է առաջին պլանում, իսկ ուղղակի նշանակությունը՝ երկրորդում:

Ծնունդով Կուտինայից, «Թուրքիոն թրքախոս մեկ կենդանին» (Մարգարիտ Բարայան) (14. էջ 301): Կոմիտասը, բոլոր հակագրող երևոյթները ենթարկում է բանագիտական այսպիսի քննության:

Նոյնը կարելի է ասել Կոմիտասի և Արշակ Չոպանի առասպելաբանական հայացքների ժառանգորդ՝ Դանիել Վարուժանի աշխարհայացքի մասին, որն ուսումնասիրում է աշխարհի հնագոյն բաղադրիկ ժառանգությունների դիցարանական շերտերը, կոռնները, առապեկերը, դյուցաներգությունները, ժողովրդական երգերը: Նրանց՝ այսպես ընկալմած պոետիկան արտահայտում է դարասկզբի աշխարհայացքի էական ուղղությունը՝ նեռումանտիզմը և նրա ենթաշերտը՝ բնաշխարհի բանահյուսական բնարերգությունը: Կոմիտաս-Դանիել Վարուժան առնչության համար սա նշանակալի պնդումներից մեկն է:

Այս տեսանկյունից արժեքավոր են ժամանակակից:

## Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն ե ւ

մերի վկայությունները: Դերենիկ Դեմիքրայանը, մասնավորապես, մեկնարանում է. «Նա (Կոմիտասը) իիվանդ էր ժողովրդական երգով: Նրա ժողովրդական երգի մեջ զգացվում էին ինչ-որ նրբերանգներ, յուրահատուկ ոլթամ, կոլորիտ, որից զորկ էր Կարա-Մուրզայի ժողովրդական երգն իր զինվորական պրիմիտիվով» (14. էջ 17):

Արձակագիր Ավետիս Ահարոնյանը վստահեցնում է. «Հայ հոգին էր զարթնում դարերի անհուններից, Կոմիտասի սրինգի մեջ դարնում ցեղային հոգու զալարումներ աշխատանքի, սիրո, աղոթքի և ցնծության համար» (14. էջ 18):

Մեջքերվածին ավելացնենք մի դիտարկում ևս: Կոմիտասին Կ. Պոլիս ուղղորդելու հարցում իրավամբ ծանրակշիռ էր Արշակ Չոպանյանի ներդրումը: Հատկապես Չոպանյանի շնորհիվ է Թիֆլիսի և Կ. Պոլիսի միջև երկվորդունը լուծվում հօգուս Կ. Պոլիս: Բանսատեղծ, արվեստի փիլիսոփա Ա. Չոպանյանը շահագրգում էր Կոմիտասի երաժշտական, բանագիտական գործունեությամբ: Պարբերաբար նա անդրադառնում է վարպետին՝ նրա երաժշտագիտական հոդվածներով լցնելով Ֆրանչիայի մայորադար Փարիզում հրատարակվող «Անահիտ» հանդեսի էջերը (15. էջ 136):

Ա. Չոպանյանը գրում է. «Կոմիտաս վարդապետ գացած է մտնել ժողովրդին մեջ և վիճարել իմբը, հայ երաժշտության... և «հողեն ժայթքած այդ բնատիպ ձայներուն մեջ ջանացած է գոնել ինչ որ խորքը կը կազմէ...» (15. էջ 157):

Սիմոն Վրացյանը, իիմնավորելով Կոմիտասի նոյն վճիռը, նկատում է, որ դրա հիմքում օրյեկտիվ պատճառարանություն է. «Ան Պոլսոյ մեջ միայն կրնար գտնել այն տարրը զոր կը փնտոր եւ զոր գտաւ»: Ավելի մանրամասն. «Պոլսահայութինն իսկոյն շրջապատեց վարդապետն իր գրագիտներու բազմահոյ փաղանցով, իր հնչել մամուլով, վարժարաններու լայն ցանցով, այլ մանաւանդ իր խանդավառ երիտասարդութեամբ: Օդը թնդաց: «Պոլսահայը պաշտեց իր Կոմիտասը...» (15. էջ 138):

Այս համատեքստում տեղին է հիշել և լեզվարան Հրաչյա Աճառյանի տեսակետը: Նա հայտնում է, որ ժողովուրդը լսեց զուտ հայկական երգերը. «Սիրեց դրանք և այդպիսով դրանք ընդհանուր տարածում ստացան-Կոստանդնուպոլսում» (7. էջ 18): Եվ որ ավելի կարևոր է. «Սա մի տեսակ ազգային շարժում էր», (7. էջ 30) - եղրահանգում է Աճառյանը:

Նոյնիսկ Մանուկ Աբելյանի, Դերենիկ Դեմիքրայանի, Հրաչյա Աճառյանի, Փանոս Թերենեղյանի և եվրոպացիների ոգևորիչ հայացքի պայմաններում 1913 թ. վարկարեկի հոդվածներ են զրում Կ. Պոլսում: «Տաճար»-ն ընդգծում է սուրբեկտիվ մի տեսակետ առ այն, թե Կոմիտասը, իրը, «շարունակական հմտություն չունի»:

Ամփոփելով նկատենք, որ XX դարասկզբի մշակութային իրադարձությունների շուրջ հնարավոր չէ ավելի օրյեկտիվ լինել, քան բանաձևում է Շահան Շահնուրը. «Կոմիտասն է միայն, - գրում է նա, - որ ընտանեկան

հանգրուանէն բարձրացած է ազգայինին» (II. էջ 12):

Որքան էլ 1935 թ. տպագրած նրա անդրադարձը եղեռնից հետո անորոշ պատմական ժամանակաշրջանի արտացոլում է, այնուամենայնիվ, այն զգայի չափով բացում է հայ մտքի հորիզոննը և պահանջ դնում ազգի ճանաչման. «Այն պարզ իրողութիւնը, որ Հայը կրցեր է դիմադրել դարերու խորտակից ճնշումին, - գրում է Շահնուրը, - ինքնին արդէն յաղթանակ մըն է... Նոր յարթանակը պիտի զայ այսօր եւս, քանի որ անցեալի մեջ ան մեզ շնորհուած է բազմից, եւ մենք այսօր կրնանք թուել անոնցմէ չորսը՝ **Ս. Մեսրոպ, Կոմիտաս, Կաթողիկէ և Անդրանիկ**» (II. էջ 6):

Ը. Շահնուրը հնարավոր է համարում, որ հայը եղեռնից հետո հրաժարվի հոգեկան նահանջից՝ խորհեղով զլասպորի՝ հայրենիքի ստեղծման մասին:

Այս համայնապատկերը լրացնում է նաև «Նաւսարդ» տարեգիրը, որը Կոմիտասի և Դ. Վարուժանի մշակութային հղացքի բանակից է:

Տարեգրի 1914 թ.առաջին և միակ համարը կողմնորշվում է. «Դէպի շարժման աւազամ՝ դարնալով նրա ընթացիկ երեսելի արտահայտութիւնը: Օդը լիքն էր գրական հեթանոսութեան եւ ազատութեան բաղարական պատրանքների թեւածումովն» (1. էջ 325) (Մ. Դանիելյան):

Հստ արժանվոյն գնահատելով Կոմիտասի երաժշտագիտական զործունեությունը՝ Դ. Վարուժանը «Նաւսարդ» տարեգրի եզրափակից բաժնում ներկայացնում է Լոռու գործաներզի բնագիրը, տեսական զիտական մի հոդված Կոմիտասից՝ ժողովրդական երգի տաղաչափական կառուցվածքի մեկնությամբ, որին կից Մարգարիտ Բարայանի՝ նրա աշակերտուիո ինքնատիպ վերլուծականն է:

Տարեգրի առաջին ստեղծագործությունը՝ Դանիել Վարուժանի կրապուտն էր՝ նվիրված Անահիտ դիցուուն, հեթանոս հայերի նավասարդյան արևալար ստեղին, հայկան հանձնարին, հայի ազատագրության երազանքի խորհրդին: Առաջին էջերում էր Միամանքոն: Վարուժան-Միամանքոն-Կոմիտաս համարումը խորհրդանշական էր, որն ընթերցողին ի ցույց էր դնում փոխադարձարար հարազատ անհատների զաղափարական լծորդությունը:

Ժամանակի ոգին ըմբռելու առումով առանձնակի կարևոր են դառնում Կոմիտասի ստեղծագործական առնությունները ոչ միայն Դանիել Վարուժանի, այլև՝ Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Մանուկ Աբելյանի, Հրաչյա Աճառյանի, Դերենիկ Դեմիքրայանի, Գարեգին Լունյանի, Արտաշես Հարությունյանի, Լևոն Բաշալյանի, Արշակ Չոպանյանի, Միամանքոնի, Արմենակ Շահնուրյանի, Սպիրիդոն Մելիքյանի, Գևորգ Բաշինջանյանի, Զիթրե Սարաֆի, Ռուբեն Սևակի, Լևոն Շանթի:

Այսպիսով, դարասկզբի մշակութային շարժման մեջ առաջնային է հատկապես բանաձևեղծ Դանիել Վարուժանի դերակատարումը, նրա վերջին՝ «Հացին երգը» զիրքը, որն էթենիկ բանահավաքչական շարժման արգասիք է: Ժողովածուն տպագրվել է առանց իր հեղինակի մասնակցության՝ եղեռնից հետո. ձեռագրի

## Հայոց Ցեղասպանության 105-րդ տարելիցին

թերթերը բանաստեղծի ընկերները զնել եմ՝ պատահական նպարավաճառ մի թուրքից, ուսով:

Հակասակ մեզանում տեղ գտած մտայնության, որով ժողովրդական երգի խոսքն ու մեղեղին քննարկվում էին իրարից տարանջատ, Դ. Վարուժանը դրանք ներկայացնում է ներքին կապի մեջ: Այդ սկզբունքով նա ստեղծում է ժողովրդական երգի հավաքածու, որտեղ հավասարապես կարևորվում են արդի բանաստեղծության ժողովրդական և նեռումանտիկական հատկանիշները: Նայելով առաջ՝ հայ մարդու ապագային, Վարուժանն այդ աշխարհներական մեջ բացահայտում է «իրական աշխարհի գեղագիտական հաստատում» (Ֆրիդլեներ): Նա ժամանակակից շունչ է հաղորդում ազգային ձևին ու բովանդակությանը, որովհետո նրա ընկալմամբ՝ դրանք թեն կայուն, բայց հավիտենարար տրված կաղապարներ չեն: Հայոց հոգևոր առաջընթացը, ըստ նրա, պետք է կրեր առաջադիմության բոլոր տարրերը՝ հայ տեսակին, հայ կյանքին օժանդակելու նպատակադրություն:

Վարուժանի պաշտամունքը երգն է, որը հայ շինականն ստեղծում է բնության մեջ՝ բաց դաշտում, արտավայրերում, վարելահողերում, ամսան թեժ ամիսներին՝ ամեն օր ու գիշեր: Այդ երգերն ուժ և աշխուժություն են հաղորդում շինականին, հույս՝ հաջորդ տարվա պաշարի և կյանքի հանդեպ:

«Հացին երգը» շարքի պատկերները շնչում են լոյսի, արարման կենսահաստատ նվազներով: Ժողովածուի բնարական կերպարը մշակն է՝ հողագործը, որի դպրոցը, ուսուցիչը հայրենի եզերի բնույթունն է: Յուրաքանչյուր գյուղացի գիտի իր տեղանքի մեղեղիները, երգերը, այնպես, ինչպես վարժ է սեփական բարբառն իմանալու հարցում (Կոմիտաս): Նա երգում կալի, վարի, ցանքի, քաղաքանի, հնձի, չուրի, կրի ժամանակ: Բանաստեղծությունը և երաժշտությունը բխում են մորից ու սրտից՝ բնազդաբար՝ առանց որևէ նախապատրաստության, անզիտակից:

Ամարվան քաղցր գիշեր, գլուխը կամին վրա դըրած՝ Աշխատանքի սուրբ Ոզին կալերուն մեջ կը նընջե:

Կը լոյս մեծ լրությիւնն աստղերուն մեջ ծովացած: Անհունը՝ բյուր աշքերու թարբափով՝ զիս կը կանչե:

Դ. Վարուժանի պետիկական նորարարությունը, ըստ էության, հայ էթնիկ հիմքերով բնարերգության ստեղծումն է, որն ուղեկցվում է, առաջին հերքին, լեզվական ատաղձի, երաժշտության, բառամթերքի ներդաշնակությամբ:

Նրա բանաստեղծական պատկերը կրկնում է աշխատանքային խաղիկի ոյթմը, վարակում երգեցիկ սույն արագությամբ, աչքի է լմկնում լեզվանդական պարզությամբ, բառապաշարի թեթևությամբ, հողագործի ձայնարկություններով, բնապատկերի նկարչական կերտումներով: Բրրն բովանդակային միավոր՝ բանատողը հեռու է անորոշությունից, առարկայական է, սահուն, ինչպես և մուածում է աշխատանքին լծկած գեղջուկ մարդը:

Բըլուրին գաղջ կողին վըրա ընկրոնանած

Սրինգ կածեմ,  
Եզները լայն հովիտին մեջ, սրբու երգով,  
Ես կարածեմ:  
Լուսնակն իջած է մանգաղված լուս արտերուն  
Մակերեսին.  
Կը ծավալե խոզաններուն մեջն հեզիկ Կաթը  
լուսին:  
«Ճարակում»

Սա չի նշանակում, թե բնության երգերը միանման են: Կախված նրանից, թե աշխատանքը որքան է բեղմանավոր, երգը տիսուր է լինում կամ ուրախ: Կոմիտասը պարզաբանում է, որ Ապարանի գյուղերում գութաներգը մեղամաղձոս է, քանի որ հունձքը ենթարկվում է բնության պատուհասին, իսկ Լոռու գութաներգը զվարթ է, լավատեսական: Երգը ունի պոետիկական կայուն հատկանիշ՝ գութանի անկվի ձոռոցը, շղթաների շինկոցը, եզների ու զոմեցների փոնչոցը, մաճկալի բացականչությունը գործի ժամին, հոտաղին ուղղված կշտամբանքը, լծկաններին շրայլված խրախուսանքը, խանդատանքը, սերը, որոնք բնազդական են ու ինքնարուխ:

Կամ կը քշեմ վաղվան հոյսով,  
Արևն առած ճակուխ վըրա:  
Հորիզոնը, անհուն լոյսով  
Ի՞մ աչքերու մեջ կը լոյա:  
- Դարձիք, կամրս, արագ դարձիք, հիոն, հիոն,  
Նվաճն դեզերը հունձքերուս, ժիր, ժիր:  
«Կամներգ»

Շարքում նորարարության վարուժանյան ըմբռնումը հանգում է ժողովրդական երգի ավանդույթների շարունականության: Վազգեն Գարբիելյանն իրավացիութեան նկատում է. «Կարծեա գեղջուկ հնձվորի երգի ձայնագործությունն», - «Հունձք կը ժողվեմ» բանաստեղծությունն ի նկատի նա, - երգ, որ հրաշալիրեն ներկայացնում է նրա հոգու երկվությունը՝ հաճույքն ու տառապանքը: Հաճույքը՝ հնձի առթած բերկանքն է, տառապանքը՝ սիրո մրմուռը» (16. էջ 396): Հմնու:

Հունձք կը ժողվեմ մանգաղով,  
- Լուսնակը յարս է-  
Ակոս ակոս մաս զալով,  
- Սիրածու հարս է:  
Գըլսերաց եմ ու բորիկ,  
- Ամուշ են հովեր-  
Արտերուն մեջ թափառիկ,  
- Մազերն են ծովեր:  
Յորեն, կակաչ, կարոտով,  
- Կաքավը կու լա-  
Կապեցի մեկ նարոտով,  
- Ձեռքերն են հինա:  
Հասկերուն մեջ, վերսեն,  
- Ասուպը անցավ-  
Աստղեր մյուսոն կըծորեն,  
- Դեմքը լուսացավ:

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն ե ւ

Քանի խորձեր շաղելով,  
- Վարդենին թաց է-  
Ես կապեցի խաղերով,  
- Ծոցիկը թաց է:

Արտըս խոզանով մինաց,  
- Կերթա լուսնակը-  
Դեկերով լեռ եմ շինած,  
- Սիրտս է կըրակը:

Մանգաղըս քարին եկավ,  
- Յարըս յար ունի-  
Քարեն լորիկը թռավ,  
- Լերդըս կարյունի (17. էջ 177):

Ընդհանրացնող եզրահանգումն այն է, որ Դանիել Վարուժանի բնարական բանաստեղծությունը ևս կերտուված է գեղարվեստական պատկերի բանահյուսական բենվածքով: «Հունձք կը ժողվեմ» բանաստեղծության մեջ.

Ա) գեղարվեստական պատկերը կերտված է լեզվական չափազանց պարզ, անզարդ կառուցվածքով

Բ) աշխատանքն ու խորհրդական չափազանց պարզությունը ունեն, ինչպես ժողովրդական աշխատանքին երգերում է

Գ) մշակն ու բնության երևություն մեկ միասնության եմ զայիս, ներկայանում՝ որպես ընդհանուրի համանրման տարրեր, ինչը բանարվեստում բնությունն աստվածացներու արտահայտություններից է

Դ) զործողության հետ կապված առարկաներն ու աշխատանքային զործիքները հարաշարժություն են պարզություն տողին, գեղարվեստական պատկերի ավարտուր չի ընկալվում, յուրովի շարունակվում է ընթերցողի երևակայության մեջ և հուզաշխարհում: Մանգաղի բանաստեղծական զործառությը գեղագիտորեն բարձրարժան է, քանզի պաշտամունքը բխում է հայ ժողովրդական-աշխատանքային երգի դարավոր հեթանոսական ավանդությներից:

Այսպիսով, Կոմիտաս-Դանիել Վարուժան ստեղծաբանական և գրապատմական առնչությունն դարակազմիկ նշանակություն ունեցող գեղարվեստական իրողություն է հայ մշակույթի պատմության մեջ: Ելենով ժողովրդական երգի ակունքներից և Կոմիտասի՝ զրեթե անձեռակերտ խմբագրումներից՝ Դանիել Վարուժանը ժողովրդական երգերի պոետիկական համակարգը տեղափոխում է ժամանակակից բանաստեղծության տիրույթ՝ կերտելով նոր պոեզիա՝ բնաշխարհի բանահյուսական հարուստ գունապնակ, ազգային կողործու, գեղարվեստական լեզվանուածողություն, նոր տրամադրություններ, ըստ ամենայնի՝ բանաստեղծական բոլորվիճ նոր տեխնիկայի կիրառություն և այլն: Նրա բնապատկերի ֆոնին հայ գեղջուկի հուզաշխարհն ու տրամադրություններն են, որոնք թուրքական սահմանադրությունից հետո նեռումանտիկական անհատի հատկանիշներով են արտահայտում ազգային վերածննդի գաղափարախոսությունը՝ շրջանցելով նախընթաց շրջանի որոշ վերապահումներ՝ առաջացած համիլյան, ապա՝ Աղանայի կոտորածների արդյունքում:

Դ. Վարուժանի «Հացին երգը» պատմական արժեք ունեցող գրական ծրագիր է, քանի որ հատակեցնում է նախորդ դարասկզբի մշակութարանական ընթացքի զլասվոր ուղղություններից մեկը՝ ազգային նեռոռնամանափակմը՝ հայ գրականության հաջորդ հարյուրամյակը կողմնորշելով դեպի հայ բնաշխարհի բանահյուսական գանձարանը: Որպես այդպիսին՝ Դանիել Վարուժանի բանաստեղծական ձեռնարկին ամհնարին կիմներ՝ առանց Կոմիտասի բանահյուսական դպրոցի ներգործության, ինչպես նաև՝ եվրոպական բանագիտության համապատասխան բարձր աստիճանի գարգարման, ինչին առնչակից էին երկուն էլ՝ Կոմիտասը և Դանիել Վարուժանը, մասնավորապես, նաև եվրոպական ակադեմիական կրթություն ստանալու բերումով:

Լինելով եղենագործ մտավորականներ՝ Կոմիտասի և Դանիել Վարուժանի զործուելությունն այսօր՝ հայ ժողովրդի և հայկական մշակույթի բնաջնջման փորձի 105-րդ տարում, զիտակցվում է՝ իրքն ազգապահպանության անուրանալի ջանք, հանուն ազգային մշակույթի զորացման անգնահատելի ներդրում և գեղարվեստական զիտակցության մի այնպիսի անգերազանցելի աստիճան, որը նշանության է, անշրջանցելի՝ անզամ զալիք հարյուրամյակների կտրվածքով: Այսուհետև ուսումնասիրություն կարող է ծավալվել բացառապես բյուրեղացված ազգային ձեռների, երաժշտության, քնարերգության ուղղությունում:

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. Կոմիտաս վարդապետ, Ռւսումնասիրությիններ և յօդուածներ, Երկու գրքով, Գիրք Ա, Եր., 2005 թ.: *Komitas var-dapet, Usumnasiruthunner ev hodvatsner, erku grqov, Girq A*, Yer., 2005 th.
2. Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Եր., 1987 թ.: *Varuzhan D.*, Yerkeri liakatar zhoghovatsu, hat. 3, Yer., 1987 th.
3. Սարիմյան Ս., Հայ բնադատության պատմություն, հատ. 2, Եր., 1998 թ.: *Sarinyan S.*, Hay qnnadatuthyan patmuthyun, hat. 2, Yer., 1998 th.
4. Դանիելեան Ս., Արևմտահայ գրականութիւն, Եր., 2014 թ.: *Danielean S.*, Arewmatahay grakanuthyun, Yer., 2014 th.
5. //Մեհենան, հանդէս գրականութեան և արտեստի, խմբագրապէտ՝ Կոմիտաս Զարեսան, Կ. Պոլիս, Յունվար, 1914 թ.: //Mehean, handejs grakanuthean ew aruesti, khmbagrapejt: Kostan Zarean, K. Polis, Yunvar, 1914 th.
6. Սիրունի Յ., Պոլիսը և իր դերը, Փուրքէ, 1945 թ.: *Siruni Ey.*, Polis' ew ir dejr', Phuqrejsh, 1945 th.
7. /Կոմիտասը ժամանակակիցների հուշերում ու վկայություններում, Եր., 2009 թ.:, /Komitas' zhamanakakitzneri husherum u vkarayuthyunnerum, Yer., 2009 th.
8. Արփիարեան Ա., Պատմութիւն Ժթ դարու Թուրքիու հայոց գրականութեան, Գահիրէ, 1934 թ.: *Arpiarean A*, Patmutiwn ZhTh daru Thurqioey hayotz grakanuthean, Cahirej, 1934 th.
9. Կոմիտաս, Քնարերգութիւններ, Ներածութիւններ, Ազատական կազմութեան պատմութիւններ, Ազատական կազմութեան պատմութիւններ, 1939 թ.: Komitas, Qnarerguthiwnner, Neratsuthiwn, Th. Azateani, Kalathash-Isthanpul, 1939 th.
10. Կոմիտաս, Հայ գեղջուկ երաժշտությունը, 2015 թ.: *Komitas*, Hay geghjuk yerazhshtuthyun', 2015 th.

## Հայոց Ցեղասպանության 105-րդ տարելիցին

11. Ծահան Ծահնոր, Ազատնա Կոմիտաս եւ իր յաւելագիր Վաղը, Եր., 2003 թ.: *Shahan Shahnur, Azatn Komitas ew iwr hawelagir Vagh'*, Yer., 2003 th.
12. Կոմիտաս, ԵԺ, Առաջին հասոր, Մեմերգեր, Եր., 1969 թ.: *Komitas YeZh, Arajin hator, Menerger*, Yer., 1969 th.
13. Գակ Բ. Ղ., Բեսեծ օ ֆրանցուսկ լուսական, Մ., 1966. *Gak V. G., Besedy o frantuzskom slove..*, M., 1966.
14. //Նավասարդ, Կ. Պոլիս, 1914 թ.: //*Navasard, K. Polis, 1914 th.*
15. Չոպանեան Ա., Դմբեր, Փարիզ, 1924 թ.: *Chopanean A., Dejmger, Phariz, 1924 th.*
16. Գաբրիելյան Վ., Դանիէլ Վարուժան, Եր., 1987 թ.: *Gabrielyan V., Daniel Varuzhan*, Yer., 1987 th.
17. Դամիել Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հան. 2, Եր., 1986 թ.: *Daniel Varuzhan, Yerkeri liakatar zhogovatsu*, hat.2, Yer., 1996 th.

---

**Քանայիքագիր** գրապատմական ընթացքի յուրահատկություններ, պոեզիայի պոետիկական համակարգ, բնաշխարհի բնարերգություն, ազգային և նեոռոմանամտիկական ավանդությունների համադրում, ազգամշակութային բաղադրիչ, գրական ժառանգություն, հերանուական գաղափարաբանություն, գեղարվեստական պատկերի բանահյուսական օրինաչափություններ:

**Ключевые слова:** особенности литературного процесса, поэтическая система поэзии, лиризм природы, сочетание неоромантических и мифологических традиций, национально-культурный компонент, литературное наследие, язычная идеология, фольклорные образцы художественного образа.

**Keywords:** writing process, poetry system, poetry of nature, neo-romantic tradition, national tradition, national culture, literary heritage, paganism, folklore patterns of, artistic image.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԱՆՏՈՆՅԱՆ ԼԻԼԻ ՍԵՐԵՋԵՎԱՆ (ծ. 12.2.1967 թ. ք. Կիրովական (այժմ՝ Վանաձոր), ՀՀ): Ավարտել է՝ 1984-ին Կիրովականի 6-րդ միջնակարգ դպրոցը (գերազանց), 1988-ին՝ Կիրովականի պետական մանկավարժական համալսարանի լեզվագրական ֆակուլտետը (կարմիր դիպլոմ): 1999 թ. ՀՀ ԳԱԱ Մ. Արենյանի անվան Գրականության ինստիտուտում պաշտպանել է գիտական ատենախոսություն՝ «Պատմականը և ավանդականը Դամիել Վարուժանի պոետիկայում» թեմայով: Ստացել է բանահյուսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (դիլ.՝ ակադեմիկոս Մերգել Մարգերի Մարգարյան), արժանացել է լոցենայի կոչման: Դասավանդել է՝ 1988-1999 թթ. հանրակրթական դպրոցներում՝ հայոց լեզու և գրականություն, աշխատել է տառմնական և դաստիարակչական գծով փոխանօրեն, 2000-2015 թթ. Վանաձորի պետական մանկավարժական համալսարանում գրականության ամբիոնի դոցենտ (2001 թ.), ընդունվել ՎՊՀ ուսումնական վարչության պետ: 2019-ի հոկտեմբերից Երևանի ՀՊՀ հայագիտության ամբիոնի դասախոս: 2012 թ. ընտրվել է ՀՀ գրողների միության անդամ: 2016 թ. ՀԳՄ վարչության անդամ է: 2019 թ. ՀՀ ԿԳՆ և ՀՀ ՄԽ հայուսարարած «Իմ արվեստը դպրոցում» մրցուային ծրագրի հաղորդ է: Ծուր 40 գրականագիտական հոդվածների հեղինակ է:

**Сведения об авторе:** АНТОНИЯН ЛИЛИТ СЕРЕЖЕВНА (род. 12.02. 1967 в Кировакане, ныне Ванадзор). Окончила: Кироваканскую среднюю школу N 6, с отличием (1984); лингвистический факультет Кироваканского государственного педагогического университета, с отличием (1988). С 1971 по 1972 годы работала в школах республики преподавателем армянского языка и литературы, заместителем директора по образованию и воспитанию. Защищила в Институте литературы им. М. Абегяна Национальной Академии наук Республики Армения научную докторскую диссертацию по филологии на тему "Пoэзия Даниила Варужана" (научный руководитель - академик Сергей Саринян, 1999). Работала: в Ванадзорском государственном педагогическом университете в должности доцента (с 2001) на кафедре литературы и одновременно заведующим учебным отделом (2000 - 2015); преподавателем кафедры арменоведения в Ереванском государственном университете (2006 - 2019). Член Союза писателей Республики Армения (2012), член правления АВП (2016). Победительница конкурсной программы "Мое искусство в школе" (2019). Автор около 40 статей в области литературы.

**Information about an author:** ANTONYAN LILIT SERYOZHA, born in 1967 in Kirovakan (now Vanadzor). She graduated with honors from the Faculty of Linguistics at the Kirovakan State Pedagogical University (1988). In 1988-1999 she has been teaching Armenian language and literature in various schools in Armenia and working as a deputy principal for Education and Training. In 1999 L. Antonyan defended the thesis on "The Historical and the Traditional in Daniel Varuzhan's Poetry" for the Ph.D. in Philology at the M. Abegyan Institute of Literature of the National Academy of Sciences of the Republic of Armenia (Research adviser Acad. Sergey Sarinyan). In 2001 she became an Associate Professor. In 2000-2015 L. Antonyan has been working as an Associate Professor at the Department of Literature at the Vanadzor State Pedagogical University, and as the Head of the Department of Education at VSU. Since 2019 she is a lecturer at the Department of Armenology at Russian-Armenian Slavonic University. In 2012 L. Antonyan was elected as a Member of the Writers' Union of the RA (WUA), and since 2016 she was a Board Member of the WUA. In 2019 she won the "My Art at School" contest, organized by the Ministry of Education and Science of the RA. L. Antonyan is the author of around forty articles on literary studies.

## Կ ոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակին

Բաշխնջաղյանի արվեստանոցում  
սեպտեմբեր 4



Գևորգ Բաշխնջաղյանի  
արվեստանոցում՝  
Կոմիտոս,  
Դազարոս Աղայան,  
Վրթանես Փափազյան,  
Լևոն Շամբ,  
Գևորգ Բաշխնջաղյան,  
Դովիհաննելի Թումանյան,  
Ավետիք Իսահակյան.  
Թիֆլիս, 1908 թ.

### Резюме

Литературовед, кандидат филологических наук, доцент РАУ **Лилит Серёжевна Антоян.** – «Фольклорные краски природы. Комитас-Даниэль Варужан».

Начало XX века – поворотный момент в истории армянской культуры. Поселившись в бывшей столице Турции Константинополе, Комитас собирает и распространяет лирические песни армянского мира, ему открывается широкое поле для творчества. Предметом статьи являются культурный процесс начала прошлого века, теоретические и практические инновации поколения, художественно-идеологические цели журнала «Мехеан» и ежегодника «Навасард». Наше внимание также уделяется сборнику молодого поэта Д. Варужана «Песня хлеба» как неоромантической реальности на поэтической основе народного лиризма. Своими произведениями Комитас и Варужан основали движение национального возрождения и привнесли национальную культуру в развитие европейской мысли.

### Summary

*Philolog, PhD in Philology, Docent of RAU Lilit Sereja Antonyan. – “Folklore colours of the nature. Komitas-Daniel Varuzhan”.*

The beginning of the 20<sup>th</sup> century, more precisely 10's are a turning point in the history of Armenian culture. Composer Komitas collects and disseminates lyrical songs of the Armenian world, settling in once capital of Turkey, Constantinople. Here a wide field of cooperation opens for him. The subject of the article is the cultural process of the beginning of the last century, the theoretical and practical innovation of the generation of the world, the artistic-ideological purposes of “Mehyan” magazine and “Navasard” yearbook. Also, we focus on the young poet Daniel Varuzhan's poetry collection “HatsinYerge” as a neo romantic reality on the poetic basis of folklore lyricism. With their work, Komitas and Varuzhan formed a national renaissance movement and made it possible to bring national culture to the advance of European thought.

## ՄՈՒՇԵԴ ԶԱՔԱՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

**Երգիչ,  
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ  
E-mail. musheg56@mail.ru**

## ԿՈՄԻՏԱՍԻ ՏԱՍԼ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԳՉԻՆ

«Յա երաժշտությունն իր մեջ կսնուցան ոգին  
իր իսկ ցեղին, որովհետև երաժշտությունը ամենեն  
մաքուր հայելին է ցեղին» (1.):

### ԿՈՄԻՏԱՍ

«Ինչպես հայտնի է, Բեռլինում Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում Կոմիտասը նաև խրմավարության և նայնի մշակման (ձայնամարզության) դասեր է անցել: Հետազայում խորանարդ ձայնամարզության մեջ՝ ձայնամարզության և նայնի դրվագի վերաբերյալ հանգել է սեփական համոզմունքների, մշակել սեփական հայացքների» (2. էջ 136), որոնք նա ամփոփել է երգչին ուղղված իր տասը պատվիրանների մեջ: Ենքաղում ենք, որ այդ պատվիրանները կապ ունեն մեր ազգային երգերի ու ազգային երգեցության հետ, և դրանց գոյության հիմքերը պեսք է փրնուրել քայլերի այն հաշորդականության մեջ, որոնցով շարժվել է Կոմիտասը հայ երաժշտության ինքնուրյունը բացահայտելու ճանապարհին: Այն ինքնուրյան, որի գոյության փաստն ինչպես օտարները, այնպես էլ մեր հայ երաժշտական աշխարհի որոշ ներկայացուցիչներ չեն ընդունում:

Մարտու Իզմիրլյանին հասցեազրված (1910 թ., 12 հունվար Սր. Էջմիածին) նամակից պարզ է դարձնում, որ Վեհափառ Կոմիտասին բանավոր հրաման է տվել՝ ուսումնասիրել և հաշվետվորյուն ներկայացնել հոգևոր երաժշտության ընդհանուր իրավիճակի մասին: Ահա նամակից մի հատված:

«Ձեր Վեհափառութեան, բանաւոր բարձր հրամանի համաձայն ներկայացնում եմ հետևեալներն ի բարեհայեցութեան.

Ա. Վերջին 20-30 տարիները պատկերացնում են մեր հոգևոր երաժշտութեան աստիճանական անկումն՝ ընդհանուր հայ եկեղեցիներում: Ազգային ճաշակն օտարացած և խորթացած, աւելին կասենք, ծաղրի առարկայ դարձած յանձին տգիտ և անձնապատան դպրապետների, որոնք չգիտեն իրանցը, չեն էլ ուզում որոնել, սովորել և արհամարիելով ամեն ինչ՝ բերում են իր գեղեցիկ, ընտիր, բայց իրօ կործանարար երաժը-

### ՄՈՒՇԻԹԻՆ» (3.):

Կոմիտասի վկայությամբ, նոյն մտահոգիչ պատկերը գուսանական երգարվեստով է:

«Հայ գուսաններն ունին, ժողովրդականից անկախ, ինքնուրույն դպրոց: Գուսանական դպրոցները երկու տեսակ են: Առաջնին պատկանում են կրթվածները, երկրորդին՝ անուսունները: Վերջինները մի կամուրջ են կապում բուն ժողովրդականի և կրթված գուսանական դպրոցի մեջ: Երգում են օտար կամ մայրենի լեզվով. օտար եղանակներն՝ անշնորհք, աղավաղված, իսկ հայ շինական երգերը՝ թեպետ բավական ուղիղ, բայց բարարական, ծուռ ու մուռ, անկայուն և անձաշակ տարախաղությամբ» (4.):

### ԱՅՆԻՒԹԵՍ ՃԱՎՈՒ ԱԿԱՍՈՒՄ Է.

«Մենք ինչ գիտենք՝ ինչ է ուզում հայի հոգին: Մենք վիճաբանում ենք, թե ինչու է օտար ասում, թե հայը չունի ինքնուրույն երաժշտություն, երբ մեր մտակորականությունն ամեն տեղ հայ երգի անվան տակ հայերեն բառերով ուսական ոռմաններ, իտալական մեղեդիներ կամ տաճկական բայաթիներ է երգում: Էլ ինչո՞ւ պեսք է օտարը գիտենա, թե որն է քո երգը, երբ Պոլսում հայ տիրացուները հարուստ ամիրաններին դուր գալու համար կլկլացնելով պատարագ են երգում նմանեցնելով տաճկական եղանակներին: Այդ թյուրիմացության պատճառը գիլայնորապես թուրք և պարսիկ երաժշտությունների ազդեցությունն է» (1.):

Թեպետ Կոմիտասը թուրք և պարսիկ երաժշտության ազդեցությունը համարում է կործանարար, այնուամենայնիվ ընդունում է դրանց գոյության փաստը: Ահա թե ինչ է զրում նա.

«Աշխարհի ո՞ր երաժշտությունն անխառն ու անապակ է, մեր գիտցածով, միայն անասուններունը, որոնք նոյն ձայնն ու նոյն եկեղեցը կերպեն, զի փոխառության շնորհը չունին: Ազգերու փոխադարձ ազդեցությունն անուրանալի և անհերքելի փաստ է, որովհետև անազդեցիկ մնացած ազգ չկա, յուրաքանչյուր ազգ, ինչ որ չունի, ունեցողներն, պեսք զգացած ժամանակ, փոխ կառնե և կազզայնացնե» (4.): Այս հանգամանքը հաշվի առնելով, մենք ուսանողներին հորդորում ենք հաշվի առնել շատ կարևոր մի բան, որ այդ փոխազդեցությունն-

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ, Գոհար Կառլենի Շագոյան 22.12.2020 թ., ընթերցվել է գիտաժողովում և ընդունվել տպագրության՝ 25.11.2019 թ.,  
ներկայացրել է հեղինակը՝ 20.12.2019 թ.

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

մերը գտած ճամապղական իմաստով մի բան են, իսկ օտար արժեքներով սնվել և դաստիարակվելը մի այլ բան: Առաջին կարևոր քայլը, որ կատարեց Կոմիտասն այն էր, որ որպես բանահավաք գրառեց մեր երգ երաժշտության նմուշները: Ինչպես նկատում է Ցիցիլյա Բրուտյանը. «Կոմիտասը երաժշտագիտական ուսումնասիրություններով ոչ միայն ցոյց տվեց, որ հայն ունի ինքնուրույն երաժշտություն, այլև մանրազնին վերլուծության ենթարկեց այդ ինքնուրությունն ապացուցող բոլոր ինքնատիպ հատկանիշները: Դրա համար Կոմիտասը զնաց մեր երաժշտության սկզբնավորման խորքերը՝ մինչև հեթանոսություն: Այդ ճամապարհն ինքը գտավ մազաղաթներում, պատմիչների մոտ, դպրեվանքում, բանահյուսությունից մինչև ճարտարապետություն, հողից մինչև ոգի ընկած տարածության մեջ» (5.): Կոմիտասն ազգային ինքնուրույն կատարողական ոճի ծևակորման հիմքերը փնտրեց և գտավ մեր ազգային երգերի առանձնահատկությունների, երգաստեղծողության միջավայրի, ազգային հոգեբանության, լեզվամտածողության, ինչպես նաև մեր մարդարանական տեսակի մեջ: Ստորև ներկայացնում ենք մեր ազգային երաժշտական ոճի ծևակորման հետ կապված Կոմիտասի դասողությունները:

Կոմիտասը համոզված էր. «ով ուզում է ստեղծել հայ կուլտուրական երաժշտություն, նա պիտի հիմք ընդունի ժողովրդական երգը, նա պիտի դեկավարվի այդ երգի ոճական սկզբունքներով, այլապես նրա ստեղծած երաժշտությունը չի լինի հայկական երաժշտություն» (6.):

«Երգաստեղծության շնորհը գեղօնուկի համար մի բնատուր պարզել է, ամենքն էլ, լավ կամ վատ, խաղ կապել և երգել գիտեն: Նա սովորում է երգաստեղծության արվեստը հենց բնության գրկում, որ նորա անդավագան դպրոցն է: Ոչ մի զյուղացի, տանը նստած կալի երգ չի ասի, որովհետեւ կալերգն ստեղծելու և ասելու տեղն է կալը: Յուրաքանչյուր երգ կապված է զյուղական կյանքի մեկ բովելի հետ, տալիս է միայն այդ բովելի հաշվին: Ժողովորդը ժամանակից և տեղից բաժան երգ չի հասկանում, չի ստեղծում և չի էլ գործածում» (4.):

Կոմիտասի հավաստմամբ՝ «ժողովորդը երգում է այնպես, ինչպես խորհում է և խոսում: Երգը և խոսքը միատեսակ կարողություն են. որքան լավ խորի մարդը, այնքան լավ կխոսի և կերգի», «Խոսքն ու ծայնը, բանաստեղծությունն ու երաժշտությունն իբր երկվորյակ քույրեր, բխում են անսպառ կերպով ժողովորդի մտքից ու սրտից, բնագրաբար և առանց կանխակալ նախապատրաստություն ունենալու» (7.):

«Յուրաքանչյուր ազգի երաժշտությունն իր ազգի ինչական եկեղեցներեն կը ծնի ու ծավալի: Հայ լեզուն ունի իր հասուլ ինչավորությունը, որեմն և համապատասխանող երաժշտությունը: Ով հայ ժողովորդ. ազգ ես և ինքնուրույն այնքան, որքան մյուսները. այդ ոչ որ կարող է եերքել: Ունիս հասուլ լեզու, կը խոսիս: Ունիս հասուլ ուղեղ, կը դատես: Ունիս հասուլ մարդկան կազմ, որով կը զատիկիս այլ ազգերեն ու անոնց կազմն» (4.): Կարապետ Կոմիտասնին, 1897, 27/15

ապրիլի, Բեռլին գրված նամակից պարզ է դատմաւ, որ Կոմիտասը գտել էր այդ ոճը և ստիպել օտար երաժշտներին ընդունել դրա ինքնուրույնությունը:

«Ուստիցապես միշտ կրկնում է. Դուք ստեղծել եք երաժշտական ազնի և ինքնուրույն ոճ, որ կարմիր գծի պէս ծեր ամբողջ գրուածքների և շարադրութեանց մէջ պայծառ անց է կենում. այդ ոճը ես անուանում եմ Հայկական ոճ, ասում է, որովհետեւ մեր երաժշտական ծանօթ աշխարհի համար նորութիւն է» (6.):

Ընդհանրացնելով իր ուսումնասիրությունների արդյունքները՝ Կոմիտասը տալիս է ազգային երաժշտության հետևյալ բնութագիրը. «Ինչ է ազգային երաժշտությունը, ինչ է նյութ տալիս ազգային ժողովրդական երգերին: Արդյոք նրա հպարտ լւոները, խոր ձորերը, դաշտերը, բազմազան կիման, պատմական հազար ու մի դեպքերն ու անցքերը, ժողովրդի ներքին և արտաքին կյանքը. – այն, այս բոլորը, բոլորը նյութ են կազմում ազգային երաժշտության, մի խոսքով այն ամենը, ինչ ազդում է այդ ազգի զգայարանքների և մտքի վրա» (4.):

Դատելով այն բանից, որ Կոմիտասը տարբեր ազգերի երաժշտական փիլսագրեցությունն անհերքելի և անորոշական փաստ էր համարում, կարող ենք ենթադրել, որ Կոմիտասի պատվիրանները, որպես ծևական ոճականամարզության դպրոցի և Կոմիտասի սեփական համոզմներներից ու հայացքներից կազմված մի ինքնատիպ համարդական ծանուածության մեջ երգաստեղծության մեջագրի, ազգային ոճի, երգաստեղծության ծերի և միջավայրի մեջ բնությունն է խոսում, և շատ բնական է, որ Կոմիտասը պատվիրանների ստեղծման հարցում դիմել է բնության օգնությանը: Բնականաբար բոլոր տարը պատվիրանների իրենց վերջնական ծևակերպումներն ստացել են Կոմիտասի պրիզմայով անցնելուց հետո, սակայն մենք դրանք պայմանականորեն կրաժանեմք երկու խմբի և այս հողվածում կանդրադառնանք առաջին խմբի պատվիրաններին:

Առաջին խմբի պատվիրանների մեջ են մտնում (1, 2, 4, 5, 8) պատվիրանները, որոնց մեջ բնությունն է խոսում, իսկ ծևակերպումները պայմանակորված են ծայնամարզումների հետ կապված Կոմիտասի զգացողություններով և ընկալումներով: Երրորդ պատվիրանը կարող ենք համարել առաջին պատվիրանի ածանցյալը, կամ դրա պատառման համար նախապայման: Երկրորդ խմբի պատվիրանների ծևակերպումները պայմանավորված են ծայնամարզումների հետ կապված Կոմիտասի զգացողություններով և ընկալումներով միայն: Առաջին պատվիրանում Կոմիտասն ասում է. «Երգելուց առաջ ամբողջ նարմինը կարծես մենած մարզանը կմեղքն ու եռանդուն» (2. էջ 137): Առաջին հայացքից քվում է, թե այստեղ բնության մասին խոսք չկա, բայց դա այդպես չէ: Խնդիրը հետևյալ մեջ է: Յանկացած մարդկան կազմը կապված է այն ամառապատճենների հետ կապված Կոմիտասի զգացողություններով և ընկալումներով միայն: Առաջին պատվիրանում Կոմիտասն ասում է.

«Երգելուց առաջ ամբողջ նարմինը կարծես մենած մարզանը կմեղքն ու եռանդուն» (2. էջ 137): Առաջին հայացքից քվում է. «Երգելուց առաջ ամբողջ նարմինը կարծես մարդկան կազմը, որով կը զատիկիս այլ ազգերեն ու անոնց կազմն» (4.): Կարապետ Կոմիտասնին, 1897, 27/15

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

է: Կոմիտասը մարզամբ ասելով նկատի ունի այն շնչառական վարժությունները, որոնց միջոցով վերականգնելով է երգի բնական շնչառությունը: Երկրորդ պատվիրանով Կոմիտասն ասում է. «Զայնը հազիվ լսելի շշուկով սկսել և երգել պիհանո-պիհանիսմո, դեռ կիսաստիճաններով բարձրանալ և լայնացնել ձայնաշարը» (2. էջ 138): Ինչպես քիչ հետո կհամոզվենք, այդ պատվիրանի ձևակերպման մեջ և բնույթումն է խոսում, և մեր ենթադրությամբ նաև հայ գեղջուկի բնական երգելանք, որի հետ Կոմիտասը շփվել է այդ երգերը ձայնագրելու և տուունասիրելու ժամանակ, բազմաթիվ անգամներ լսել այդ ձայնագրությունները, բնականարար փորձել նաև սեփական ձայնով վերարտադրել:

Ֆրանսիական երաժշտության մասնագետ Ամերիկ Գաստոն միի, «Հայկական երաժշտության արթեսի պատմության մասին» գեկույցում կարդում ենք. «Ժողովրդական երաժշտության մարզում ևս Հայր Կոմիտասն անհստու հավաքում էր գեղջկական երգերն այնքան համով-հոտով: Որքան հետաքրքրությամբ էին լրացում նրա զվարճայի պատմությունները, որ նա քողազեր էր անում յուր խորամանկությունները, որոնց նա երբեմն ստիպված էր երեխ դիմել, որպասզի չխրանեցնի գեղջուկ երգիչներին, թվերի տակ թարճնելով կամ պատկերով զյուղական մի կտրին՝ այնուեղից ձայնագրելու համար բակում երգվող ու հորինվող խոսր ու երաժշտությունը» (2. էջ 261, 262): Հարց է առաջանում, իսկ ինչ էր անում գեղջուկը թվերից այն կողմ, պարզ է, հասուկ երգելու համար չէր եկել և կարևոր չէ թե ինչ, բայց ինչ որ աշխատամբ կատարելիս է եղել: Միայն այդպիսի խորամանկությամբ, թվերի տակ քողարկված կամ կտրուների վրա աննեկատ պարկած վիճակով է Կոմիտասին հաջողվել գեղջուկից կորցել հայ երգը՝ պարզ, անաղարտ վիճակում, հնարավորություն տալով գեղջուկին՝ չպարտադրված, առանց նախապես հասուկ պատրաստվածության, կարելի է ասել իմբնամուաց երգեցողությամբ՝ ժողովրդական լեզվով ասած՝ դնդնալով: Զարմանալիորեն այն նման է **p, pp**, երգեցողությանը, բայց մի տարբերությամբ, որ դնդնալով երգեցողությունը երկրորդ պատվիրանում ունի այլ նշանակություն, ավելի կոնկրետ՝ Կոմիտասը խորհուրդ է տալիս այն օգտագործել որպես ձայնամարզության միջոց: Իզոր չէ, որ Գերմանիայում ստվրող Կոմիտասը նամակ է գրում Վաղարշապատ, ճեմարանի տեսուչ Կ. Կոստանդիանին. և ի թիվս այլ հարցերի խորհուրդ է տալիս նաև խնդրում է, որ «ինչքան կարելի է մեղմաձայն երգեցողութեան ընտելացնեն աշակերտներին» (6.):

Երգի ձայնալարերի աշխատանքը շնչառական հանգիստ վիճակից ակտիվ վիճակի թերելու համար, կամ որ նոյն է՝ հնչյունային ալիքի ճիշտ կազմակերպման համար, անհրաժեշտ է այն միանգամից ուղարկել ձայնադարձի տեղերը, շրջանցելով խոչակը (Տօրտա):

**Բանալի-բառեր.** Կոմիտաս, երգեցողություն, տաս պատվիրաններ, հայ երգ, երգական տեխնիկա, շնչառություն, խոչակ, դաստիարակություն:

**Ключевые слова:** Комитас, пение, десять заповедей, армянская песня, певческая техника, дыхание, гортань, воспитание.

**Keywords:** Komitas, singing, ten commandments, Armenian song, singing technic, breathing, larynx, education.

# Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակին

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՄՈՒԾԵՂ ԶԱՔԱՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ [ծ. 30.10.1956, գ. Աղդը (այժմ՝ Զորավի), Արագածոտնի մարզ, ՀՀ]: Ավարտել է Երևանի 86-րդ համբակըր. միջն. դպրոցը (1973 թ.), 1985-ին՝ Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտը, 1994-ին՝ ԵՊԿ ժողովրդական մեներգեցողության բաժինը (պրոֆ. Ս. Գ. Ուկանյան): Աշխատել է՝ «Գանձասար» ազգագործական երգի և պարի անսամբլում՝ երգիչ (1989-1992 թթ.), Հայաստանի հանրային ուսուոյնի «Սայար-Նովա» աշուղական երգի պետական անսամբլի հիմնադիր անդամ և մենակատար (1992-2003 թթ.), «Ազատուրյան» ժողովրդական գործիքների անսամբլի մեներգիչ (1996-1998 թթ.), Հայ-Իրանական մշակութային միության «Միր» անսամբլի մենակատար (2002-2003 թթ.): Եղել է 2008-2011 թ. Կենտրոն հեռուստաընկերության «Հույսի քարավան» երաժշտ. հաղորդաշարի (հեղինակ և վարող), որը գործակենութար ցուցադրվում էր Լու Անգելեսի Է.Յ.Ի.Ռ. ՁԻ հեռուստալիբրով: Դասավանդում է՝ 2002-ից ԵՊԿ Հայ Հայ ժողովրդական մեներգեցողության և նվազարանների ամրիթում՝ դասախոս և Ռ. Մելիքյանի ամվ. երաժշտական քոլեջի երգեցողության բաժնի դասնական դասների մեջ: Եղել է հայրենասիրական երգերով խրախուսել հայ գինուրբերին: 2003-ին «Միր» անսամբլի հետ մասնակցել է Թիերանում անցկացվող «Ֆաշրի» միջազգային փառատոնին: Թողարկել է ձայնասկավառական 2003-ին «Գուսան» անսամբլ՝ 30 համերգ Ֆրամսիայում՝ Փարիզ, Մարսել, Լիոն: Բազմարիվ համերգներով հանդես է եկել Հայաստանի շրջաններում: Ուսաստանում, Ուգելիսանում, Սրբացում, Իրանում, Ֆրամսիայում, Բելիֆայում և այլն: Հանրային ուսուոյնի ֆոնդում կատարել է բազմարիվ աշուղական և հոգևոր երգերի ճայնագործություններ (Գրիգոր Նարեկացու «Տաղ Հարության», Պետրոս Ղափանցու «Առավոտյան քաղցր և անուշ հովերն» ևալյան): Հեղինակ է շորջ 10 երգի և թողարկել է՝ «Կարոս» (CD-2000), 3 գրքերի՝ «Չոներգեր» երգարանի (2014 թ., 104 երգ), «Մի համերգի պատմություն» (2006 թ.), «Ալոր» բանաստեղծությունների (2009 թ.): 2006, 2016 թթ.՝ նրա 50- 60-ամյակներին նվիրված հորենական համերգներ երևանում:

**Сведения об авторе:** МУШЕГ ЗАХАРОВИЧ АРУТИЮНЯН [род. 30.10.1956, село Ахцк, (ныне Дзорак), Арагацотнской области РА]. Окончил: Ереванскую среднюю школу N 86, Армянский сельскохозяйственный институт (1985), отделение "Армянское пение" (класс проф. А. Восканяна) ЕГК (1994). Работал в фольклорном ансамбле песни и танца "Гандзасар" (1989-1992), основатель и солист Государственного ансамбля ашугской песни "Саят-Нова" Общественного радио Армении (1992-2003). Солист ансамбля народных инструментов "Азатуцион" (1996-1998), солист ансамбля "Мигр" Армяно-иранского культурного союза (2002-2003). С 2008-2011 являлся автором и ведущим музыкальных передач "Карастан надежды" (телекомпания "Кентрон"), которые одновременно транслировались по каналу AMG (Лос-Анджелес, США). Преподает с 2002 года на кафедре "Армянского народного пения и музыкальных инструментов" ЕГК и на отделении "Армянского пения" в Музикальном колледже им. Р. Меликяна. С 1992-1994 годы во время Арцахской войны выступал с многочисленными концертами (с военно-патриотическими песнями) на передовой во время военных действий. В 2003 с ансамблем "Мигр" Армяно-Иранского культурного союза участвовал в международном фестивале "Фаджр" (Тегеран), а также записал CD с концерта в театре им. Пароняна (2003).

**Information about the author:** MUSHEGH ZAQAR HAROUTUNYAN (b. 30.10.1956, c. Aghtsk (now Dzorap) Aragatsotn region). He completed the secondary 86<sup>th</sup> school in Yerevan (1973). In 1985 he graduated Agricultural Institute in Armenia, in 1994 graduated from YSC. Worked in "Gandzasar" folk song and dance ensemble as a singer (1989-1992 ), the founder member and soloist of the folk song and dance ensemble "Sayat - Nova" in public Radio of Armenia (1992-2003), soloist of "Liberty" folk instrumental ensemble (1996-1998 ), Soloist of Armenian Iranian cultural Society's ensemble "Mihr" (2002-2003 years). He from 2008 to 2011 had been the author and presenter of Kentron TV's musical program "Huysi Cravan" which was shown at the Los Angeles AMJ TV Station. Since 2002 he has been a pedagogue at Armenian national solo and instrumental chair of YSC and pedagogue in the department of singing of musical college after R. Meliqyan. From 1992 to 1994 during fierce battles of the Artsakh war (up front) has performed numerous patriotic songs to encourage soldiers. In 2003 with Iranian Armenian Cultural Unity, with ensemble "Mihr" took part in international Festival "Fajri" in Iran also had concert in Musical Theater after H. Paronyan and released one CD. In Public Radio fund has made numerous recordings of songs (such as St. Gregor of Narekatsi "Harutyan Tagh", Petros Ghapantsi "Aravotyan qaghcr ev anush hovern"...). Author of about 10 songs and released a nostalgia (CD-2000), 3 books "Dzonergi ergani" (in 2014, 104 songs), "Mi hamergi Parmutyun" (2006), "Aghotq banasteghchutyunneri" (2009). In 2006 , 2016 had jubilee concerts dedicated to 50-60<sup>th</sup> anniversary.

## **Резюме**

Певец, доцент ЕГК Мушег Захарович Арутюнян. - «Десять заповедей Комитаса вокалисту».

В своей статье автор представляет методику преподавания народного пения, основанную на предложенных Комитасом тезисах, или, как отмечается в литературе, - «десяти заповедях». В исследовании цитируются высказывания из писем Комитаса, в которых говорится о необходимости воздержания от влияний в исполнительском искусстве народного пения. Далее автор приводит суждения Комитаса касательно формирования национального музыкального певческого искусства и последовательно представляет разделенные на группы комитасовские тезисы. В статье «Десять заповедей» Комитаса представлены в качестве руководства в процессе обучения искусству народного пения.

## **Summary**

Singer, Docent of YSC, Mushegh Zaqr Harutyunyan - "Komitas' Ten Commandments about Singing Addressed to the Singers".

The article reviews the methodological approaches in the teaching of folk singing related to the provisions introduced by Komitas, which are known in the literature as his ten commandments. The author is referring to the statements found in Komitas' letters, confirming the avoidance of interactions in the songwriting. In addition, Komitas' reasoning about the formation of the national musical style is presented. The principles of this approach are distributed into groups and analyzed. Komitas' ten commandments are introduced as a guidance for the teaching process.

ՆԱՐԻՆԵ ԶԱՎԵՆԻ  
ԱՎԵՏԻՍՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվան  
պետական կոնսերվատորիայի Երաժշտության պատմության ամբիոնի դոցենտ  
E-mail. anz1969@rambler.ru

# ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՒՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԵՐԸ

XX դարն՝ իր բուրճ վայրիվերումներով,  
գոյատևման և «ազգային ինքնու-  
թյան պահպանման» շրջափուլերի  
հետ մեկտեղ, նաև ցնցումների և աննախընթաց բացա-  
հայտումների ժամանակաշրջան էր:

Հենց այս տեսանկյունից էլ կցանկանալինք ներկա-  
յացնել այն կոմպոզիտորների կենսահաստատ ստեղ-  
ծագործական ուղին, որոնք ճակատագրի բերումով  
հայտնեցին XX դարի պատմական իրադարձություն-  
ների էպիկենտրոնում: Կոմպոզիտորներ, որոնք վերա-  
դարձել էին Հայրենիք՝ չինանալով մայրենի լեզուն, սա-  
կայն ունենալով զիտելիքների հարուստ պաշար՝ տա-  
րածաշրջանի մշակույթների ու լեզուների, դասական  
ավանդույթների վերաբերյալ, ինչպես նաև սեփական  
ազգային պատկանելության խորը գիտակցմամբ:

Երբ նշվածներից ամենավառ ներկայացուցիչը հայ  
ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, բա-  
նահավաք, երաժշտագետ, խմբավար, երգիչ և կոմպո-  
զիտոր Կոմիտասն էր՝ Սողոմոնն Սողոմոննանը:

Կոմիտասի ստեղծագործությունները մեր իրակա-  
նության մեջ արդեն տասնամյակներ շարունակ ամե-  
նաշատ կատարվող և տսումնասիրվողն են: Հնդ որում  
տսումնասիրության նյութ են եղել կոմպոզիտորի թե՛ ժո-  
ղովրդական երգերի մշակումները, թե՛ հոգևոր ժամերերի  
երգերը, թե՛ նամակագրությունը և թե՛ գեղարվեստագե-  
ղագիտական հայացքները: Կոմպոզիտորը, որը հետա-  
զայտմ դարձավ աշխարհաբար և գրաբար հայերենի  
լավագույն գիտակներից մեկը, զի՞ էր առնում ժողովր-  
դական երգերն ու հոգևոր երգասածությունները,  
տսումնասիրում և համեմատում էր դրանք՝ պացուցե-  
լով դրանց փոխառնչությունները:

Կոմիտասի ստեղծագործությունը դարձավ ամուր  
հիմք հետազա բոլոր սերունդների համար: Խոսելով  
կոմիտասյան Պատարագի նորարարության և ժողո-  
վրդականության մասին, երաժշտագետ Կ. Մանգա-

սարովան իր «Կոմիտասի Պատարագում կոնտոնաց-  
ցիոն խնդրի շորջ» («Կ Յօրօսու օ կօնտօնացօնոհոս-  
տու Յ լուտյրցս Կօմտասա») ուսումնասիրության մեջ  
վկայակոչում է պրոֆեսոր Ի. Վ. Մացիևսկուն: Վերջինն  
մասնավորապես նշում է, որ Կոմիտասի Պատարագը,  
որ ստեղծվել է IXXX դարերի սահմանագծին, իր մեջ  
ներառելով հայկական մմնոդիայի հարուստ ժամանգու-  
թյունն ու այդ ժամանակաշրջանին բնորոշ արդիա-  
կան միտումները: Մացիևսկին ընդգծում է նաև Կոմի-  
տասյան Պատարագի կարևորությունը բազմաձայն  
եկեղեցական - ծիսական երաժշտական արարողակար-  
գում: Վերլուծելով Պատարագը՝ հետազոտողը եզրա-  
կացնում է, որ «Կոմիտասը զուգակցել է մի քանի նա-  
խասկիզեր՝ վկայ մշակույթը զործիքայնության հետ,  
միաձայնությունը՝ բազմաձայնության հետ, եկեղեցա-  
կան երաժշտությունը ժողովրդականի, հայկականը՝  
ելրոպականի, հոգևոր կանոնը՝ աշխարհիկ ժամերերի  
հետ» (3. էջ 161-163):

Այս առումնվ տեղին է հիշատակել XX դարի սիմֆո-  
նիկ ժանրի ակնառու ներկայացուցիչներից մեկի՝ փիլի-  
ստիա կոմպոզիտոր Ավետ Տերտերյանի կարծիքը,  
«Նորարությունն ինքնին առկա է ցանկացած ավան-  
դույթի հիմքում, եթե այն ունի էվոլյուցիայի խթաններ» (10. էջ 166): Շարունակելով ասվածը, կցանկանալինքը  
մեջքերել կոմպոզիտորի խոսքերն ստեղծագործության  
մեջ ազգայինի դրսորման վերաբերյալ. «Երբ ես մտո-  
րում եմ երաժշտության մեջ ազգայինի մասին, ես նշում  
եմ հոգևորը: Ժողովրդի ոգին, հայենիքի ոգին հնարա-  
վոր չէ փոխարինել հնարքների և ինտոնացիոն դարձ-  
վածքների համակարգով: Հենց դրա շնորհիվ է երաժշ-  
տությունը հոգեհարազատ դարձնում ժողովրդին և  
հետևաբար հասկանալի ողջ մարդկությանը» (10. էջ  
158):

Տերտերյանի երաժշտության ինքնատիպ մտածո-  
ղությունը, երաժարումը կանոններից, անսովոր լուծում-

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ, Ծովինար Հրայրի Մովսիսյան՝  
12.3.2020 թ., ընթերցվել է գիտաժողովում 25.11.2020 թ. և ընդունվել տպագրության՝ 12.3.2020 թ.,  
ներկայացրել է հեղինակը՝ 2.3.2020 թ.

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

Աերի առաջնահերթությունը, տիեզերական հայեցակարգն ընդլայնեցին ժամանակի և տարածության ճանաչման սահմանները, միավորեցին արևելքի և արևմուտքի ողին ու միտքը, ժանրի ավանդարդ մեկնարարման մեղիտատիվ ձեռի հետ:

Ուստ անվանի երաժշտագետ Յուրի Կորիսի բնորոշմամբ Ավետ Տերտերյանը հայ երաժշտության համատերատում «սիմֆոնիայի Կոմիտաս»-ն է: Կոմիտասի հետ զուգահեռներն ակնհայտ են, քանի որ վերաբերում են ոչ միայն ազգային մտածողությանը, մոտեցումներին, այլև երկու կոմպոզիտորների որոշ կենսագրական փաստերին: Եթե Տերտերյանը եկավ Երևան՝ կոնսերվատորիայում սովորելու, նա՝ ինչպես և ժամանակին Կոմիտասը, մայրենի լեզվին չէր տիրապետում:

Եվ լիովին բնական էր, երաժշտագետ Նիկոլոս Թամիզզյանի զարմանը Տերտերյանի առաջին լարային Կվարտետի պրեմիերայի առթիվ. «... չեմ հասկանում... բոլորս գիտենք, որ Տերտերյանը նույնիսկ հայերեն լեզվին չի տիրապետում, սակայն նրա երաժշտությունը խիստ ազգային է» (1. էջ 16): Ի դեպ, կոմպոզիտորը մայրենի լեզվով սկսեց խոսել, բոլորի համար անսպասելի, Գավառ քաղաքի պատվավոր քաղաքացի պարզնատրելու առիթով, քաղաքի հրապարակում հավաքված քաղմամարդ հասարակության ներկայությամբ:

Ազգայինը նա ընկալում էր ազգային գունապնակի պրիզմայով: «Արվեստագետը ոչ միայն հոգեպես, այլև ֆիզիկապես է կապված իր երկրին, իր հայրենիքին, ասսում էր նա: Եթե ես հեռու եմ գտնվում Հայաստանի լեռներից, ինձ մի այլ տրամադրություն է համարում, և ես ինքնարտահայտման կարիք չեմ ունենում» (10. էջ 158): Տերտերյանը միավորել է ժամանակներն ու տարածությունները, արևմուտքն ու արևելքը: Նրան հաջողվել է «բացարձակապես ուրուց կերպով իմաստավոր հայ մշակույթի հնագոյն շերտերը՝ դրանց հաղորդելով համամարդկային, ինտերնացիոնալ նշանակություն»: միանգամայն իրավացիորեն նկատել է Գիա Կանչելին (9. էջ 88):

Տերտերյանի բոլոր սիմֆոնիաներն աչքի են ընկնում փիլիսոփայական մտահղացումների խորոշամբ, ընդհանրացված կերպարայնությամբ և դրամատորգիայի ամբողջականությամբ: Կոմպոզիտորի սիմֆոնիաները չեն ատերավում եվրոպական սիմֆոնիկ ավանդույթի նորմերի հետ: Ավետ Տերտերյանը «նոր կյանք տվեց հայ երաժշտության հնչյունային աշխարհին ոչ միայն ազգային ու եվրոպականի որակապես նոր սինթեզի շնորհիվ, ...այլ առաջին հերթին հենց արևմտյան ավանդագրդի երաժշտական միտումները փիլիսոփայարար Վերաբժնության շնորհիվ» (6. էջ 106):

Լ. Պատուղյան իր «Ավետ Տերտերյանի ոճը» (7. էջ 213) մենագրության մեջ նշում է, որ Տերտերյանի ստեղծած ուրուց կերպարային համակարգը հարստացրեց սիմֆոնիկ ժանրն արևելյան մշակույթի ձեռքբերումները և զգալի խորացրեց արդի մեղիտատիվ սիմֆոնիզմի հունը:

Տերտերյանի ստեղծագործության մեջ ազգայինի և միջազգայինի սիմերեզի խնդրին է անդրադարձում նաև

գերմանացի կոմպոզիտոր Հանս-Էրիխս Գերեկեն՝ նշելով. «Տերտերյանը գիտ արևմտյան գեղագիտությունն ու տեսնիկան, սակայն ապրում է իր հայկական մշակույթից, արևելավրոպական միջավայրում» և հավելում է. «Ներքատիանցելը Տերտերյանի կոմպոզիտորական աշխատանքի մեջ կրկնակի արժեքավոր է. դա մեզ շատ մոտ է (նա գրում է սիմֆոնիաներ) և հեռու է մեզանից (այն արմատներով կապված է հայ մշակույթի հետ, որը զարգացել է օրինատակամի և քրիստոնեական ուղղությունների հատման կետում): Նա ներքափանցում է իր հնագույն երաժշտության խորքերը: Նա փոխանցում է նախարքիստոնեական իմաստությունը հայկական քրիստոնեության հետ միասին» (2. էջ 33):

Քրիստոնեության փիլիսոփայությանը և մարդկության հիշողությանը դիմելու տեսանկյունից, հայրենի հողի վրա գտնվելու տեսանկյունից կարելի է ներկայացնել մեր ժամանակակից՝ կոմպոզիտոր Միխայիլ Կոկժակի ստեղծագործությունը:

Իր բանաստեղծության մեջ նա գրում է.

*Не променяю ни за что я  
сурьбость жизни на Земле обетованной  
на сущность скучную изгоя  
В других благополучных странах...*

Այս բանաստեղծության վերջին քառասուղում կարդում ենք.

*... И я — один из тех, вдали кто жив,  
Вернувшись под сень страны своеи пеачальной,  
хочу оставаться с ней и из последних сил,  
начать все снова — с точки изначальной!*

Մեր այս հոդվածում կոմպոզիտոր, երաժշտագետ, մանկավարժ Մ. Կոկժակի ստեղծագործությունը դիտարկվում է XX դարի 80-ական թվականների քաղաքական համակարգության հերթական «Ճճամատմա», վերակառուցման, գերտրության փլուզման, «ինքնորոշումների շրերի» հետահայց տեսանկյունից: Հենց այդ տարիներին կոմպոզիտորը տեղափոխվեց պատմական Հայրենիք:

Միխայիլ Կոկժակը, լինելով լավագույն դասական ավանդույթների հետևողը, միաժամանակ սիրապետելով ժամանակակից երաժշտական լեզվամտածողությանը, մնում է 70-80-ականների նոր քնարականության հավատարիմ շարունակողը:

«Յուրաքանչյուր հնչյուն մի կարիք է, որը մեզ պարզենում է երկիրն իր հայեցողությամբ: Հնչյունների այն աշխարհը, որում մենք, անկախ մեր ցանկությունից, գոյատևում ենք, ստիպում է մեզ փոխել մեր նախընտրած ուղին, ստիպում է պատսպարվել հեղեղից, տրամադրում է համեմի զրուանքի շերմ անձրևի ներք: Մ. Կոկժակի երաժշտությունը հնչողությունների այն անկեղծ հոսք է, որը մեզ ուղեկցում է ամենուր՝ պարզելով նորարարության թարմ ալիք ու շոյելով անցյալի հրաշալի ալեկոնծումներով: Հնուտ վարպետի ժամանակակիցը լինելու մեծ պատիվ է» (4. էջ 5):

Միխայիլ Կոկժակի կոմպոզիտորական արվեստն

## Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն դ յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

աչքի է բնկնում ոճերի և ժամերի բազմազանությամբ՝ վեց սիմֆոնիա, մի շարք գործիքային կոնցերտներ, «Ճանապարհ դեպի տաճար» կանոնա, նվազախրմբային երաժշտություն («Նվազախրմբի փորձ» կոնցերտին), կամերային-գործիքային երաժշտություն («Ժամանակների ու տարածությունների միջով»), ոռմաններ և այլն: Կոմպոզիտորը դիմում է Նարեկացու արվեստին («Սուրբ Նարեկացու Ոգեշնչումն ու Ողբը» կոմպոզիցիա ասմունքողի և ծայնազրության համար), Շեքսպիրին ու Ռ. Ռոժենտավենսկուն, ստեղծում է երաժշտություն Մ. Սարյանի կտավների մոտիվներով (կվինտես փողայինների համար «Բնապատկեր»), Դալիի նկարներից ազդված («Դալիի երեք կտավը» սոնատը բավշտութակի և դաշնամուրի համար):

Մ. Ա. Կոկժանի կոմպոզիտորական արվեստի բնորոշ գծերից են, առաջին հերթին, ազգային երաժշտական ավանդություններին նվիրվածությունը, փոքր ժամանակահատվածում առավելագույն գեղագիտական տեղեկատվության գետեղման կարողությունը, նվազախմբային գրեատոնի և տարբեր ժամանակաշրջանների ոճական առանձնահատկությունների պրոֆեսիոնալ տիրապեսությունը:

Արարող արվեստագետը համբողանուր բաղարական ճգնաժամի պայմաններում գիտակցում է, որ գեղարվեստական արժեհամակարգում արարման զաղափարը փոխարինվել էր ճակատագրական ոչնչացման փաստի նասուրալիստական արձանագրմամբ: Կոկժան մտավորականի ստեղծագործության մեջ նկատվում է մի տեսակ անորոշության, «հավիտնական հարցի» վիճակ:

«Երբեմն ինքս ինձ փորձելով պարզել, թե իրականում ով եմ հայ թե կոսմոպոլիտ, մտաբերում եմ Պոլ Գոգենի թախտյան շրջանի կտավը, որն ինքն անվանել էր «Ո՞վ ենք մենք, որտեղից ենք եկել և ո՞ր ենք գնում»: Կոտավի հետին պլանում արտահայտվում է սակրալ միտրն առ այն, որ այս հակասական աշխարհում մեր հայտնության առեղծվածային նպատակն ի վերստ կանխորոշված էր: Գոգենի կտավի գաղափարը տեղայնացնելով սեփական ինքնուրյան բացահայտման փորձերի վրա՝ աստիճանաբար գիտակցում էի, որ նկարչի առաջարկած հարցերն ուղղակիրեն կապվում են իմ ցանկության հետ՝ բացահայտելու հայ ժողովրդին պատկանելու իմ գաղտնաբառը» (Մ. Կոկժանի հետ հողվածի հեղինակի անձնական գրույցից):

Վերը նշված հարցերը պարզաբնելու և պատասխանների տարրերակներ որոնելու փորձերից է «Սուրբ Գրիգոր Նարեկացու Պայծառակերպությունն ու Ողբը» կոմպոզիցիան մենանվագ բավշտութակի համար (2001 թ.), որը գրվել է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթքների տեքստերի հիման վրա և նվիրված է Հայաստանում Քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակին:

It is well known, that following the invention of the Armenian scripts in the 5th century, the new original genres of Armenian church music have been developed. The texts of those new genres were written in Classical Armenian (*Grabar*), unlike psalms, which were translated. Among those new genres was the genre of *sharakan*. Out of the eight types of *sharakans*, i.e. "Blessing", "Fathers", "Magnificat", "Have mercy", "Praise the

Lord", "Youths", "Depths", "I Raise", only the "*Orhnutyun*" ("Blessing") *sharakans* are performed at the Night Service. They are dedicated to various Fests of Jesus Christ (Holy Christmas, Palm Sunday, Annunciation, etc.) as well as to the remembrance of the saints (St. John the Baptist, St. Gregory the Illuminator, St. Virgin Hripsime and Gayane, and their companions, etc.) (See N. K. Tahmizyan, Theory of Music of ancient Armenia. Yerevan: Publication of the Academy of Sciences of the Arm. SSR., 1977., p.169-170. (Տամիզյան Հ. Կ., Թեորիա մանաւագի և Դրեմեյ Արմենիա, Եր.: Մատենադարան, իշտ. ԱՆ Արմանակ ՀՀՊ, 1977). The authors of those *sharakans* were the most prominent members of the Armenian Church - St. Sahak I Partev, St. Movses Khorenatsi (5<sup>th</sup> c.), Komitas I Akhstetsi (7<sup>th</sup> c.), St. Nerses Shnorhali (12<sup>th</sup> c.), and others. Notably, during the Great Lent, the *Orhnutyun* *sharakans* of the Night Services are replaced with the repentance *sharakans*, the so-called *Voghornyma* (Have Mercy), attributed to St. Mesrop Mashtots (5<sup>th</sup> c.).

Another oldest and original genres of the Night Service are the chanted sermons "Having risen from sleep" by St. Hovhannes Mandakuni (5<sup>th</sup> c.), "Call upon God in the night, and day, and at all times, let us pray to the Lord" and "Guide our feet into the path of peace, let us pray to the Lord" by St. Sahak Partev, etc. It is widely known, that the chanted sermons served as the basis for developing the genre of *gandz*, which was later on elaborated in the works of St. Nerses Shnorhali, Mkhitar Ayrvanetsi (13<sup>th</sup> c.), and others.

"Let us recall your name in the night, O Lord" (*Hishestsug i gisher*), the confessional "People of the World" (*Ashkharh amenayn*) hymns by St. Nerses Shnorhali are the crowning glory of the Night Service along with the most famous "Morning of Light" (*Aravot Lusoh*), known by its numerous sacred and folk melodic versions, and despite its "advanced age" still being sung and performed today by Armenians with great love. The same may be said about "This day ineffable" (*Aysor anchor*) and "The world newly created" (*Norasteghtsial*), the hymns telling about the last days of the Earthly life of the Savior, about the Holy Thursday, the Holy Friday, etc.

The chants by St. Nerses Shnorhali present some characteristic features of the time typical both for his epoch in general and for his poetic work, in particular. Those are alphabetical acrostics (*Ashkharh amenayn*, *Aravot Lusoh*) and name acrostic, in this case "Nerses by his name Shnorhali", syllable pentameter (*Ashkharh amenayn*, *Aravot Lusoh*) and octameter (*Norasteghtsial*) verses.

Readings of the Gospel play a significant role in the formation of the musical component of the Night Service of the Armenian Church, because, according to Komitas, "the reading of the books of the Old Testament and the Gospel is already melodic [emphasis added] (Komitas Gevorgyan., Armenian Sacred Music, Translation from German and comments by N. K. Tahmizyan., //Sovetskaya Musica, 1969 # 10., P.87). Komitas also introduced the scales, the ambitus (the range of scale degrees), and the typical tunes of the melodic readings of the Gospel (Ibid. p. 87-90).

The modal structure and the composition of scales used in the Night Service of the Armenian Apostolic Holy Church, indicated at the beginning of the article, will be covered in future publications.

**ՇՈՒՇԱՆԻԿ ԱՇՈՏԻ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**Երաժշգույք, երգչուիկ,  
ՀՀ ԳԱ արվեստի իմաստիկուլի հայցորդ**

E-mail. shushanikhovhannisyany@gmail.com

# ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

**Վ**այ զրականության մեջ ոչ մի քնարերզու այնպիսի ուժով և անմիջականությամբ չէր ներգործել ժամանակակիցների վրա, ինչպես բանաստեղծ Վահան Տերյանը: Նա ամեն սերնդի հետ «ծնվող» և ամեն սերնդի հետ «ապրող» բանաստեղծ է: Տերյանի պոեզիան իր նորք, մտերմիկ քնարականությամբ, վառ պատկերավորությամբ և երաժշտականությամբ ողեշնչել է շատ ու շատ հայ կոմպոզիտորների, որոնք նրա տեքստերի հիման վրա գրել են տասնյակ երգեր ու ոռմաններ, խմբերգեր ու վոկալսիմֆոնիկ ստեղծագործություններ: Ուսմանու Մելիքյանից սկսած մինչև օրս կոմպոզիտորները պարբերաբար դիմում են Տերյանին և ստեղծագործական կամքի որոշակի ժամանակահատվածում տարվում իրենով: Մակար իշխատ տարբեր են կոմպոզիտորների մոտեցումները Վահան Տերյանի պոեզիային: Նրանք բոլորն են փորձել են կերտել իրենց Տերյանին, երաժշտական արտահայտչամիջոցներով տերյանական պոեզիան պատկերել այնպես, ինչպես որ իրենք են ընկալում: Տերյանական պոեզիայով զայրակղիկել է նաև հայ մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը, ով կերտեց իրեն հոգեհարազար Տերյանին և իր պատկերացրած տերյանական պոեզիային տվեց երաժշտական ուրուց մեկնարանում:

«Իմ համոզմունքն է, որ ամեն մարդ աշխարհ գալիս իր բաժին հարցերն են ստանում: Ումանց համար ստեղծագործելով լոկ այլ հարցերին պատասխանեն է: Ես իմ ստեղծագործությամբ աշխատում եմ հարցեր ավելացնել: Արվեստը պետք է հարցեր ծննի, հարցեր առաջացնի» (1. էջ 23):

Տիգրան Մանսուրյան անունը, որ հայտնի է ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, իր ստեղծագործական գործունեությունն սկսելով նախորդ դարաշրջանի 60-ական թվականներին, այսօր էլ շարունակում է ստեղծագործել՝ հայ երաժշտական զանարանը հարստացնելով մնայուն ստեղծագործություններով: Կոմպոզիտորն արժանացել է մի շարք մրցանակների երաժշտական արվեստում ունեցած իր մեծածակալ գործունեության համար:

S. Մանսուրյանն ստեղծագործական կյանք մուտք գործեց հայ երաժշտության նոր, մեծ վերելքի շրջանում՝ 60-ական թվականներին: Սա բեկումնային շրջան էր, քանի որ կապված էր խորհրդային տարիների «ձնահայի հետ»: Բացվեց «երկարյա վարագույրը» և դրանով ընդլայնվեց արտաքին հաղորդակցությունն աշխարհի հետ: Այն, ինչ անհասանելի էր, դարձավ հասանելի: Ակտիվորեն յուրացվեցին արևմտութիւն երաժշտության նորագոյն ուղղությունները, կոմպոզիտորական մտքի նոր, անսովոր լուծումները և կիրառվեցին հայ երաժշտության մեջ: 60-ականների սերնդի ստեղծագործությունները կարելի է ասել փորձարարական էին, քանի որ դեռևս դժվար էր հասնել ժամանակակիցի և ազգային սիմերեզին: Այդ առիրով կոմպոզիտորը նշել է: «Բայց ինչքան շատ նոր տեխնիկաներով էինք «հանդերձավորում», այնքան ավելի բարդանում էր ինքնուրովն ոճի պահպանան խնդիրը: Մեզանից ոչ մեկը չէր ցանկանում լինել սույ արևմտյան ոճերի, արևմտյան երաժշտության ընդօրինակողը... XX դարի արևմտյան երաժշտությանը հասուն խստագոյն տոնայնական խախտումը երբեմն արևելյան մտածողության հետ նոր եզրեր գտնելու հնարավորություն է ընձեռում: Ահա այդ ճանապարհով եմ գտել իմ ոճը» (2. էջ 641): Ժամանակակից ուղղություններից կոմպոզիտորի վաղ շրջանի համար որոշակի նշանակություն ունի նաև նեղուասականությունը: Այդ են վկայում սիմֆոնիկ նվազականիքի «Պարտիտոր», Կոնցերտը երգեհոնին և նվազականիքի համար: Որոշ դեպքերում հանդիպում ենք նաև մողակ և բազմալաղային կառույցների փոխներգործության: S. Մանսուրյանը երաժշտության մեջ հանդիսացակ կոմիտասյան ուղու հետևորդը, որը դեռևս սպասում էր իր շարունակողին: «Կոմիտաս արվեստագետի ու նրա զորքի պաշտամունքի հասնող երկրպագումը դարձավ Մանսուրյանի ու իր սերնդակից շատ արվեստագետների ստեղծագործական հավատամբը», - նշում է երաժշտագետ Շ. Մովսիսյանը (2. էջ 641):

Կոմպոզիտորն անգամ իր հարցագրույցներից մեկում նշել է: «Կոմիտաս... այդ եզակի անձնավորության հետ իմ ունեցած առանձնահատուկ կապը երբեք չի թու-

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ, Ծովինար Հրայրի Մովսիսյան 12.3.2020 թ. և ընդունվել է տպագրության՝ 10.3.2019 թ.  
ներկայացրել է հեղինակը՝ 6.3.2020 թ.

## S t e p j a n i h a p n e q h a n i l e r p a d z u n i p j o n i n p

լացել որք կյանքիս ընթացքում: Նրա երգերի, երգչախմբային ստեղծագործությունների, դաշնամուրային մանրանվազների և մեծածավալ Պատարագի միջոցով Կոմիտասին հաջողվեց միավորել Հայաստանը: Եթե իրական Հայաստանից հոգնում եմ, ես շրջվում եմ դեպի մյուս Հայաստանը, որը Կոմիտասի երաժշտության մեջ է»\*:

Եվ այսպես, ազգային և նորարարականի համարձակ միահյուսմամբ, դեռևս Կոմիտասից եկող կարևոր սկզբունքներով նշանավորվեց հայ երաժշտության զարգացման նոր փուլը: Հատ երաժշտագետ Ա. Գրիգորյանի՝ ժամանակահատվածի մի շարք միտումներ նոյնական արտահայտվեցին հենց Մանսուրյանի արվեստում, որոնցից կարելի է առանձնացնել ընդհանուր ծրագրայնությունը, ոչ ավանդական գրոճիքային և վոկալ կազմերի օգտագործումը, ստեղծագործությունների ոչ ավանդական ձևերի ներմուծումը, անզամ այդ շրջանի համար անսովոր բովանդակությամբ բանաստեղծական տեքստերը (4. էջ 221):

«Տիգրան Մանսուրյանի երաժշտությունն ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել որպես մտահայեցողական-հիգերանական, թեև ինքը կոմպոզիտոր, տարանջատում է իր ստեղծագործությունը կերպարային ընդգրկումով և լսարանային ուղղվածությամբ երկու տեսակի» (2. էջ 645), - նշում է Շ. Սովոյանը: Ընդուում մի կարևոր հանգամանք ևս՝ կոմպոզիտորի ձրցուում կամերայնության արտահայտում է XX դարի կարևոր միտումներից մեկը՝ մինիմալիզմը: Նվազագույն միջոցներով առավելագույն արտահայտչականության հասնելը դարձավ նաև Տ. Մանսուրյանի ոճի առանձնահատկությունը: Այս առիթով կոմպոզիտորը նշել է, որ մինիմալիզմը ընկած է հայ թե՛ գործիքային, թե՛ վոկալ երաժշտության էության հիմքում: «Հայկական երաժշտության էությունը երևան է զայխ արտահայտչամիջոցների չափազանց խնայողական օգտագործման մեջ: Ինստնացիա լինի, միթք, թե տոնային ելևէ, ամեն ինչ խիստ չափավոր է օգտագործվում» (3.): Սա է պատճառը, որ կոմպոզիտորին ավելի հարազատ է կամերային-գործիքային ժամերն իր տարրեր դրսությունը՝ գործիքային, անսամբլային, վոկալ, վոկալ-գործիքային, խմբերգային:

Կոմպոզիտորի ստեղծագործական բազմաժանր ժառանգության մեջ ուշադրություն են գրավում վոկալ ստեղծագործությունները՝ սկսած քնարական երգերից ու ոռմաններից մինչև վոկալ գործիքային ու խմբերգային շարքեր: Մեծ է նաև այն հեղինակների ցանկը, որոնց կոմպոզիտորը դիմել է այդ ստեղծագործությունները կերտելիս: Կոմպոզիտորի համար ներշնչանքի աղբյուր են հանդիսացել ինչպես հայ միջնադարյան բանաստեղծությունները («Տեսոր ողբազին տաղերգության» ըստ Իւ. Կեչառեցու, «Հայրեններ» ըստ Քոչարի), հայ դասականների բանաստեղծությունները

\* Մանսուրյանի հարցազրույցը Թիֆնա Քոհնի հետ, իրատարակվել է ECM New Series CD ալբոմին կցված երկերու գրքով: Այնուհետև Հակոբ Շուլիկանի բազմանությամբ իրատարակվել է «Ազգ» օրաթերթում «Հավատով խոստվանիմ» վերնագրով, Ազգ, թիվ 30, փետրվար 18, 2006 թ.

(«Գարնան երգեր» ըստ Հ. Թումանյանի, «Երեք Նախյան երգեր» ըստ Վ. Տերյանի, «Արվեստ քերության» ըստ Ե. Զարենցի, «Երեք մադրիգալ» ըստ Կ. Զարյանի, «Սրճահար լուսինը» ըստ Ռ. Դավոյանի), այնպես էլ արևմտաեվրոպական բանաստեղծությունները («Երեք երգ» ըստ Լորկայի):

«Երաժշտության մեջ երկու երևոյթների՝ ձայնի և լուսության հարաբերություն գոյություն ունի: Լուսության միջից գալիս մեզ է հասնում ձայն, լուսության միջից գալիս մեզ հասնում է նոր գործ»: «Ես էլ դու եմ, ես չկամ» - տերյանական պոեզիայից վերցված այս տողերը, ըստ կոմպոզիտորի, շատ տիպական են իր արվեստը բնութագրելու համար: Խոսքը վերաբերում է կոմպոզիտորի և երաժշտության լիակատար միաձուլմանը: Ստեղծագործությունն հորինելիս կոմպոզիտորը միահյուսվում է երաժշտությանը, իսկ երաժշտությունը դառնում է հենց ինքը (1. էջ 22): Տիգրան Մանսուրյանն իր երաժշտությունը բնութագրելիս նշել է, որ իր գործերի մեջ կա երկու տեսակ երաժշտություն, երկու աշխարհ, որոնցից մեկն անձնական է, մյուսը՝ ծես, ոփուուալ: Ընդ որում նա նշում է, որ առաջինն իրեն ավելի բնորոշ է, իսկ երկորությունը դարձալ ինքն է, սակայն հայելու մեջ անդրադարձած (1. էջ 22):

Ինչպես նշվեց, կոմպոզիտորը շատ բարձր է զնահատել հայ դասականների, մասնավորապես Վահան Տերյանի արվեստը: Սակայն, միևնույն ժամանակ գրանում է, որ այնքան էլ հեշտ չէ պոետի բանաստեղծությունների հիմնա վրա ստեղծագործելը, որքան էլ որ դյուրին թվա առաջին հայացրից: Եվ իրոք, Մանսուրյանն առաջին կոմպոզիտորը չէ, որ նման կարծիք է հայտնել: Նոյն համոզմունքին եր նաև կոմպոզիտոր Հարու Ստեփանյանը՝ նշելով, որ Տերյանի բանաստեղծությանը գրել չի կարողանում (4. էջ 46):

50-60 -ականների կոմպոզիտորական սերունդը մեծ նշանակություն է տվել խոսքի ֆոնետիկ առանձնահատկություններին, որոնք մասնագետների կարծիքով, ինչ-որ տեղ դժվարացնում են այն վերածել երգի: Իսկ Տերյանի պոեզիան այնքան հեղինակած է, մշակված, նրանում յուրաքանչյուր տող, յուրաքանչյուր բառ, վանկ և կետադրական նշան պատահական բնույթ չեն կրում: Որքան էլ զարմանանի և պարագորսալ թվա, բայց գուցե պատճառը Տերյանի պոեզիայի կատարելությունն է, որ կոմպոզիտորներն այնքան էլ հաճախ չեն դիմել նրա բնարերգությանը, չնայած այն հանգամանքին, որ նրա պոեզիան իր երգայնությամբ թերևս մրցակիցը չունի հայ բնարերգության մեջ:

Ներկա հոդվածում հակիրճ փորձել ենք անդրադարձան կոմպոզիտորի և տերյանական պոեզիայի կապին: Մանսուրյանը Վահան Տերյանի բանաստեղծությունների հիմնա վրա գրել է «Աշուն» ցիկլը, «Նախյան երեք երգերը», «Canti paralleli» («Չուզահեռ երգերը») շարքից երկու ոտման և «Երկիր Նարիրի» շարքը:

«Առաջին անգամ փորձել եմ Տերյան երգել 1960 թվականին, երբ դեռ ուսանող էի», - պատմում է Մանսուրյանը, «ընտրել էի «Երկիր Նարիրի» շարքի առաջին բանաստեղծությունը».

# ՏԵՐԱՆԻ պՆԵԳԻԱՆ և ԵՐԱԺԱՏՈՒՊՅՈՒՆ

Որպես Լաերտի որդին, որպես  
Ուկիս մի՛ թողած լի հող, կ տուն:

«Հենց այս երկու տողերն էլ հասցրի «Երգել», հետո սարսափած «փախա» Տերյանից: Այն ժամանակ, որպես երաժշտի, ինձ սարսափեցրեց Տերյանը: Այլևս երկար չփորձեցի նրան «Երգել», մնացի նրա ջերմնուանդ ընթերցուրը» (4. էջ 43), - այսախին էր կոմպոզիտորի առաջին ծանորություններ տերյանական պոեզիային: Սակայն որոշ ժամանակ անց կոմպոզիտորը ստեղծեց տերյանական բանաստեղծությամբ ոգեշնչված մի քանի հետաքրքիր գործեր: Առաջինն «Աշուն» շարքն է, որի այնքան էլ հայտնի չէ հանրության լայն լսարանին: Ցիկլը գրվել է 1974 թ.:՝ ձայնի, դաշնամուրի, ֆլեյտայի և լարային կվարտեսի համար: Սակայն այս գործը կոմպոզիտորի ցանկությամբ չընդգրկվեց աշխատանքի վերլուծվող ստեղծագործությունների ցանկում: Ցիկլի մասին տեղեկություններ կան երաժշտագետ Ա. Գրիգորյանի «Հայկական վոկալ կամերային երաժշտություն» գրքում (3. էջ 235-236): Երաժշտագետի բնորշմամբ, «Աշուն» ցիկլն արտահայտում է տերյանական պոեզիային բնորոշ թախիծը, աշնամային տրամադրությունը, սերը, սիրո կարտոր, կակիծը, իրական աշխարհից փախուստը: Այն նաև աչքի է ընկնում իր մեղիտատիվ բնույթով: Կոմպոզիտորի ոճին բնորոշ մեղիտատիվ բնույթը դա նոյն արարողակարգային երաժշտությունն է, որի մասին արդեն խոսել ենք վերը: Ա. Գրիգորյանն իր աշխատության մեջ, անդրադառնալով ցիկլի կառուցվածքին, նշում է, որ համարների որոշակի ձգձգվածությունը խախոսում է ընդհանուր շարքի ամրողականությունը: Գուցե հենց դա է պատճառը, որ կոմպոզիտորը մեզ հետ գրուցում հարկ չհամարեց անգամ խոսել իր այս ստեղծագործական փորձի մասին:

1976 թ. Տիգրան Մանուրյանը գրեց «Նաիրյան երեկ երգ» շարքը ձայնի և սիմֆոնիկ նվազախմբի համար: Ստեղծագործությունը գրելու ընթացքում կոմպոզիտորը կարդում էր նրան վերաբերող տպագրված ամեն ինչ, հանդիպում և գրուցում էր բոլոր նրանց հետ, ովքեր ծանոթ էին պոետին կամ իր արվեստին: Ստեղծագործությունն առաջին անգամ հնձել է Երևանում, այնուհետև Պրահայում: Կոմպոզիտորն իր հուշերում նշում է, որ Երևանական կատարումն իրեն չէր գոհացրել, իսկ Պրահա մեկնել նա «ծովացել էր», և քամի որ մյուս կատարումը չէր լսել, այդ իսկ պատճառով չէր կողմնորոշվում արդյոք գործը վերանայման կարիք է զգում, թե պարզապես «պատշաճ» կատարումը ներկայանալի կղարձներ այլ (նա զոհ չէր ստեղծագործության երևանական կատարումից) (3. էջ 237):

«Նաիրյան երեկ երգեր» ստեղծագործությունը գրվել է ձայնի և սիմֆոնիկ նվազախմբի համար՝ 1975-1976 թթ.: Այն ունի հանդիսավոր բնույթը և կարող է կոմպոզիտորի հաջողված ստեղծագործություններից համարվել: Տերյանի բնարերգությանը բնորոշ բազմաշերտությունը կոմպոզիտորը կարողացել է արտահայտել հենց այս կազմի միջոցով: Ներքափանցելով Տերյանի պոեզիա, Մանուրյանն այն համարում է ավելի լայն, քազմակողմանի և հանդիսավոր: «Տիգրություն», «Մի-

թե վերջին պոետուն եմ ես», «Գագել» երգերը ցիկլի մերքին զարգացման երեք փուլերն են համարվում: Առաջինը՝ մուտքն է դեպի տերյանական աշխարհ՝ մշուշով, աշնանային տրամադրությամբ: Երկրորդը՝ հերոսական քնարերգությունն է, որը ներկայանում է մեծ վլաճնահարվածներով թե երաժշտության, թե բանաստեղծության մեջ, իսկ երրորդը՝ արվեստագետի մենախոսությունն ու մտրումներն են հայրենիքի ողբերգական ճակատագրի շուրջ: Յավոր, այսքանն է հայտնի ստեղծագործության մասին, քանի որ անգամ կոմպոզիտորի մոտ չի պահպանվել վոկալ-սիմֆոնիկ գործի պարտիտորը:

Առավել հայտնի է Տ. Մանուրյանի «Երկիր Նաիրի» վոկալ շարքը, որին էլ կանդրադառնակը հետագա շարադրանքում: «Երկիր Նաիրի» վոկալ շարքը գրվել է 1986 թ.: Այն բարկացած է չորս ոռմանսից՝ «Որպես Լաերտի որդին», «Կարծես թե դարձել եմ ես տուն», «Քեզ կմնա միշտ օտար» և «Իջնում է զիշերն անգութ ու մրին»: Այս չորս բանաստեղծություններն էլ վերցված են Վ. Տերյանի համանուն բանաստեղծական շարքից: Ընդհանուր առմամբ շարքի տրամադրությունը ոռմանտիկական է, սակայն ինչ-որ տեղ ոռմանտիզմը վերանում է անձի եսակենտրոնության: Տերյանի բանաստեղծական շարքում գերիշխողը միայնակ անհատի հայրենասիրական պարուն է: «Երկիր Նաիրի» շարքի ոճական հղումները տանում են դեպի ուշ ոռմանտիզմ: Անգամ «Քեզ կմնա միշտ օտար» ոռմանսում ակնհայտ է «շումանիզմը», որը բխում է տերսում առկա «ես» - ի աշխարհընկապումն և կապված է ոռմանտիկական դարաշրջանին հասուկ մուածության հետ: «Հենց այդ գաղափարական շրջադարձն է, որ մատնանշեց Մանուրյանի խօսումը ավանգարդի գեղագիտությունից» (5. էջ 5):

Շարքի առաջին ոռմանսում «Որպես Լաերտի որդին», կոմպոզիտորը պատմում է Ողիսևսի (Ուկիսի) մասին, որտեղ հենց պատմողական բնույթով է պայմանավորված երաժշտական հանդարտ շարադրանքը: Երկրորդ մասում բնարական հերոսը դեկերումներից վերադարձնում է տուն, փոփոխությունն ակնհայտ է թե դաշնամուրային նվազաքանում, թե երգարածնում.

Ու կարոտակեզ ահա կրկին  
Վերադարձնում եմ, որ առհավետ  
Ունկնդիր լինեմ քո անուշ երգին,  
Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ...

Մեջքերման հատվածը բանաստեղծության վերջին քառատողն է, որը հանդիսանում է ոռմանսի ռեպրիզը: Պատմողական բնույթը այստեղ կոմպոզիտորը վերարտողել է ասերգայնության տարիերով: Դրան է նախատեսված նաև դաշնամուրային նվազաքանումին և վոկալ երգարածնի երկխոսությունը: Ընդհանուր առմամբ այս կազմի միջոցով դաշնամուրային հայրենիքը առաջանաւում է տուն, փոփոխությունն ակնհայտ է թե դաշնամուրային նվազաքանում, թե երգարածնում:

Շարքի երկրորդ՝ «Կարծես թե դարձել եմ ես տուն» ոռմանսը լի է լուսավոր ելսէջներով, քանի որ այն հայրենի տան մասին է, մոր և այն հերիարքի, որը բնարական հերոսը լսել է մայրիկից: Արհասարակ բոլոր այն

## S երյանի պոեզիան և երաժշտությունը

կոմպոզիսորմերը, ովքեր իրենց ստեղծագործության համար դիմել են «Երկիր Նախի» բանաստեղծաշարի այս բանաստեղծությանը, գիտակցել են, որ այն շարքի լուսավոր կետն է և պրեսի կողմից մտահղացված է եղել կոտրելու շարքի հայրենասիրական պարուր և տեղափոխվել մեկ այլ աշխարհ: Չե՞ որ հայրենի գյուղն ու տունը կապվում են նաև մոր և մայրական կարուի հետ: Այդ իսկ պատճառով թէ՛ Տիգրան Մանուկյանի սույն ռոմանում և թէ՛ Էդգար Հովհաննիսյանի «Տերյանական շարքի» համանուն խմբերգում լսելի են երաժշտության լուսավոր և կարտակեզ ինտոնացիաներ:

Կարծես թե դարձել եմ ես տուն,  
Բոլորն առաջվանն է կրկին,  
Նորից դու իմ տեղը նստում,  
Շարժում ես իլիկը մեր իմն...

Որքան կարու, սեր և Տերյանին հարիր նրբություն կա այս տողերում, որոնք և ոգեշնչել են կոմպոզիտորներին: Ակնհայտ լսելի է G-dur տոնայնական հիմքը: Ստեղծագործությունն սկսվում է դաշնամուրի նախանկազի փորդիկ մոտիվից, որը կարծես կարտակեզ կանչ լինի, երբ քնարական հերոսը հիշում է իր մանկությունն ու տունը: Այդ մոտիվը պարբերաբար կրկնվում է ամբողջ ստեղծագործության ընթացքում և անգամ մշակվում ռոմանսի երկրորդ հատվածում: Այս ռոմանսը, ինչպես և նախորդը, ունի պարզ եռմասանի կառուցվածք: Եթե պատահական չէ, որ այստեղ իշխում է մոնութենասիզմը: Սա կարուի թեման է, որն անընդհատ անցնում է շարքի բնօրացրում և շաղկապում միմյանց ստեղծագործության բոլոր մասերը:

Երգի հնչողությանը յուրահատուկ երանգ են հաղորդում այն շեշտերը, որոնք կոմպոզիտորը մտածված չի կիրառել: Դրանք գոյացել են բանաստեղծական տեքստի հետաքրքիր երաժշտական ֆրազավորման հետևանքով: Յուրաքանչյուր տակար ունի ներքին երկու շեշտ, որոնք համբակնում են տակտի ուժեղ մասերին: Թվում է, թե այս հնարքը երաժշտությանը միապաղադրության կտանի, սակայն ճիշտ հակառակը, այն երգվում է մի շնչով և ամենանին չի խախտում մայրենի լեզվի շեշտադրությունը՝ շնորհիվ նախատակտերի:

Մի առիթով, վոկալ երաժշտության մասին խոսելիս հեղինակը նշել է, որ այն իր համար ոչ թէ տեխմիկական ձեռքբերումների ցուցադրման ասպարեզ է, այլ մի դրուտ, որտեղ նրա անհատական ձայնը թերևս ավելի լսելի է, քան այլուր: Նրա վոկալ երաժշտությունը մի յուրատեսակ «հետաղարձ հայացք» է, որը կարծես կոչված է նրա արվեստից վերացնելու ներկա ժամանակի ցանկացած դրոշմը (5. էջ 3): Հայոց լեզվի շեշտադրությանն այլշափ կարևորություն տալը չի վիճակի երաժշտագետների ուշադրությունից: «Նույնիսկ այն ժամանակ, երբ առանձին վերցրած մեղեղային գիծը ներքին կապեր չի ցուցադրում ազգային երաժշտության ելաւումների հետ, նրա ստեղծագործությունները, մինչեւյնն է, շարունակում են հնչել հայերեն, առաջին հերթին՝ հայոց լեզվից բխող ճշգրտագովն շեշտադրության և ապա գենետիկական ենթատերսահի խորը բա-

ցահայտման հաշվին» (5. էջ 3): Ասկածի վառ օրինակն է ռոմանը: Ընդհանուր առմամբ այն իր ինտոնացիոն և լադային կերտպահորով ինչ-որ տեղ հարում է ռոման-տիզմի երգական արվեստի ավանդույթներին:

Հաջորդ՝ «Քեզ հետ միշտ օտար» ռոմանում ընդգծվում է «Չումանիզմը»: Այն իր ծավալով շարքի ամենափոքր ստեղծագործությունն է, որը գրված է շուրեւոյան և շումանյան ռոմանների ողով: Առաջին իսկ հնչյուններից տեղափոխվում ենք ուրիշ աշխարհ: Տերյանի քնարական հերոսն այստեղ խորը հիասթափություն է ապրում, ինչը կոմպոզիտորն արտահայտում է ռոմանիկական, հոգերանական նրբերանցներով: Չնայած այն հանգամանքին, որ բանալու նշանները բացակայում են՝ կոմպոզիտորի այս ստեղծագործության մեջ լիարժեք գերիշխում է gis-moll տոնայնությունը: Այն, որ ավանդարդիստական միտումներով հրապուրված հեղինակի ստեղծագործությունն ունի ամուր լադային հիմք, ինքնին խոսում է ռոմանիզմի հետ աղերսների մասին, սակայն մանսուրյանական ոճի համատեքստում սա կարելի է անվանել նեռումանտիկական միտումների արտահայտություն:

Ծարքի վերջին ռոմանը՝ «Իշնում է զիշերն անգույք ու մթին», առանձնանում է իր լարված հնչողությամբ: Տերյանի այս բանաստեղծությունը ստենա\* է, որի ժամանը հայ պոեզիայում արմատավորվեց հենց քնարերգությունիկ: Վերադարձալով ռոմանսին, նշենք նաև, որ այստեղ նույնպես գերիշխում են ասերգայնության տարրերը, լարված հնչողությունը, որը բխում է բանաստեղծական տերսաի բովանդակությունից: Ուսմանը կարծես ամփոփում, ամբողջացնում է «Երկիր Նախի» վոկալ շարքը: Լսելի են խոնացիաներ նախորդող «Որպես Լաերտի որդին», «Կարծես թե դարձել եմ ես տուն», «Քեզ կմնա միշտ օտար» ռոմանների հետ: Այդ ինտոնացիաները և թեմատիկ կառուցները հատկապես ակնհայտ են դաշնամուրի նվազակցության մեջ: Իսկ ռոմանսի ավարտվում է «Որպես Լաերտի որդին» ռոմանսի սկզբում շարադրված թեմայով, այս անգամ այլ լադային ողորտում: Չնայած նրան, որ շարքը փոքրածավալ է, բաղկացած է ընդամենք չորս բանաստեղծությունից, այնուամենայնիվ կոմպոզիտորն ստեղծել է ներքին եռամսա կառուցվածքով մեկ ամրողացրություն: Առաջին ռոմանը համապատասխանում է ընդհանուր մնականացմանը առաջին մասին, երկրորդ և երրորդ ռոմանները՝ միջին մասին, իսկ վերջին ռոմանը ռեպրենտում է մտածողությամբ, իսկ երկրորդն ու երրորդը՝ միմյանց:

Բոլորովին այլ բնույթի ստեղծագործություն է

\* Սոնեն (իտ.՝ sonetto, sonare - հնչել), բանաստեղծության կառուցման կայուն ձևերից մեկն է: Այն բաղկացած է տասնչորս տողից՝ սկզբում երկու բառապող (կաստեն) և վերջում երկու եռասող (տերցետ): Սոնենի հանգավորման ձևերը շատ բազմազան են: Ամենից բնորդն այն ձևն է, երբ սոնենի բառապողերն ունենում են երկու ընդհանուր հաճագ, որոնք տողերն իրար են կապում օղակաձև կամ խաչաձև հանգավորումով: Իսկ եռաստղերի մեջ հանդիս է զախի երեք հանգային վերջավորություն՝ ամենատարբեր դասավորությամբ: Առանձին դեպքերում էլ սոնենը կարող է ունենալ երեք բառապող և մեկ եղբայրակայի երկսուող:

## ՏԵՐԱՆԻ պոեզիան և երաժշտությունը

S. Մանուկյանի «*Canti paralleli*»-ն կամ «Չուզահեռ երգեր»: Այն գրվել է 2012 թ. և նախատեսված է ձայնի, դաշնամուրի և լարային նվազախմբի համար, չորս բանաստեղծների ութ բանաստեղծությունների հիմնավար: Բանաստեղծական հիմքը ընտրելիս S. Մանուկյանը հետաքրքիր մոտեցում է ցուցաբերել: Յուրաքանչյուր բանաստեղծից վերցրել է երկու բանաստեղծություն, որոնք հնչում են հաջորդաբար և համարակալված են: Այստեղից էլ առաջացել է շարքի խորագիր՝ «Չուզահեռ երգեր»: Ստեղծագործության համար կոմպոզիտորն ընտրել է ոճական առումով միմյանցից տարբեր բանաստեղծների՝ Պալտասար Դպիրի, Եղիշե Զարենցի, Ավետիք Իսահակյանի և Վահան Տերյանի երկուական բանաստեղծություն՝

Պալտասար Դպիր - «Տաղ կորուսեալ սիրելոյ»,  
«Վասն սիրոյ»  
Եղիշե Զարենց - «Կապոյս լճի վրա»,  
«Եղ մի իրիկոն»  
Ավետիք Իսահակյան - «Իմ հողին»,  
«Լեռների վրա ձյունել է»  
Վահան Տերյան - «Աշնան երգ»,  
«Իմ խաղաղ երեկոն»:

«Այդ բանաստեղծությունները միմյանց լրացնում, զուգահեռ են դառնում ճիշտ այնպես, ինչպես Պլութարքոսի «Չուզահեռ կենսագրություններ» գրքի հերոսները: Գաղափարը հենց այնտեղից են վերցրել՝ զուգահեռ երգեր, երբ այդ չորս ամբողջությունները մի ամբողջություն են դառնում իրքն գործ: Երբ սկզբում լսում եք Պալտասար Դպիր, հետո Զարենց, այնքան անսպասելի է, բայց դուք հայտնաբերում եք բանաստեղծ երաժշտության մեջ»: հարցազրույցներից մեկում նշում է Մանուկյան: Իսկ թե ինչ սկրունդով է ընտրություն արել, և արդյո՞ք դժվար չէր չորս տարբեր հեղինակներին մեկ ամբողջության մեջ միավորելը, Մանուկյանը\* նշել է, որ ընտրությունն իր ներքին նախապատվության հարցն է, որի շորջ չի ցանկանում կիսվել:

Ինչ վերաբերում է դժվարությանը, ապա կոմպոզիտորի համար կարևոր է գործի ոչ թե դժվար, այլ արտասովոր գեղեցիկ լինելը: Կոմպոզիտորի կարծիքով, հայ երգարվեստը, բանաստեղծական արվեստի համեմատ, շատ յուրացված չէ: Ճիշտ է, մեծ թվով բանաստեղծություններ երգվել են, ասենք Իսահակյանից, սակայն Զարենց և Տերյան շատ քիչ է երգվել: «Տերյանն արհասարակ մեզանում ընթերցվում է որպես մելանադուտ, ուրիշ համար նյութ: Հաստ երևույթին հարմար է, և արտաքուստ այդ զգայականությունը թարգմանվում է իր թերեւ սենտիմենտալություն: Ես սիրում եմ, երբ երաժշտությունը կանոն է ամսում լեզվական տարբեր շերտներից» (6): Այսպես է արտահայտվել կոմպոզիտորի իր ստեղծագործության կատարումից հետո տրված հարցազրույցում:

Կոմպոզիտորը շարքը գրել է հինգ տարվա ընթացքում: «Չուզահեռ երգերը» ավարտել է 2012 թ. և նույն տարում հնչել է սկզբում ԱՄՆ-ում, այնուհետև Երևա-

նում՝ «Նարեկացի արվեստի միուրյան» դահլիճում, սոսրան՝ Շուշիկ Պարտումանի (ԱՄՆ) և դաշնակահար՝ Արթուր Ավանեսովի կատարմամբ: Չնայած այն հանգամանքին, որ այս ստեղծագործությունն ի սկզբան նախատեսված է եղել ձայնի, դաշնամուրի և լարային նվազախմբի համար, այնուամենայնիվ այն հնչում է նաև ձայնի և դաշնամուրի համար գրված տարրերակով:

Անդրադառնանք այս շարքից Վ. Տերյանի խոսքերով գրված երկու ոռմանսներին՝ «Աշնան երգ» և «Իմ խաղաղ երեկոն»: Երկուսն էլ վերցված են «Մթնշաղի անորոշներ» բանաստեղծաշարից են: Երկուսն էլ մոտ են ինսունացիոն ոլորտով և երաժշտական մտահղացմամբ: Ի տարրերություն նախորդ դիտարկված ստեղծագործությունների, «Չուզահեռ երգեր» շարքում նկատելի է կոմպոզիտորի որոշակիորեն ձևավորված գրելանքը: Կոմպոզիտորը բազմիցս նշել է, որ հայ երաժշտության էությունն արտահայտչամիջոցների չափազանց խնայողական օգտագործման մեջ է, ինչը պարզորդ նկատվում է այս ստեղծագործության մեջ:

«Աշնան երգը» Տերյանի համանուն բանաստեղծության երեք բարասողերի հիմնան վրա է, որոնք Մանուկյանն արտահայտել են **a+b+a'** կառուցվածով: Երգի դասական կառուցվածքում սակայն, կոմպոզիտորը կիրառել է փոփոխական չափ: Ինչպես նրա նախորդ «Երեկի Նախրի» վոկալ շարքում, այնպես էլ այստեղ, նկատելի է որոշակի լադային հիմք, որը երգի առանձին հատվածներում փոփոխվում է: Երգարաժնի թեման երգեցիկ է, մեղեդային և ևս մեկ անգամ ապացուցում է այն, որ կոմպոզիտորը գեղեցիկ և տպավորվող մեղեդիներ ստեղծելու մեծ վարպետ է: Այստեղ Մանուկյանը մեծ ուշադրություն է դարձնել բանաստեղծական տեքստին: Լիովին պահպանված են մայրենի լեզվի տաղաչափական և արտահանական առանձնահատկությունները, չնայած ընտրված փոփոխական չափին: Ընդհանուր առմամբ երգի երաժշտականացմանը նպաստում է հենց Տերյանի բանաստեղծությունը, որն աչքի է ընկնում երգարաժնի վոկալի այդշափ հարուստ օգտագործմամբ:

Յրտահար, հողմավար,  
Դողացին մեղմաբար,  
Տերևները դեղին,  
Պատեցին իմ ուղին...

Աշնանային այս տրամադրությունը կոմպոզիտորը պատկերել է իր երգում: «Դեղին տերևների մեղմաբար դողապը» հասկապես արտահայտվում է դաշնամուրի նվազաբաժնի ալիքաձև շարժմամբ և լարայինների համապատասխան շարիխմերով: Երաժշտությունն ինչո՞ր տեղ արտահայտում է նաև խորհրդավորություն: Ակրցից ներ ա-ե կվինտային թոփքը և դրա հաճախակի կիրառումը թույլ է տալիս որոշակի համեմատություններ անել հայ երաժշտության հնամենի ավանդությունների հետ: Կվինտային մելոդիկ շարժումը տոնիկական հիմքի և օժանդակ հենակետի կամ հիմքի և դիմող ձայնի փոխհարաբերության տպավորություն է ստեղծում: Յու-

\* Կոմպոզիտորի հետ այս հարցազրույցը տեղադրված է Գրանց ինստիտուտին կարիք Գրական համալիր բանաստեղծությունը հնչել է այս ամսում:

## S երյանի պոեզիան և երաժշտությունը

րահասուկ է նաև թավջութակի մենամվագն ամբողջ ստեղծագործության ընթացքում, որը խորհրդանշում է աշնան թախիծը: Եռամաս կառուցվածքով երգի առաջին և երրորդ մասերը մեղեղային են և աչքի են ընկնում երաժշտական արտահայտչամիջոցների գուսա օգտագործմամբ: Իսկ միջին մասն առավել անկայում է, դիմամիկ:

Երկրորդ՝ «Իմ խաղաղ երեկոն» ռոմանը ծավալով ավելի մեծ է: Ի տարրերություն նախորդ ռոմանի հանդարտությանը, այսուղե մեղեղական զիճն ավելի դիմամիկ է, հարուստ խրոմատիկ քայլերով, թոփքներով, որոնք որոշակի դրամատիզմ են հաղորդում երգին: Հետաքրքիր է նաև այն, որ առաջին մասում կոմպոզիտորն օգտագործել է հայ հոգևոր երաժշտության սկրսվածքներին հասուկ զարդույթում (ուրիշացիա), որը հանդիպում է առաջին մասի ավարտին և ստեղծագործության վերջում: Սա ևս մեկ անգամ փաստում է կոմպոզիտոր S. Մանսուրյանի կապը հայ հոգևոր երաժշտության ավանդույթների հետ: Առանձնակի ուշադրության է արժանի ջուրակի մոտիվը. *c-des-f-ges-b-des*: Այն ամբողջ երգի թևմատիկ կորիզն է, որը շատ տիպական է տեղյանական պոեզիային: Այն արտահայտում է տիրություն, թախիծ, սեր և խոհականություն:

Այսպիսով, Տիգրան Մանսուրյանի համար Վահան Տերյանը նվիրական անոն է, ում բանաստեղծությունները երաժշտության վերածելն ամենին դյուրիմ չէ: Իրքի իր ստեղծագործությունների գրական հիմք նա ընտրել է պոետի «Մթնշաղի անորոշներ», և «Երկիր Նախի» բանաստեղծաշարերից համարներ: Կոմպոզիտորն ընդհանուր առմամբ հավասարիմ է մնացել թօրինակին և պահպանել է մայրենի լեզվի տաղաչափական և ֆոնետիկ առանձնահատկությունները: Ստեղծագործություններում գերակշռում է մոնորեմատիզմը, որը բնորոշ է նաև տեղյանական պոեզիային: Տիգրան Մանսուրյանին ավելի հոգեհարազատ է Վահան Տերյանի պոեզիայի ընկալման ընդունված ավանդական մոտեցումը, այն է. մեղեղային, բնարական կերպարային ոլորտը: Կոմպոզիտորը մեծ ուշադրություն է դարձրել բանաստեղծական տեքստին, ամեն մի նրանքանը, կետադրական նշաններին, բանաստեղծության տեսակին, տաղաչափությանը, շեշտադրությանը և մի շարք այլ արտահայտչամիջոցների: Հետաքրքիր է նաև կոմպոզիտորի կորդմից որոշակի լադային հիմքի կիրառումը, հատկապես մինոր լադերին առաջնայնություն տալը, ինչն ավելի է ընդգծում պոեզիայի բնարական բնույթը: Անգամ «փախուստ իրականությունից» ասվածը, որը ռոմանական գեղագիտական ուղղության հիմքում էր ընկած, նա ընտրել է որպես ոճային հնարք «Երկիր Նախի» ստեղծագործության համար: Կոմպոզիտորը զերծ չի մնացել նաև ժողովրդական և հոգևոր երաժշտության որոշ արտահայտչամիջոցներից, որոնք առավել աչքի են ընկնում «Չուզահեռ երգերում»: Վոկալ երաժշտության մեջ հատկապես նկատելի է նրա ոճական միտումը՝ երաժշտական նվազագոյն արտահայտչամիջոցներով առավելագույն արդյունքի հասնելը, որն ըստ կոմպոզիտորի, բնորոշ է հայ երաժշտությանը: Տերյանի բանաստեղծություններով գրված

ստեղծագործությունների դեսպրում այն առավել քան երբեք արդարացված է, քանի որ նրա պոեզիան կատարյալ է, ինչը միայն պետք էր ընդգծել երաժշտական միջոցներով:

«Հավատացած եմ, որ Տերյան երգելու վարակը մի օր բռնկվելու է ճիշտ այնպես, ինչպես բռնկվեց Խահալյան երգելու անօրինակ պահանջը: Եվ սա գալու է մեր երաժշտական անցյալի ժառանգության առավել խորն ընկալման, նաև միջնադարի հայ հոգևոր երաժշտության բազում շերտերի յուրացման հետ, զալու է արդիական երգեցողական արվեստի համաշխարհային հարուստ փորձի յուրացման հետ: Ու Տերյանի «արքայական լեզուն» ծնելու է արքայական հայ երգ» (4. էջ 46):

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. *Մանսուրյան S. Ե.*, Ո՞վ է ստեղծագործողը, ինչ է ստեղծագործելը, //Արվեստ և ժամանակ, Հայացք Գյումրիից, 3-4, 2009 թ.: *Mansureyan T. E.*, Ov ej steghtsagortsogh', inch ej steghtsagortsel'?, //Arvest ev zhamanak, Hayatzq Gyumriitz, 3-4, 2009 th.
2. *Մովսիսյան Շ. Հ.*, Ստեղծագործողի հաւատամբը. Տիգրան Մանսուրյան, //Հայկակեան հայագիտական հանդէս, Պեյրութ, 2010 թ.: *Movsisean Ts. H.*, Steghtsagortsoghi havatamq'. Tigran Mansurean, //Haykazean hayagjitan handejs, Pejyruth, 2010 th.
3. *Գրիգորյան A. R.*, Արմանական կամերո-վոկալնայա մանաւանք, Еր.: АН Арм.ССР., 1982. *Grigoryan A. R.*, Armyanskaya kamerno-vokal'naya muzyka., Yer.: izd. AN Arm.SSR., 1982.
4. *Դավթեյան R. G.*, Վահան Տերյանի պոեզիան երաժշտության մեջ, Եր., 2007 թ.: *Davtheyan R. G.*, Vahan Tereyan poezian yerazhshtuthyan meej, Yer., 2007 th.
5. *Մանսուրյան S. Ե.*, Վոկալ գործիքային ստեղծագործություններ, (կազմով՝ Ա. Ավանեսով), Եր., Տիգրան Մանսուրյան Սեն, 2006 թ.: *Mansuryan T. Ye.*, Vokal gortsiqayin steghtsagortsuthyunner, (kazmogh: A. Avanesov), Yer., Tigran Mets, 2006 th.
6. *Հավատով խստովանիմք*, //Ազգ, թիվ 30, փետրվար 18, 2006 թ.: *Havatov khostovanimq*, //Azg, tiv 30, phetrvvar 18, 2006 th.

# ՏԵՐԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՎԱԼՈՒՔԻ ԱՌԱՋԱԿԱՆ ԱՌԱՋԱԿԱՆ

**Բանայիրական:** Տիգրան Մանսուրյան, Վահան Տերյան, արդի երաժշտորյուն, վոկալ երաժշտորյուն, Կոմիտաս:

**Ключевые слова:** Тигран Мансурян, Ваан Терьян, современная музыка, вокальная музыка, Комитас.

**Keywords:** Tigran Mansuryan, Vahan Teryan, modern music, vocal music, Komitas.

**Տեղեկություններ հեղինակի մասին.**ՀՈՎՀԱՆՆԻԿ ԱՇՈՏ (ծ. 1993թ. ք. Երևան) Ավարտել է՝ 2014-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆաստիկունի ակադեմիական երգեցողության բաժնում (արդի պ. Ս. Մարտիրոսյանի դասարան), 2016-ին՝ նույն ֆակուլտետի երաժշտագիտական բաժնում (դեկ.՝ արվեստ. թեկն., դոցենտ Ծ. Հ. Սովուխյան): Դասավանդում է՝ 2016-ից Երևանի Սայախ-Նովայի անվ. երաժշտական դպրոցում, տեսական առարկաներ: 2017 թվականից մինչ օրս համախանություն է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ծ. Հ. Սովուխյանի դեկանությամբ: Հրատարակել է՝ գիտական հոդվածներ՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի «Կանքեղ» գիտական հոդվածների ժողովածուում և Երևանի քաղաքացի բարոյնի պետական ինստիտուտի «Հանդես» գիտամեթոդական հոդվածների ժողովածուում: Զեկուցմանը համեստ է եղել ՀՀ ԳԱԱ-ում Երիտասարդ հայ արվեստարանների գիտական XIV նատաշրջանի ընթացքում:

**Сведения об авторе:** ОГАНЕСЯН ШУШАНИК АШОТОВНА (род. в 1993 году в Ереване). Окончила Вокально-теоретический факультет Ереванской государственной консерватории им. Комитаса, отделение “Академическое пение” (рук. проф. С. А. Мартиросян) и “Музыковедение” и магистратуру (рук. кандидат искусствоведения, доцент Ц. Г. Мовсисян, 2016). Составитель ИИ НАН РА (рук. кандидат искусствоведения, доцент Ц. Г. Мовсисян, с 2017). Преподает теоретические предметы в ДМШ им. Саят-Новы. Составитель ИИ НАН РА (рук. кандидат искусствоведения, доцент Ц. Г. Мовсисян, с 2017). Автор научных статей, изданных в сборниках научно-методических статей “Кантег” (ИИ НАН РА), “Андес” (Ереванский государственный институт театра и кино). Выступала с докладом на 14-й научной конференции молодых армянских искусствоведов ИИ НАН РА.

**Information about the author:** HOVHANNISYAN SHUSHANIK ASHOT (b. 1993 in Yerevan). In 2014 she graduated from the Vocal and Theoretical Department of the YSC in Academic Singing (Class of Prof. M. Martirosyan) and in Musicology. In 2016 Sh. Antonyan completed her Master's Degree in Musicology under the supervision of Ts. Movsisyan, Candidate of Arts, Docient). Since 2016 she is teaching music theory at the Yerevan Sayat Nova Music School. Since 2017 Sh. Hovhannisyan is a postgraduate student at the Institute of Arts of the NAS of the RA under the supervision of Ts. Movsisyan. Sh. Hovhannisyan has published her research articles in "Kanteg" Journal of the Institute of Arts as well as in "Handes" Journal of the State Institute of Theatre and Cinema. Sh. Hovhannisyan made a presentation at the XIV Conference of Young Art Historians at the AI NAS of the RA.

## **Резюме**

Музыкoved, певица, соискатель ИИ НАН РА *Шушаник Ашотовна Оганесян*. - “*Поэзия Ваана Терьяна в творчестве Тиграна Мансуряна*”.

Тигран Мансурян является представителем поколения 60-х XX века в армянской современной музыке. Его имя широко известно как в Армении, так и за рубежом. Многие направления и тенденции музыки XX века оставили свой след в становлении его композиторского стиля, и тем не менее Мансурян считается продолжателем комитасовской традиции в армянской музыке. Особое место в произведениях композитора занимают вокальные сочинения на стихи как армянских, так и зарубежных поэтов. В данной статье мы рассматриваем вокальные произведения на стихи Ваана Терьяна “Осень”, “Страна Наира”, “Три Наиринские песни” и два романса из цикла “Параллельные песни”. Тигран Мансурян сумел воспроизвести типичные нюансы поэзии Терьяна. Композитор считает, что поэзия поэта не оценена полностью, и что “царский язык” Терьяна породит королевскую армянскую песню.

## **Summary**

Musicologist, Singer, Postgraduate student at the Institute of Arts of the NAS of the RA *Shushanik Ashot Hovhannisyan*. - “*Vahan Teryan's Poetry in Tigran Mansuryan's Art*”.

T. Mansurian is a bright representative of the 60's generation, well known both in Armenia and abroad. A number of 20<sup>th</sup> century musical directions have left their mark on the evolution of the composer's style, but it is more accepted consider Mansurian a complete follower of Komitas in Armenian music. Vocal compositions was important of the composer's works, for which he often used both Armenian and foreign poet's verses. In this article we refer to compositions, which are based on Vahan Teryan's poems. "Autumn", "The Land of Nairi", "Nairyen Three Songs" and two romances from the series "Parallel Songs". It was very difficult for Tigran Mansuryan to compose on Teryan's verses, finally he succeeded and show the typical nuances of Terian's poetry. The composer think that Teryan's poetry was not rated and that Teryan's "royal language" will give birth a royal Armenian song.

**АРЕГ ВИЛЛИЕВИЧ  
САРКИСЯН**

*Пианист, доцент Ереванской государственной  
консерватории им. Комитаса*  
E-mail: kochar00@list.ru

## ДВЕ ФОРТЕПИАННЫЕ “ПЕСНИ БЕЗ СЛОВ” КОМИТАСА

**B** VI томе собрания сочинений Комитаса, содержащем все фортепианные произведения великого армянского композитора, находятся также работы учебных лет (1. С. 38). Это две фортепианные миниатюры – *Larghetto* и *Allegretto*, которым составитель и редактор сборника Р. А. Атаян дал название “Песни без слов” а также “Траурный марш”. Очевидно, что из сохранившихся в рукописях учебных работ, видным комитасоведом Атаяном были выбраны наиболее интересные по своим музыкальным достоинствам образцы. Не отклоняясь от темы, считаем нужным сообщить предполагаемым исследователям комитасовских композиций учебного периода, что многие из них опубликованы в недавно вышедшем в свет сборнике Тирана Локмагезяна “*Komitias. Deutsche werke*”, изданном в Ереване в 2018 году. Мы, ознакомившись со всем наличным материалом, убедились в том, что Атаяном выбраны наиболее интересные экземпляры, интересные как для теоретического исследования, так и для исполнения.

Мы же, тщательно ознакомившись со всеми учебными пьесами, отдавая должное музыкальным достоинствам “Траурного марша”, остановили свой выбор на “Песнях без слов”. Мы выбрали эти пьесы для методико-исполнительского анализа потому, что они представляются наиболее подходящими для учебного репертуара музыкальных школ. Интересные сведения о приведенных пьесах учебного периода мы получаем из заключительных атаяновских комментариев VI тома Полного собрания.

В процессе аналитического рассмотрения будем ссыльаться на ценные замечания Роберта Аршаковича. Из комментариев мы узнаем, что *Larghetto* датировано 25 ноября 1898 года. В том же году были созданы сольная песня “Цицернак” (“Ласточка”) с фортепианным сопровождением, а 12 января 1899 года – романс “Ночная песнь” на слова М. Лермонтова (по Гете) и сольная песня “Ах, марал джан”. Это был период обучения в Германии у профессора Р. Шмидта по предмету “Свободное творчество”, целью которого было свободное творчество в рамках выполнения академических задач.

К наиболее общим соображениям Атаяна об этих

пьесах (“Песнях без слов” и “Похоронном марше”) относится его высказывание о том, что “пьесы имеют художественный вес и национальный колорит. Правда, в них не ставилась специальная задача – сочинять в армянском стиле, как и разрабатывать подобный стиль, однако они в целом, не являются изобретательно сочиненными в традиционном европейском стиле”.

Обратимся к непосредственному рассмотрению “Песен без слов”.

Первая песня представляет собой комбинированную из двух миниатюрных пьес композицию. Первая – *Larghetto* – пьеса распевного характера. Имеет изложение квартетного типа. По форме скорее всего напоминает продленный эпизод. Такое впечатление создается в силу того, что в пятом такте примененная острия модуляция не позволяет кадансированно “вычленить” первое предложение. В результате создается монолитная, “на одном дыхании” пропеваемая песня. Реприза способствует большей композиционной целостности этой миниатюры.

Первая часть первой “Песни без слов” овеяна светлой грустью. Ее ностальгический характер, выраженный в начале, как бы преображается в силу модуляции в далекую тональность. Изменению первоначального характера также способствует появляющаяся по ходу развития фактурно-метрическая активизация.

### Пример № 1

## Կոմիտասի վարդապետի ծննդյան 150-ամյակին

Все же основной характер этой лирической миниатюры – ностальгическое состояние. Не случайно первый раздел *Larghetto* по ритму ассоциируется с любимой Комитасом городской песней “По берегам матери-Аракс”. Исполнитель должен выразить его адекватно, прежде всего, посредством фортепианного “пения”.

Обращаясь ко второй миниатюре – *Allegretto sostenuto*, которая совместно с первой образует целостную композиционную схему первой “Песни без слов”, хотим уточнить характер их связи. Упомянутые миниатюры создают трехчастную композиционную структуру, поскольку, после проведения второй миниатюры по принципу *D.C. al Fine*, повторяется первая. Этой пьесе, как и остальным, свойственны своеобразные тональные последования. Своим характером и размером она ассоциируется с пасторалью. Решился назвать эту пьесу армянской сицилианой. Но такое сравнение, конечно, весьма условно. Мелодии этой пьесы присущи интонационная и ритмическая, слегка танцевальная гибкость. Пунктирный ритм в партиях обеих рук намекает на скрытую танцевальность. В дальнейшем развитии появляется мелизматическая орнаментика, выявляющая характер народного инструментального исполнительства.

### Пример № 2

The musical score consists of two staves of piano music. The top staff is in common time (indicated by '8') and the bottom staff is in 6/8 time. The key signature is A major (one sharp). The tempo is Allegretto sostenuto. The music features various dynamics such as 'p' (piano), 'f' (forte), and 'ff' (double forte). There are also performance instructions like 'tr.' (trill) and 'rit.' (ritardando). The notation includes eighth and sixteenth note patterns, with some notes having stems pointing in different directions.

Пианист должен в своем исполнении выявить описанные характерные особенности этой пьесы: при возврате (*D.C. al Fine*) к первой пьесе, сыграть ее в несколько иных оттенках – *ad libitum*.

Вторая пьеса – *Allegretto*. Из комментариев мы узнаем, что она всецело является обработкой светского тага (2.С.106–109). В этой пьесе необычные гармонические смещения вызваны самобытной структурой народной мелодии. Характером мелодии тага продиктованы также общая фактура и ритмика произведения (отчасти, пунктирная).

### Пример № 3

The musical score consists of two staves of piano music. The top staff is in common time (indicated by '8') and the bottom staff is in 6/8 time. The key signature is A major (one sharp). The tempo is Allegretto. The music features various dynamics such as 'p' (piano), 'f' (forte), and 'ff' (double forte). There are also performance instructions like 'tr.' (trill) and 'rit.' (ritardando). The notation includes eighth and sixteenth note patterns, with some notes having stems pointing in different directions.

Примечательной в пьесе является проводимая во второй октаве мелодия, как бы в свирельном звучании, с парящими над ней терцово–триольными фигурами партии левой руки.

Исполнитель может воспользоваться этим эффектным выразительным средством, воссоздавая прозрачное мечтательное звучание. Для этого он должен найти более удобное фактурное распределение (между двух рук).

### Пример № 4

The musical score consists of two staves of piano music. The top staff is in common time (indicated by '8') and the bottom staff is in 6/8 time. The key signature is A major (one sharp). The music features various dynamics such as 'p' (piano), 'f' (forte), and 'ff' (double forte). There are also performance instructions like 'tr.' (trill) and 'rit.' (ritardando). The notation includes eighth and sixteenth note patterns, with some notes having stems pointing in different directions.

Особое внимание пианист должен обратить на первые два такта VI строки, которые, как нам кажется, выражают сожаление.

### Пример № 5

The musical score consists of two staves of piano music. The top staff is in common time (indicated by '8') and the bottom staff is in 6/8 time. The key signature is A major (one sharp). The music features various dynamics such as 'p' (piano), 'f' (forte), and 'ff' (double forte). There are also performance instructions like 'tempo rubato' (rubato tempo), 'ritard.' (ritardando), and '[a tempo]' (back to tempo). The notation includes eighth and sixteenth note patterns, with some notes having stems pointing in different directions.

Этой же фразой заканчивается вторая “Песня без слов”.

Заканчивая нашу статью, хотим выразить пожелание пианистам – учащимся школ и училищ смело включать в свой репертуар эти обаятельные произведения (3.). Нам дорого то, что в них чувствуется цветение композиторской индивидуальности и творческого стиля нашего великого Комитаса, ведь даже на таком уровне зрелости эти работы студенческих лет берут за душу.

## ПРИМЕЧАНИЯ

1. /Կոմիտասական, հ. 2, Եր., Հայկ.ՍՍՀ ԳԱ հրատարակություն, 1981 թ.: /Komitasakan, h. 2, Yer.: Hayk.SSH GA hra-

# Կ ո մ ի տ ա ս վ ա ր դ ա պ ե տ ի ծ ն ն յ ա ն 1 5 0 - ա մ յ ա կ ի ն

- tarakchuthyun, 1982 th.
2. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Եր., Պետական հրատարակություն, 1941 թ.: *Komitas, Hodvatsner ev usumnasiruthyunner*, Եր.: Petakan hratarakchuthyun, 1941 th.

3. Золотова И. Л., История фортепианного искусства., Ер.: Комитас, 2018. Zolotova I. L., Istoriya fortepiannogo iskusstva., Yer.: Komitas, 2018.

**Բանայի-քառեր.** Ո. Արայան, Կոմիտաս, «Երգ առանց խոսքի», դաշնամուրային մանրանվազներ, Ո. Ծայրություն:

**Ключевые слова:** R. Atayan, Komitas, "Песни без слов", фортепианская миниатюра, R. Schmidt.

**Keywords:** R. Atayan, Komitas, "Songs Without Words", piano miniature, R. Schmidt.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՍԱՐԳՎԵՍԱՆ ԱՐԵԳ ՎԻԼԼԻ (ծ. 30.11.1976 թ. ք. Երևան): Ավարտել է՝ 1994-ին Պ. Չայկովսկու ամվաճական դաշնամուրային բաժինը (պրֆ. Վ. Վ. Սարգսյան), 1999-ին ԵՊԿ պրֆ. Վ. Վ. Սարգսյան պասարանը և ասպիրանտուրա (2001 թ.): 2004-ից ԵՊԿ դասախում, 1999-ից՝ դրաման: Նոյմբերի 1999 թվականին վարչականության դասեր է անցկացնել Բեյրութի Բարեկա Կամաչեամի անվ. և Լ. Շամբ երաժշտական բողեջներում (Լիբանան): Բազմաթիվ համբաւետական, միջազգային մրցույթների և փառատոնների մասնակից է՝ Դաշնակահարների Ս. Էլմասի անվ. ազգային մրցույթի 1996 թ. (Բեյրութի ամառապարագ) 1-ին մրցանակակիր, Եկատերինբուրգում գործում դաշնակահարների միջազգային մրցույթում «Ռուսական համերգաշար»-ի մրցանակակիր (2008 թ.), Նյու Յորքում (ԱՄՆ) "American Protege International Russian Festival" փառատոնին (2009 թ.), Խթիլիսում՝ գերմանական «The Long Piano Night» փառատոնին, որի շրջանակներում ուժի լիցենզավորված ձայնակավառակ: 1992-ից դրաման մենակատար ծավառում է համերգային գործունեություն՝ Հայաստանում, Ռուսաստանում, Լիբանանում, Վրաստանում, Խոսհիայում և ԱՍՆ-ում: Տարբեր նվազամիջերի հետ կատարել է՝ Վ. Ա. Մողարտի, Ֆ. Լիստի, Ս. Պրոկոփիկի, Ս. Ռախմանինի (3-րդ Կոմեգերություն) դաշնամուրի և նվազամիջի կոնցերտները: Ունի ձայնագրույթներ՝ ՀՀ ազգային ռադիոյի ֆոնդում և CD-ներ: Հեղինակ է՝ մի քանի ուսումնամերուդական հոդվածների, նաև կազմել է Սերգեյ Մարկոսյանի «Դաշնամուրային չորս պիես» նոտային ժողովածու:

**Сведения об авторе:** САРКИСЯН АРЕГ ВИЛЛИЕВИЧ (род. в 1976 году, Ереван). В 1999 году окончил фортепианное отделение Ереванской государственной консерватории им. Комитаса, в 2001 - аспирантуру ЕГК (класс проф. В. В. Саркисяна). С 2004 года - преподаватель Ереванской государственной консерватории имени Комитаса. С 2011 года - доцент ЕГК. В том же году дал мастер-класс в Бейруте (Ливан). Арег Саркисян является лауреатом многих республиканских и международных конкурсов и участником фестивалей: конкурс пианистов им. С. Эльмаса, 1996 (Бельгийский фонд), 1-ая премия; Международный конкурс пианистов в Екатеринбурге - "Русский Сезон" - лауреат (2008); в 2009 году участвовал в Нью-Йорке (США) в фестивале "American Protege International Russian Festival"; в Тбилиси на немецком фестивале "The Long Piano Night" (лицензионный диск, 2009). С 1992 года регулярно выступает как с сольными программами, так и с разными оркестрами Армении и с оркестром Армфилармонии. Имеет CD и записи на Национальном радио. Имел сольные концерты в Армении, России, Ливане, Грузии, Италии и США. Является автором ряда научно-методических публикаций, составитель сборника Сергея Маркосяна "Четыре цикла фортепианных пьес". Имеет студентов - лауреатов международных конкурсов.

**Information about the author:** SARGSYAN AREG VILLI (born 1976, Yerevan). In 1994 he graduated from the piano department of Tchaikovsky ten-year-old music school (class of V. V. Sargsyan). In 1999 he graduated from the YSC, in 2001 got a postgraduate degree in YSC (class prof. V. V. Sargsyan). Since 2004 he is a pedagogue in YSC. Since 2011 Docent of YSC. In the same year he gave a master class in Beirut, Lebanon. Areg Sargsyan is a winner of many national and international competitions and a participant in festivals such as competition of pianists after S. Elmas, 1996 (Belgian Foundation), 1st Prize, International Piano Competition in Yekaterinburg - "Russian Season" - winner (2008); In 2009 he participated in the American Protege International Russian Festival in New York (USA), in Tbilisi at the German festival "The Long Piano Night" (license CD, 2009). Since 1992 he has regularly performed both with solo programs and with different orchestras of Armenia and with the Armenian Philharmonic Orchestra. He has CD and recordings at National Radio. He had solo concerts in Armenia, Russia, Lebanon, Georgia, Italy and the United States. He is the author of a number of scientific and methodological publications, the compiler of Sergey Markosyan's collection "Four Cycles of Piano Plays".

## Ամփոփում

## Summary

Դաշնակահար, ԵՊԿ դրաման Արեգ Վիլլի Սարգսյան. - «Կոմիտասի դաշնամուրային երկու «Երգ առանց խոսքի»»:

